ՄԱՐՄԻՆ
ԿԱՐԻՊՈՆՏՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԸ

1918-1920

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
МУЗЕЙ-ИНСТИТУТ ГЕНОЦИДА
И ИСТОРИИ ЗАРУБЕЖНЫХ АРМЯН

**М. Л. КАРАПЕТЯН**

# АРМИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
# (1918—1920)

ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА
ЕРЕВАН 1996

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԳՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԹԱՆԳԱՐԱՆ—ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄՈՒՐԱԴ ԼԵՎՈՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԸ
## (1918—1920)

Ա 8361/ II

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1996

ԳՄԴ 68.4(2Հ)
Կ—294

Տպագրվում է Հայաստանի ԳԱԱ ցեղասպանության և ազգագրության պատմության բանգարան—ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
պատմ. գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Հ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝
պատմ. գիտ. դոկտորներ Կ. Ա. ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ և Է. Ա. ԶՈՀՐԱԲՅԱՆԸ

Կարապետյան Մ. Լ.
Կ—294 *Հայաստանի Հանրապետության բանակը (1918—1920).—Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1996.—139...էջ, 6 թ. նկ.:*

*Աշխատության մեջ նոր արխիվային վավերագրերի վերլուծման հիման վրա հեղինակը բազմակողմանիորեն ներկայացրել է Հայաստանի առաջին հանրապետության (1918—1920 թթ.) բանակի կազմավորման և գործունեության պատմությունը, ինչպես նաև զինված ուժերի կատարած դերը հանրապետության պետական-քաղաքական կյանքում:*

*Գիրքը հասցեագրվում է մասնագետներին և ընթերցող լայն շրջանակներին:*

ԳՄԴ 68.4(2Հ)

ISBN 5—8080

© Հայաստանի ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1996:

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1918 թ. մայիսին, շուրջ 600 տարվա ընդմիջումից հետո, միջազգային և ներքին բարդ իրադրության պայմաններում վերականգնվեց հայկական պետականությունը և հռչակվեց Հայաստանի Հանրապետությունը։ 1915 թ. Մեծ եղեռնից մազապուրծ հայ ժողովուրդը, որը կենաց ու մահու պայքար էր մղում իր գոյությունը մի պատառ հողի վրա պահպանելու համար, բնականաբար, առաջին հերթին իր ողջ ուժերը պետք է նպատակամղեր կանոնավոր բանակ ստեղծելու գործին, լավ գիտակցելով, որ իր նվաճումները պաշտպանելու և հայոց պետականությունը ամրապնդելու այլ ուղի չկա։

Այս ոգով էին տոգորված թե՛ Հայաստանի առաջին հանրապետության պետական դեկի մոտ կանգնած քաղաքական ու ռազմական գործիչները, թե՛ 1918 թ. մայիսյան հերոսամարտերում մաքառած հայ սպաներն ու զինվորները և թե՛ Երևանում, Արարատյան դաշտավայրում, Շիրակում ու Լոռում կուտակված արևմտահայ զաղթականությունն ու տեղացի բնակչությունը։ Նորաստեղծ հանրապետության կառավարությունը բանակի կազմավորմանը և ամրապնդմանը ձեռնամուխ եղավ իր գործունեության առաջին իսկ օրերից։ Ուստի հայոց պետականության վերականգնման և ընդհանրապես Հայաստանի առաջին հանրապետության պատմության ուսումնասիրության ամբողջ շղթայում առաջնահերթ է և՛ հայկական զինված ուժերի ստեղծման պատմության ուսումնասիրությունը, և՛ գիտական լուսաբանումը, առանց որի մեր ժողովրդի նորագույն պատմության այս կարևորագույն փուլի բացահայտումը կմնա թերի։

Հայաստանի առաջին հանրապետության բանակի կազմավորման գործընթացը, քաղաքական նկատառումներից ելնելով, խորհրդային իշխանության տարիներին գիտականորեն ընդհանրապես չի ուսումնասիրվել, անտեսվել է, կամ ներկայացվել է խեղաթյուրված։ Ներկայումս, երբ մեր ժողովուրդը կառուցում է իր անկախ պետական-

թյունը, հայ պատմաբանների առջև ծառացած կարևորագույն խնդիրներից է, ձեռքբերելով թույլ տրված խեղաթյուրումներից, վեր հանել նաև հայկական բանակի ստեղծման ճշմարտացի պատմությունը:

Սույն աշխատությունում նպատակ է դրվել բազմակողմանիորեն ուսումնասիրել և առարկայորեն ներկայացնել Հայաստանի առաջին հանրապետության բանակի կազմավորման և գործունեության պատմությունը, ցույց տալ զինված ուժերի կատարած դերը հանրապետության պետական-քաղաքական կյանքում:

Հեղինակի խնդիրն է եղել.

1. Բացահայտել Հայաստանի առաջին հանրապետության զինված ուժերի կազմակերպման գործընթացը:
2. Մանրամասնորեն ներկայացնել բանակի կառուցվածքը և թվակազմը:
3. Տալ հայկական բանակի սպառազինությունը և նրա համալրման աղբյուրները:
4. Օգտագործելով արխիվային նյութերը՝ ամբողջովին ի հայտ բերել բանակի սպայական կազմի:
5. Բացահայտել հայկական բանակի գործունեությունը ինչպես ներքին իրադրության կայունացման, այնպես էլ Հայաստանի առաջին հանրապետության պաշտպանության գործում:

Ուսումնասիրությունը մեծամասամբ հիմնված է արխիվային փաստաթղթերի վրա: Աղբյուրագիտական հիմքը այն փաստաթղթերն են, որոնք հեղինակը հավաքել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական պետական պատմության արխիվից:

1918—1920 թթ. Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ստեղծման նախապատմության, կառուցվածքի, թվակազմի, սպառազինության, համալրման կարգի և աղբյուրների, սպայական (հրամանատարական) կազմի, ինչպես նաև բանակի մարտական գործողությունների վերաբերյալ արժեքավոր տեղեկությունները քաղված են Հայաստանի Հանրապետության կենտրոնական պետական պատմության արխիվի 121-րդ (առաջին համաշխարհային պատերազմում գործող հայկական կամավորական խմբերի և զինվորական ջոկատների մասին փաստաթղթերի հավաքածու), 198-րդ (Հայաստանի Հանրապետության խորհրդարան), 199-րդ (Հայաստանի Հանրապետության նախարարների խորհուրդ), 222-րդ (Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդ), 200-րդ (Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի

նախարարություն), 290-րդ (Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարություն), 204-րդ (Գլխավոր սանիտարական վարչություն), 57-րդ (Ամենայն Հայոց կաթողիկոսի դիվան), 196-րդ (Մայիլյան Եղբայրների զիտական էքսպեդիցիան Հայաստանում), 276-րդ (Հայկական դիվանագիտական միսիան Վրաստանում 1919—1920 թթ.), 45-րդ (գեներալ Թովմաս Նազարբեկյանի անձնական արխիվ), ինչպես նաև ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվի՝ «Լեոյի» և Ռ. Հովհաննիսյանի նվիրած գրքերի ֆոնդերից:

Բացի արխիվային նյութերից, աշխատանքի համար կարևոր աղբյուրագիտական հիմք են հանդիսացել նաև մի քանի վավերագրական ժողովածուներ[1] և ժամանակի պարբերական մամուլը[2]:

Օգտագործվել են տարբեր ժամանակներում հրատարակված օրենքներ[3], մենագրություններ[4] և Հայաստանի առաջին հանրապետության

---

[1] *Саркисян Е. К.*, Из истории иностранной интервенции в Армении в 1918 г., Документы и материалы, Ереван, 1970, Великая октябрьская социалистическая революция и победа советской власти в Армении.. Сборник документов, Ереван, 1957. Документы внешней политики СССР, Москва, 1957, т. 2, *Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828—1923), Երևան, 1972. Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 1960.* Գ. Լազյան, *Հայաստանը և հայ դատը բաց դաշնագրերու*, Գահիրե, 1942. Գեներալ Թ. Նազարբեկովի հուշերը, «Բանբեր Հայաստանի արխիվների», հ. 3, 1992. Նախիջևան-Շարուրը 1918—1921 թթ., Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, «Բանբեր Հայաստանի արխիվների», № 2, Երևան, 1994 և այլն:

[2] «Բազմիկ» Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարության շաբաթաթերթ, Երևան, 1920 թ.: «Կառավարության լրաբեր», Երևան, 1918—1920 թթ., «Վերածնունդ» ամսագիր, Փարիզ, 1919, «Հայ զինվոր», Երևան, 1993—1994 թթ., «Свободное слово», Париж, 1991, № 16 և այլն:

[3] *Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, մաս 1—3, Երևան, 1918—1920 թթ.:*

[4] Յափուճյան Ավետիս, *Հայաստանի Հանրապետության քաղաքական, զինվորական, տնտեսական, ընկերային կացությունը*, Գահիրե, 1972, Ա. Հարությունյան, *Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները, Երևան, 1984,* Ս. Աֆանասյան, *Սարդարապատի հաղթանակը, Հայաստան, մայիս, 1918 թ. Երևան, 1991.* *С. Кузнецова*, Крах турецкой интервенции в Закавказье 1920—1921 гг., «Вопросы истории», № 9, Москва, 1951, *Г. Аветисян*, Брест-Литовск: Как были отторгнуты Турцией Карс, Ардаган и Батум, Ереван, 1994. Է. Զոհրաբյան, *Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները, Երևան, 1979,* Է. Զոհրաբյան, *1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տեղությունները, «Երեկոյան Երևան», Երևան, №№ 242—248, 1990—1991 թթ.,* Ս. Խ. Կարապետյան, *1920 թվականի հայ-թուրքական պատերազմը և Սովե-*

պետական ու զինվորական գործիչների աշխատություններ, հուշագրություններ[5], ինչպես նաև ընդհանուր բնույթի աշխատություններ[6]:

1918—1920 թթ. իրադարձություններին նվիրված բազմաթիվ գրքեր են հրատարակվել ինչպես արտասահմանում, այնպես էլ Հայաստանում: Իրենց բնույթով դրանք կարելի է բաժանել չորս խմբի՝ սփյուռքահայ, խորհրդահայ, թուրք և արևմտյան ուսումնասիրողների աշխատություններ: Անաչառ լինելու համար պետք է նշել, որ վերոհիշյալ ուսումնասիրողներից գրեթե ոչ մեկը այս կամ այն պատճառով ճշմարտացի և գիտական մոտեցում չի ցուցաբերել այդ բուռն ժամանակաշրջանի իրադարձությունները լուսաբանելիս: Խորհրդահայ պատմաբանները Հայաստանի առաջին հանրապետությունը և նրա կառավարության ողջ գործունեությունը, այդ թվում նաև երկրի ազգամական շինարարության ոլորտի հարցերը, ներկայացրել են ծուռ հայելու մեջ: Գրեթե նույն մոտեցումն ունեն թուրք պատմաբանները, որոնք

---

տական Ռուսաստանը, Երևան, 1965, Վ. Գեորգյան, Լեռնահայաստանի հերոսամարտը, 1919—1921 թթ., Երևան, 1991, Հ. Գեորգյան, Դրո, Երևան, 1991, Մ. Կարապետյան, Հայաստանի առաջին հանրապետության զինված ուժերի պատմությունից, «Բանբեր Երևանի համալսարանի», 1993, № 2. Մ. Կարապետյան, Հայկական ազգային բանակային կորպուսի ստեղծման պատմությունից, «Բանբեր Երևանի համալսարանի», 1994, № 4. Մ. Կարապետյան, Հայաստանի Հանրապետության բանակի կազմավորումը (1918—1920 թթ.), «Հայկական բանակ», № 5—6, Երևան, 1995:

5 Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Թեհրան, 1982. Ս. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1963. Կ. Սասունի, Հայ-Թուրքական պատերազմ, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1926 թ. Գ. Տեր-Միքայելյան, Հայ հեղափոխականի մը հիշատակները, Երևան, 1990, հ. 7. Հ. Տեր-Հակոբյան, Հայաստանի վերջին աղետը, Կ. Պոլիս, 1921, Ա. Բաբալյան, Էջեր Հայաստանի անկախության պատմությունից, Գահիրե, 1951. Հ. Իրազեկ, Մոտիկ անցյալից, Բեյրութ, 1956. Գ. Սյուրմելյան, Տաճկահայ զինվորը և զինվորականությունը նախ տաճկական, ապա հայկական բանակներուն մեջ, Բեյրութ, 1967, Հ. Սահակյան, Երկու տարի հայկական բանակին մեջ, Փարիզ, 1937. Տ. Բաղդասարյան, Հայ հանրապետության վերջալույսին, Փարիզ, 1937. Օ. Բոլղվին, Վեց բանտ և երկու հեղափոխություն, Ալեքսանդրիա, 1933, Ավ. Նժդեհ, Բեյրութ, 1963. Ս. Վրացյան, Կյանքի ուղիներով, Գահիրե, հ. 1, 1955. Зарсеванд. Турция и пантуранизм. Париж, 1930. Ա. Արեղյան, Գաշնագրեր, «Հայրենիք», ամսագիր, 1923, № 7. Հ. Մելիքյան, Արյան հանապարհով, «Հայրենիք» ամսագիր, 1925, № 4—7:

6 Հայ ժողովրդի պատմություն, Երևան, հ. 7, 1976, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, № 3, 1976, Армянский вопрос. Энциклопедия, Ереван, 1991, Военный энциклопедический словарь, Москва, 1984, Великая октябрьская социалистическая революция, Энциклопедия, Москва, 1987.

բնդհանրապես հայկական կանոնավոր զինված ուժերի գոյությունը համարում են միայն դաշնակից տերությունների օգնության և շահագրգռվածության արդյունք։ Արևմտյան պատմաբանները հարցին մոտենում են շատ մակերեսորեն, նրանց աշխատություններում մեծ մասամբ շրջանցված են Անդրկովկասյան հանրապետությունների ռազմա-դիվանագիտական քաղաքականության վերլուծությանը վերաբերող հարցերը։ Սփյուռքահայ պատմաբանները հարցի ուսումնասիրմանը ցուցաբերում են զուտ կուսակցական մոտեցում։ Նրանք, ովքեր նախկինում եղել էին առաջին հանրապետության պետական-քաղաքական գործիչներ, անտեսում կամ մակերեսորեն են ներկայացնում երկրի ռազմական շինարարության գործում եղած թերությունները, բանակի թույլ կողմերը, հրամանատարական կազմի գործած սխալները։ Այնուամենայնիվ, ներկայացնենք, տարբեր տարիներին տիրապետում հրատարակված աշխատությունները մնում են ամենահարուստ փաստական նյութը պարունակող գործերը։ Այս տեսակետից ուշագրավ են հատկապես Սիմոն Վրացյանի, Ալեքսանդր Խատիսյանի, Ռուբեն Տեր-Մինասյանի հրատարակած աշխատությունները, ակադեմիկոս պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանի «Հայաստանի Հանրապետությունը» (անգլերեն) երկհատոր ուսումնասիրությունը և Վազգեն Գևորգյանի «Վեռնահայաստանի հերոսամարտը 1919—1921 թթ.» մենագրությունը։

Սիմոն Վրացյանի «Հայաստանի Հանրապետություն» գրքում կան փաստական հարուստ տվյալներ հայկական բանակի մասին։ Հատկապես արժանահիշատակ են Հայաստանի Հանրապետության բանակի թվակազմի, տեղաբաշխվածության, Սևանի լճային ռազմական նավատորմիկի, ինչպես նաև տարբեր ժամանակահատվածներում հայկական բանակի կառուցվածքի վերաբերյալ բերած տվյալները և զորամասերի մասնակցությունը տեղի ունեցած ռազմական գործողություններին։

Ալեքսանդր Խատիսյանի «Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը» գրքում հիմնականում ներկայացված են Հանրապետության բանակի զինվորական գլխավոր հրամանատարության և զինվորական նախարարության առջև երկրի ռազմական ոլորտում եղած խնդիրները, միաժամանակ աշխատության մեջ կան կարևոր տեղեկություններ բանակի վիճակի, թվակազմի, ինչպես նաև համալրման վերաբերյալ։ Այնուհանդերձ, նշված աշխատություններում հայկական զինված ուժերի ստեղծման և երկրի ռազմական շինարարության հար-

ցերը ներկայացված են մակերեսորեն, ինչը հնարավորություն չի ընձեռում առարկայական և ամբողջական պատկերացում կազմել պետական շինարարության այդ բնագավառի մասին:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի նախապատմության, հայկական բանակի կազմավորման գործընթացի, 1918 թ. հայ-վրացական պատերազմի, 1919—1920 թթ. (մինչև հայ-թուրքական պատերազմը) Կարսում, Իգդիրում, Շարուրում, Նախիջևանում, ինչպես նաև Զանգեզուրում ու Արցախում ներքին և արտաքին թշնամիների դեմ հայկական բանակի մղած մարտերի մասին արժեքավոր տեղեկություններ են պարունակում Հայաստանի առաջին հանրապետության զինվորական առաջին նախարար գեներալ Հովհաննես Հախվերդյանի «Ռազմական ուրվագծեր 1918—1921 թթ. Հայաստանի մասին» խորագրով անտիպ հուշերը, որոնք պահպանվում են Հայաստանի Հանրապետության պատմության արխիվում (ֆ. 45):

Հիշատակման արժանի է Ա. Հ. Հարությունյանի «Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները» գիրքը (Երևան, 1984 թ.): Այն 1971 թ. ռուսերեն լույս տեսած «Կովկասյան ռազմաճակատը 1914—1917 թթ.» ուսումնասիրության շարունակությունն է: Երկու աշխատություններն էլ ռազմական պատմությանը վերաբերող արժեքավոր գործեր են: Հատկապես մեծ է «Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները» գրքի նշանակությունը հայկական բանակի նախապատմությանը ծանոթանալու տեսանկյունից: Գրքում հանգամանորեն վերլուծվում են ռուսական բանակի նահանջի պատճառները, նրա կազմալուծումն ու ճակատի մերկացումը, ռազմական ուժերի փոխհարաբերությունն ու տեղաբաշխումը 1918 թ., որոնք պարզում են ժամանակի ռազմաքաղաքական իրադրությունը և այն մթնոլորտը, որի պայմաններում էլ սկսվեց հայկական բանակի կազմավորման գործընթացը: Առանձնապես կարևոր են գրքի երրորդ և չորրորդ գլուխները, որոնք նվիրված են բանակի ազգայնացման, հայկական կորպուսի և ռազմական կազմակերպությունների ծրագրերի և գործունեության խնդիրների լուսաբանմանը: Չնայած այս ամենին, մենք գտնում ենք, որ հատկապես բանակի ազգայնացմանը և 1918 թ. թուրքական արշավանքների ժամանակ հայկական կազրային զորամասերի դեմ նվիրված խնդիրները դեռևս կարիք են զգում լրացուցիչ ուսումնասիրությունների և պարզաբանումների:

1920 թ. իրադարձություններին և թուրք-հայկական պատերազմին են նվիրված Ս. Խ. Կարապետյանի «1920 թ. հայ-թուրքական պատերազմը և Սովետական Ռուսաստանը» գրքույկը (Երևան, 1965), Է. Ա. Զոհրաբյանի «Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները 1920—1922 թթ.» գիրքը (Երևան, 1979 թ.) և «1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները» աշխատությունը, որը հատվածաբար լույս է տեսել «Երեկոյան Երևան» թերթում 1990—1991 թթ.:

Ս. Կարապետյանի աշխատության մեջ կան մի շարք արժանահիշատակ փաստեր, սակայն հեղինակը ավելի շատ փորձում է արդարացնել խորհրդային Ռուսաստանի դիրքորոշումը, քան անդրադառնալ պատերազմին:

Է. Զոհրաբյանը, օգտագործելով նորահայտ կամ նվազ հայտնի բաղում փաստաթղթեր, թարմ մեկնակետից լուսաբանել է հայոց պատմության այդ ժամանակաշրջանի առայսօր խեղաթյուրված շատ էջեր: Ինդրա առարկա թեմայի համար արժեքավոր է հատկապես թուրք-հայկական պատերազմին նվիրված աշխատությունը, որտեղ թուրք-հայկական պատերազմի, նրա նկատմամբ մեծ տերությունների բռնած դիրքի և մի շարք այլ հարակից հարցերի հետ միասին մանրամասն շարադրված է ռազմական գործողությունների ընթացքը՝ պատերազմի սկզբից մինչև ավարտը: Հանգամանորեն ներկայացված է ռազմական ուժերի փոխհարաբերությունը ինչպես պատերազմի սկզբում, այնպես էլ հետագայում: Աշխատության մեջ բերված հարուստ նյութերը հայկական բանակի ստորաբաժանումների, նրանց դասավորվածության, զինվորների և սպաների թվի մասին խիստ արժեքավոր են, որոնք հնարավորություն են տվել առավել հստակ ներկայացնել հայկական բանակի վիճակը 1920 թ. աշնանը՝ խորհրդային կարգերի հաստատման նախօրեին: Աշխատության մեջ շարադրված փաստական հարուստ նյութը տալիս է նաև պատերազմում հայկական բանակի պարտության պատճառների հարցի պատասխանը: Ներկայումս հայ պատմագրության մեջ այն թերևս միակ ամփոփ աշխատությունն է, որի միջոցով կարելի է մանրամասնորեն ծանոթանալ պատերազմի ընթացքում ծավալված ռազմական գրեթե բոլոր գործողություններին:

Արժեքավոր գիտական աշխատություն է Կ. Ա. Հարությունյանի «Հայկական ազգային զորամիավորումները 1918—1945 թթ.» դոկտորական ատենախոսությունը, որի առանձին բաժինները տպագրվել են

«Հայ զինվոր» թերթում՝ 1995 թ.։ Ընթերցողին ներկայացվող սույն աշխատությունը Հայաստանի առաջին հանրապետության բանակի ամբողջական պատմությանը նվիրված առաջին գործն է, որը կարող է լրացնել պատմագրության մեջ եղած բացը։

Սույն ուսումնասիրությունը ունի ոչ միայն գիտական, այլև գործնական կարևոր նշանակություն։ Հայկական բանակի կազմավորման և գործունեության համակողմանի ու գիտական վերհանումը, նրա թույլ և ուժեղ կողմերի բացահայտումը մեզ հնարավորություն կտա խուսափել նաև այսօրվա ռազմական շինարարության գործում հնարավոր սխալներից ու վրիպումներից։ Աշխատության մեջ բերված նյութերը կարող են օգտագործվել հանրապետության բուհերի մասնագիտական ամբիոնների կողմից՝ հատուկ դասընթացների կազմակերպման և անցկացման ժամանակ, ինչպես նաև զինվորական ուսումնարանների դասընթացներում և ընդհանրապես երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության գործում։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ: ԲԱՆԱԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԹՎԱԿԱԶՄԸ

## ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ՄԻՆՉԵՎ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

*1918 թ. մայիսի 28-ին, 600 տարվա ընդմիջումից հետո, չափազանց դժվարին արտաքին ու ներքին պայմաններում, ստեղծվեց հայկական պետականությունը և Հայաստանի ռամկավարական Հանրապետությունը: Նորաստեղծ Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված առաջին միջազգային փաստաթուղթը Թուրքիայի հետ 1918 թ. հունիսի 4-ին Բաթումում կնքված պայմանագիրն էր: Թուրքիան այդ պայմանագրով ստիպված հանձնեց Հայաստանը որպես անկախ պետություն, սակայն, միաժամանակ, օգտվելով նրա թուլությունից, պարտադրեց Հայաստանի Հանրապետությանը իր վրա վերցնել մի շարք ծանր և նվաստացուցիչ պարտավորություններ[1]: Դա վերաբերում էր նաև Հայաստանի բանակին: Հայկական բանակը ունենալու էր սահմանափակ թվով զորք, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի թվաքանակը, ինչպես նաև ըստ տարածաշրջանների նրանց տեղաբաշխումը պետք է որոշվեին Թուրքիայի կառավարության կողմից (հոդվ. առաջին): Հայաստանի կառավարությունը պարտավորվել էր անհապաղ վտարել Թուրքիայի և նրա դաշնակիցների դեմ պատերազմի մեջ գտնվող երկրների՝ իր տարածքում եղած բոլոր սպաներին ու քաղաքացիներին: Հայաստանին արգելվում էր նաև,*

---

1 *Բաթումի պայմանագրի մասին մանրամասն տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828—1923), Երևան, 1972, էջ 531—537: Տե՛ս նաև՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական պետական պատմական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ԿՊՊԱ), ֆ. 222, ց. 1, գ. 24, թ. 332:*

մինչև համաշխարհային պատերազմի ավարտը, ծառայության ընդունել վերոհիշյալ երկրների սպաներին և այլ անձանց (հոդվ. երկրորդ)։ Միաժամանակ, թուրքական բանակին թույլատրվում էր ցանկացած ժամանակ Հայաստանի վրայով իրականացնել տարանցիկ փոխադրումներ։ Իսկ Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում էր ստեղծել անհրաժեշտ պայմաններ այդ փոխադրումների համար և ապահովել նրանց անվտանգությունը (հոդվ. երրորդ)։ Բացի դրանից, Թուրքիան իրեն իրավունք էր վերապահում նման փոխադրումներից օգտվելու հնարավորություն տալ նաև իր դաշնակիցների զորքերին (հոդվ. չորրորդ)[2]։

Չնայած ստեղծված արգելքներին, զինված ուժերի կազմավորումը և հանրապետության բանակի ստեղծումը դիտվեց որպես անկախության պաշտպանության առաջնահերթ հարց։ Թիֆլիսում կազմավորված Հայաստանի Հանրապետության կառավարությունը, Հովհաննես Քաջազնունու վարչապետությամբ, առաջին նախարարությունների թվում ստեղծեց նաև զինվորական նախարարությունը՝ ռուսական բանակի գեներալ-մայոր Հովհաննես (Իվան) Վասիլի Հախվերդյանի (Հախվերդովի) գլխավորությամբ։ Այսպիսի բարդ իրավիճակում Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ի դեմս զինվորական նախարարության, ձեռնամուխ եղավ հայկական ազգային զինված ուժերի կազմավորման գործին։

Գերխնդիրը եղած զինված ուժերի վերախմբավորումն ու վերադասավորումն էր՝ թուրքական նոր առաջխաղացման վտանգից հանրապետությունը և ժողովրդին պաշտպանելու համար։

Հայկական բանակային կորպուսի հրամանատար գեներալ-լեյտենանտ Թովմաս Նազարբեկյանի և գլխավոր շտաբի պետ՝ գեներալ-մայոր Եվգենի Վիշինսկու 1918 թ. հունիսի 5-ի թիվ 20 հրամանով կորպուսը բաժանվեց 4 զորաջոկատների՝ Դիլիջանի, Ներքին Ախտալի, Երևանի և Նոր Բայազետի։ Յուրաքանչյուր ջոկատ ստացավ իր կոնկրետ առաջադրանքը։

Դիլիջանի զորաջոկատը, գնդապետ Տիգրան Բաղդասարյանի հրամանատարությամբ, իր կազմում ուներ 3-րդ հատուկ հետևակային բրիգադի շտաբը, Վանի 2-րդ հետևակային գունդը, հայկական 2-րդ և

---

2 Տե՛ս *Е. К. Саркисян*, Из истории турецкой интервенции в Армении в 1918 г., Ереван, 1970, стр. 163—167.

Ղազախի ռուս-հայկական միացյալ հրաձգային գնդերը, Կարսի հենյալ գունդը, հրետանային բրիգադի մեկ մարտկոց և առանձին զորաջոկատ։ Այս զորաջոկատի խնդիրն էր՝ տեղակայվելով Դիլիջան—Սեմյոնովկա—Ջիբուխլի շրջանում, հետևել թուրքական զորքերի տեղաշարժերին Ղարաքիլիսայի, Քոյազերանի և Ղազախի ուղղություններում, ինչպես նաև պահպանել կարգուկանոնը Սևանի ավազանում և Դիլիջան—Քարավանսարայի շրջանում։ Թուրքերի հետ քաշվելուց հետո այս զորաջոկատը պետք է դրավեր Ղարաքիլիսա—Համամլու շրջանը և դուրս գար նոր ընդունված սահմանը։

Ներքին Ախտայի զորաջոկատը, գնդապետ Բեյ Մամիկոնյանի գլխավորությամբ, իր կազմում ուներ կորպուսի 1-ին հրաձգային դիվիզիայի շտաբը, 1-ին և 3-րդ հրաձգային գնդերը, հեծելազորային 1-ին գունդը, հրետանային բրիգադի երկու և ուսումնական մեկ հրետանային մարտկոցները։ Այս զորաջոկատի թայչարոխի առաջապահ զորամասերը պետք է սերտ կապ պահպանեին Ղարաքիլիսայի ուղղությամբ գործող Դիլիջանի զորաջոկատի և Երևանյան ջոկատի Բաշ Ապարանի առաջապահ ուժերի հետ։

Երևանյան զորաջոկատը, գեներալ-մայոր Մովսես Սիլիկյանի հրամանատարությամբ, կազմված էր կորպուսի 2-րդ հրաձգային դիվիզիայի շտաբից, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ հրաձգային գնդերից, Պարտիզանական, Իգդիրի, Ղարաքիլիսայի և Երզնկայի հայկական հրաձգային գնդերից, Զեյթունի և Պարտիզանական հեծելազորային գնդերից, Երևանի պահեստային դիմարտակից, հրետանային 2-րդ բրիգադի 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ հրետանային մարտկոցներից, Կովկասյան 3-րդ ավիաջոկատից, սակրավորների վաշտից, ինչպես նաև Խոյի, Էրզրումի և Մակվա հրաձգային գնդերի մնացորդներից։ Երևանյան զորաջոկատի հիմնական խնդիրն էր՝ պաշտպանել հանրապետության կարևոր կենտրոնները՝ Երևանի, Էջմիածնի և Աշտարակի շրջանները։ Բաշ Ապարանի ճակատից թուրքական զորքերի հետ քաշվելուց հետո, այս զորաջոկատի առաջապահ ուժերը պետք է շարժվեին մինչև Սպիտակի լեռնանցքը և կապվեին Դիլիջանի զորաջոկատի զորամասերի հետ։

Նոր Բայազետի զորաջոկատը, փոխգնդապետ Ապրեսյանի հրամանատարությամբ, բաղկացած էր պահեստային 1-ին հետևակային գնդից։ Նրա խնդիրն էր՝ պահպանել կարգուկանոնը Նոր Բայազետում և այդ գավառի տարածքում։

1918 թ. հուլիսի 19-ի դրությամբ հայկական կորպուսի վերոհիշյալ զորաջոկատների մարտական կազմը ներկայացնում էր հետևյալ պատկերը. 818 սպա, 18.772 շարքային զինվոր, 11.252 սվին, 1241 սուր և 4504 ձի[3]։

Եղած զորաջոկատներից ամենահամալրվածը Երևանյան զորաջոկատն էր, որն ուներ 491 սպա, 14.040 զինվոր, 9074 սվին, 867 սուր և 3.392 ձի[4]։

Նկատենք, որ հայկական զորամասերի կորիզը կազմում էին ռուսական բանակներում ծառայած Կովկասյան և Արևմտյան ռազմաճակատների մարտերին մասնակցած հայ զինվորները և սպաները։ Նրանցից շատերը Կովկասյան ճակատում հայկական ազգային զորամասերի մեջ սկսել էին կենտրոնանալ դեռևս առաջին համաշխարհային պատերազմի առաջին տարիներին։

Զենքի կոչված մոտ 250 հազար հայ զինվորներից ավելի քան 80 հազարը մարտնչում էին Կովկասյան ճակատում։ Այստեղ կռվում էին և հայ կամավորական ջոկատները։

Ռուսաստանի դեմ Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց հետո (1914 թ. հոկտեմբերի 20) Արևմտյան Հայաստանը ռուսական զենքի օգնությամբ ազատագրելու հույսեր փայփայած հայկական ազգային-քաղաքական շրջանները (մասնավորապես Թիֆլիսի Հայոց ազգային բյուրոն) դիմեցին ռուսական բանակի գլխավոր հրամանատարությանը, խնդրելով՝ թույլատրել կազմավորելու հայ կամավորական ջոկատներ, որոնք պետք է աջակցեին ռուսական Կովկասյան բանակին՝ Արևմտյան Հայաստանի ազատագրման գործում։ Սկզբնապես ռուսական գերագույն հրամանատարությունը թույլատրեց ստեղծել միայն չորս հայկական խմբեր (դրուժինաներ)՝ յուրաքանչյուրը մեկ կանոնավոր գումարտակի կազմում։ Առաջին խումբը (հրամանատար՝ Անդրանիկ) կազմավորվեց Պարսկաստանում՝ Դիլմանի շրջանում, երկրորդը (հրամանատար՝ Դրո)՝ Իգդիրում, երրորդը (հրամանատար՝ Համազասպ)՝ Երևանում, իսկ չորրորդը (հրամանատար՝ Քեռի)՝ Կարսում։ 1915 թ. սկզբին կազմավորվեցին ևս երեք խմբեր՝ հինգերորդը (հրամանատար՝ Վարդան), վեցերորդը (հրամանատար՝ Ա. Ջանփոլադյան) և յոթերորդը (հրամանատար՝ Իշխան Արղության)։ Այսպիսով, կազմակերպ-

---

3 Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 121, ց. 2, գ. 50, թ. 53—54։

4 Նույն տեղում, գ. 16, թ. 25։

վեցին յոթ հայկական խմբեր, և արդեն 1915 թ. վերջին այդ խմբերում հաշվվում էր ավելի քան 6 հազար մարդ[5]։ Կամավորական խմբերը բացառիկ խիզախություն ու ռազմական հմտություն դրսևորեցին պատերազմի առաջին շրջանում՝ մեծապես նպաստելով Արևմտյան Հայաստանի ազատագրման գործին։ Բայց 1915 թ. վերջից, երբ ռուսական հրամանատարությունը ուժեղացրեց Կովկասյան բանակը և անցավ վճռական գործողությունների, այլևս հայ կամավորների «կարիքը» չէր զգացվում։ 1916 թ. դեկտեմբերին հրաման արձակվեց հայ կամավորական խմբերի կազմացրման մասին։ Նրանց փոխարեն Կովկասյան ճակատում, 1915 թ. դեկտեմբերից մինչև 1916 թ. օգոստոսն ընկած ժամանակահատվածում, ռուսական զորամասերի կազմում ստեղծվեցին վեց հայկական կանոնավոր հրաձգային գումարտակներ՝ հայ սպաների հրամանատարությամբ[6]։

Կամավորական խմբերի կազմացրումից հետո հայ կամավորների մի մասը (3176 մարդ), նման որոշումից հիասթափված, ընդհանրապես թողեց զինվորական ծառայությունը, իսկ մյուս մասը (2000 մարդ)՝ համալրեց հայկական գումարտակները[7]։ Ռազմադաշտում գտնվել էին շուրջ 800 հայ կամավորներ[8]։

Հայկական հրաձգային գումարտակները ևս ակտիվ մասնակցություն ունեցան Կովկասյան ճակատի ռուսական բանակի ռազմական գործողություններին։ Նրանք հատկապես աչքի ընկան Երզնկայի գրավման, ինչպես նաև Հյուսիսային Իրանում և Իրանական Քրդստանում տեղի ունեցած մարտական գործողություններում[9]։ 1917 թ. հունվարի 1-ի դրությամբ հայկական վեց հրաձգային գումարտակներում ծա-

---

5 Տե՛ս Գ. Զորդանյան, Հայերի մասնակցությունը առաջին համաշխարհային պատերազմին Կովկասյան ճակատի վրա (1914—1918 թթ.), Փարիզ, 1927, էջ 12 (ֆրանսերեն)։

6 Հայկական գումարտակների հրամանատարներ նշանակվեցին. առաջինում՝ գնդապետ Պ. Բենանդեկյանը, երկրորդում՝ գնդապետ Մ. Սիլիկյանը, երրորդում՝ գնդապետ Տեր-Նիկողոսյանը, չորրորդում՝ գնդապետ Հովսեփյանցը, հինգերորդում՝ գնդապետ Պ. Փիրումյանը, վեցերորդում՝ գնդապետ Մելիք-Մուրադյանը։ Տե՛ս Ա. Շեհուր, Սարդարապատի հերոսամարտը, Ֆրկնո, 1967, էջ 9, Е. В. Масловский. Мировая война на Кавказском фронте 1914—1917 гг. Париж, 1933, էջ 488, 490, 495։

7 Տե՛ս «Համառոտ տեղեկագիր Հայոց ազգային բյուրոյի գործունեության 1915—1917 թթ.», Թիվ 7, Թիֆլիս, էջ 89։

8 Տե՛ս «Հորիզոն», 4 հունվարի 1917 թ., Թիվ 3։

9 Տե՛ս «Դարավերջ ճիզեր հայ անկախության», Պուրեղ, հ. 8, էջ 24։



2—490

Ա 8368

ռայում էր 5719 մարդ, որից 174-ը՝ սպա[10]։ Այդ նույն ժամանակահատվածում (1917 թ. մայիսի դրությամբ) ռուսական բանակի Կովկասյան ճակատում կար 40—50 հազար հայ զինվոր ու սպա, իսկ 30—40 հազար էլ գտնվում էին ռազմական այլ տեղամասերում[11]։

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունը հանգեցրեց ռուսական բանակի կազմալուծմանը և զբաղեցրած բնագծերից հետքաշմանը։ Որպեսզի նահանջող ռուսական զորքերին փոխարինող ոչնչ ուժ ստեղծվեր, Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը և Անդրկովկասի քաղաքացիական իշխանությունները խրախուսում էին տեղում ազգային, այդ թվում նաև հայկական զորամասերի ստեղծումը։ 1917 թվականի մայիսին նրանք բազմիցս դիմեցին ռուսական բանակի գերագույն հրամանատարությանը (ստավկա)՝ թույլատրելու Կովկասյան ճակատում գործող հայկական վեց գումարտակների հիման վրա կազմավորելու հայկական բրիգադ[12]։ 1917 թ. ամռանը Ժամանակավոր կառավարության զինվորական նախարար Ա. Ֆ. Կերենսկուն ուղղված զեկուցագրում ՕԶԱԿՈՄ-ի ղեկավար Վ. Խաղամովը, նկարագրելով կարգապահության անկման և դասալքության հետևանքով Կովկասյան ճակատում նկատվող ռուսական զորքերի մարտունակության թուլացումը, նշում է, որ ի տարբերություն նրանց, մեծ հեղաշրջումը քայքայում չի առաջացրել հայկական գումարտակների շարքերում, որ դրանք ուժեղ են գաղափարական համախմբվածությամբ և հեղափոխական նպատակների պարզ գիտակցությամբ[13]։ Այնուհետև զեկուցագրի հեղինակը նշում է նաև, որ հայկական զորամասերի համալրումը կատարվելու է մյուս զորամասերում ծառայող հայ զինվորների և սպաների հավաքագրման միջոցով, այսինքն՝ այդ մարտիկները և սպաները իրենց ծառայության նոր վայրն էին մեկնելու արդեն իսկ հանդերձավորված[14]։ Զեկուցագիրն ավարտվում է հետևյալ եզրակացությամբ. «Նկատի ունենալով այս բոլորը, ինչպես նաև անձնական բանակցությունները

---

10 Տե՛ս Ա. Նազարյան, *Կովկասյան բանակի սոցիալական և ազգային կազմը 1914—1917 թթ.*, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1989, թիվ 3, էջ 150։

11 Տե՛ս Ս. Աֆանասյան, *Սարդարապատի հաղթանակը (Հայաստան, մայիս, 1918 թ.)*, Երևան, 1991, էջ 21։

12 Տե՛ս Ա. Հարությունյան, *Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները*, Երևան, 1984, էջ 69—70։

13 Տե՛ս նույն տեղում, էջ 70—71։

14 Տե՛ս նույն տեղում, էջ 71։

ների ժամանակ ծանոթանալով հայ զինվորների ու սպաների տրամադրություններին, մենք անհրաժեշտ ենք համարում մեր կողմից նանդուն կերպով պաշտպանել միջնորդությունը և խնդրել Ձեզ՝ այդ հարցը որոշել դրական իմաստով»[15]։ Հայկական ազգային զորամիավորումների ստեղծմանը կարևոր նշանակություն էին տալիս ու մասնակցություն հանդես բերում նաև Անդրկովկասի և Ռուսաստանի հայ քաղաքական շրջանները։ Նախազգալով, որ Կովկասյան ճակատը շուտով կմերկանա և հայ ազգաբնակչությունը անպաշտպան կմնա թուրքերի դեմ հանդիման ռուսական զորքերի կողմից մինչ այդ զրավված շրջաններում, նրանք դիմեցին ժամանակավոր կառավարությանը խնդրելով՝ թույլատրել արևմտյան ռազմաճակատներից հայ մարտիկներին փոխադրելու Անդրկովկաս՝ այնտեղ հայկական զորամասեր կազմավորելու նպատակով[16]։

Գրեթե միաժամանակ նույնպիսի նախաձեռնություններով հանդես եկան նաև ռուսական բանակի որոշ բարձրաստիճան հայ զորավարներ, որոնք համագործակցելով Ռուսաստանի հայկական կազմակերպությունների հետ՝ 1917 թ. մայիսին Պետրոգրադում ստեղծեցին զինվորական կոմիտե։ Կոմիտեի կազմի մեջ էին մտնում գեներալներ Հակոբ Բագրատունին (նախագահ), Լ. Տիգրանովը, գնդապետ Ն. Մելիք-Փարսադանովը և ուրիշներ, որոնք այդ ժամանակամիջոցին գտնվում էին Պետրոգրադում։ Կոմիտեի կազմում առանձնապես կարևոր էր գեներալ-մայոր Բագրատունու մասնակցությունը, որը մեծ հեղինակություն էր վայելում Պետրոգրադի զինվորական բարձրագույն շրջաններում և մեծ ներդրում ունեցավ հայկական կորպուսի կազմավորման գործում։

Զինվորական կոմիտեի նախաձեռնությունը պաշտպանելու, ինչպես նաև ժամանակավոր կառավարության ռազմական նախարար Կերենսկու հետ բանակցելու նպատակով Պետրոգրադ ժամանեցին նաև Անդրկովկասի հայ քաղաքական շրջանների ներկայացուցիչները՝ Արևմտյան Հայաստանի քաղաքացիական վարչության պետի տեղակալ դոկտոր Հ. Զավրիևի գլխավորությամբ։ Մայիսի 31-ին նրանք իրենց խնդրանքը հանձնեցին Կերենսկուն և ստացան նրա հավանությունը։

---

15 Նույն տեղում։

16 Տե՛ս Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Թեհրան, 1982, էջ 61։

Այս բոլոր միջնորդագրերի և բանակցությունների արդյունքը եղավ այն, որ 1917 թ. սեպտեմբերի 13-ին ռուսական գերագույն հրամանատարությունը թույլատրեց Կովկասյան ճակատում գործող վեց հայկական գումարտակները վերակազմավորել և դրանց հիման վրա Անդրկովկասում հայկական հրաձգային բրիգադ ստեղծել, որը պետք է բաղկացած լիներ հրաձգային վեց գնդերից՝ յուրաքանչյուրում երկու գումարտակ։ Կարճ ժամանակահատվածում գերագույն հրամանատարության կարգադրությունը կատարվեց, և հոկտեմբերին հայկական բրիգադն արդեն կազմավորված էր։ Այդ բրիգադի հրամանատար նշանակվեց գնդապետ Պավել Բեժանբեկյանը, իսկ շտաբի (սպայակույտ) պետ՝ կապիտան Վոպիլինը[17]։

Ունենալով հայկական 6 հրաձգային գնդեր և մի շարք այլ առանձին ստորաբաժանումներ, արդեն կարելի էր մտածել նաև հայկական բանակային կորպուս կազմակերպելու մասին, ինչին և ձեռնամուխ եղան Անդրկովկասի հայ քաղաքական շրջանները, որոնք հանդիսանում էին առավել շահագրգիռ կողմ՝ մեծ զոհողությունների գնով ազատագրված Արևմտյան Հայաստանը պաշտպանելու համար։ Հայ ժողովրդի համար ստեղծված այդ ճգնաժամային պայմաններում Հայոց ազգային խորհուրդը, ելնելով ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպման անհրաժեշտությունից, 1917 թ. հոկտեմբերին կրկին դիմեց ժամանակավոր կառավարությանը (մասնավորապես նրա զինվորական նախարար Կերենսկուն)՝ թույլատրելու Անդրկովկասում հայկական բանակային կորպուսի կազմավորումը։ Այդ նպատակով հոկտեմբերի վերջին և նոյեմբերի սկզբին Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի կողմից Պետրոգրադ էին գործուղվել նաև Ս. Խատիսյանը և Հ. Զավրիևը[18]։ Հետագայում, ինչպես նշում է իր հուշերում հայկական կորպուսի հրամանատար գեներալ Թ. Հ. Նազարբեկյանը, Անդրկովկասում ազգային կորպուսներ կազմավորելու մասին Պետրոգրադից հրամանի ստացման պահին առավել նպաստավոր վիճակի մեջ էին հայերը, որոնք այդ ժամանակ արդեն ունեին կազմավորված վեց հրա-

---

17 Հայկական բրիգադի և ապա կորպուսի կազմավորման գործընթացի, ձևավորված զորամասերի և նրանց տեղաբաշխման վերաբերյալ տվյալները բերված են հիմնականում հայկական կորպուսի հրամանատար գեներալ Թ. Նազարբեկյանի հուշերից (ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 16), ինչպես նաև այլ փաստաթղթերից։

18 Տե՛ս Ս. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 7։

ձղային և մեկ հեծելազորային գնդեր[19]: Քանի որ 1917 թ. վերջին ռազմաճակատի փլուզումը ստացել էր արտառավոր բնույթ, և ստեղծված դրությունը կարող էին որոշ չափով մեղմացնել միայն ազգային զորամասերը, ժամանակավոր կառավարությանը ոչինչ չէր մնում անել, քան բավարարել Հայոց ազգային խորհրդի խնդրանքը:

Անդրկովկասում պետք է կազմավորվեին հինգ ազգային կորպուսներ՝ հայկական, վրացական, ադրբեջանական (կոչվել է նաև իսլամական), ռուսական և լեհական[20]: Վերջին երկուսը գոյություն ունեին միայն թղթի վրա, և ձևավորման ամբողջ շրջանում այդ կորպուսներում այդպես էլ չստեղծվեց ոչ մի մարտունակ զորամաս, իսկ վրացական և ադրբեջանական կորպուսները համալրվեցին միայն 30 տոկոսով[21]:

Հայկական բանակային կորպուս կազմավորելու մասին պաշտոնական թույլտվությունը Անդրկովկասում ստացվեց 1917 թ. նոյեմբերի 19-ին[22]: Ծրագրվում էր հայկական բրիգադի կազմի մեջ մտնող հրաձգային գնդերի թիվը հասցնել ութի, իսկ գնդերի կազմի մեջ մտնող զումարտակներինը՝ երեքի: Այդ գնդերից պետք է կազմակերպվեին երկու դիվիզիա՝ չորսական գունդ յուրաքանչյուրում: Հեծելազորային բրիգադի, 15 հրետանային մարտկոցների, ինչպես նաև օժանդակ տեխնիկական ծառայությունների հետ միասին այդ դիվիզիաները պետք է կազմեին հայկական կորպուսը[23]: Կորպուսի զորամասերի և ստորաբաժանումների կազմավորումը անմիջականորեն ղեկավարում էր Հայոց ազգային խորհրդի զինվորական բաժինը (կոչվել է նաև զինվորական սեկցիա):

Հայկական բանակային կորպուսի ստեղծման գործում անմիջական մասնակցություն են ունեցել այնպիսի գործիչներ, ինչպիսիք են Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի զինվորական մարմնի ղեկավար-

---

19 Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 16, թ. 1:

20 Տե՛ս նույն տեղում, գ. 32, թ. 1:

21 Տե՛ս Ա. Հարությունյան, Պատմական հշմարտությունը Սարդարապատի հակատամարտի մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1978, թիվ 3, էջ 97:

22 Հայկական կորպուսի ստեղծման պաշտոնական հրահանգի ստացման վերաբերյալ հայկական աղբյուրներում բերվում են տարբեր ամսաթվեր (հոկտեմբերի 14-ը, նոյեմբերի 21-ը և այլն): Մեր կողմից նշված ամսաթիվը բերված է ըստ Թ. Նազարբեկյանի հուշերի, որը, մեր կարծիքով, ամենահավաստին է: Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 16, թ. 15:

23 Տե՛ս Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 58:

ներ Ստեփան Մամիկոնյանը, Արսեն Շահմազյանը, Ռուբեն Տեր-Մինասյանը, Հակոբ Քոչարյանը, Արամայիս Երզնկյանը, Երևանի Հայոց ազգային խորհրդի գործադիր մարմնի Հատուկ կոմիտեի նախագահ Արշալույս Աստվածատրյանը, Երևանի հայ զինվորական միությանն նախագահ բժիշկ Հովակիմ Մելիքյանը և ուրիշներ։

Հայկական կորպուսի հրամանատար նշանակվեց ռուսական բանակի փորձված և հմուտ զորավար գեներալ-լեյտենանտ Թովմաս (Ֆոմա) Հովհաննեսի (Իվանի) Նազարբեկյանը (Նազարբեկով), շտաբի (սպայակույտի) պետ՝ գեներալ-մայոր Եվգենի Եվգենևիչ Վիշինսկին, կոմիսար՝ Դրաստամատ Կանայանը (Դրո)։

Կորպուսի հրամանատար նշանակվելուց հետո Թ. Նազարբեկյանը զբաղվեց Թիֆլիսում տեղակայված կորպուսի շտաբի կազմակերպմամբ[24]։ Նրա կարևոր հոգսերից մեկը պատրաստված սպայական կադրերի հավաքագրումն էր։ Նշանակումներից առաջ բոլոր սպաների թեկնածությունները քննարկվում էին զինվորական բաժնում։ Կորպուսի բարձրագույն հրամանատարական կազմի ընտրության նպատակով զինվորական բաժնի անդամներից ստեղծվում է հանձնաժողով, որի մեջ էին մտնում Դրոն և Նազարբեկյանը[25]։ Կազմավորվող հայկական առաջին հրաձգային դիվիզիայի, որի կազմի մեջ էին մտնում 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հրաձգային գնդերը, հրամանատար նշանակվեց գեներալ-մայոր Միքայել Արեշյանը, իսկ շտաբի պետ՝ գնդապետ Աթայանը։ Հայկական երկրորդ հրաձգային դիվիզիայի հրամանատար նշանակվեց գեներալ Մովսես Սիլիկյանը։ Այդ դիվիզիայի կազմի մեջ էին մտնում 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ հրաձգային գնդերը։ Երկու հեծելազորային գնդից կազմված բրիգադի հրամանատարի պաշտոնին նշանակվեց գնդապետ Նիկոլայ Ղորղանյանը (Կորգանով)։ Կազմավորվեց նաև հրետանային բրիգադ, որը կազմված էր մեկ հրետանային գնդից։ Այդ բրիգադի հրամանատար նշանակվեց գնդապետ Գամազյանը[26]։

---

24 Կորպուսի շտաբը իր կազմում ուներ հետևյալ վարչությունները՝ հրետանային, համբարակային (թիկունքի), ռազմական դատարանի, զինվորական դատախազության, զինվորական վերահսկման, բժշկասանիտարական և բժշկաանասնաբուժական։ Շտաբի կազմի մեջ էր մտնում նաև շտաբի պահապան հարյուրյակը և մեկ հրետանային մարտկոց։ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 204, ց. 1, գ. 42, թ. 145։

25 Տե՛ս նույն տեղում, ֆ. 45, ց. 1, գ. 20, թ. 42։

26 Տե՛ս նույն տեղում, գ. 16, թ. 19։

Կորպուսի շտաբի ստեղծման և բարձրագույն հրամանատարական կազմի նշանակման հետ միաժամանակ անհրաժեշտ քայլեր էին ձեռնարկվում կորպուսի ստորաբաժանումների՝ զինվորներով համալրման և կազմավորման ուղղությամբ։ Ինչպես Պետրոգրադից, նույնպես և Թիֆլիսից բազմաթիվ հեռագրեր էին հաղորդվում համապատասխան զորամասեր և ռազմաճակատներ՝ պահանջելով հայ սպաներին և զինվորներին զործուղել հայկական կորպուսի տրամադրության տակ[27]։ Պետք է նշել, որ այդ կարգադրությունները հիմնականում կատարվում էին. հայ զինվորականները ցանկություն էին հայտնում ծառայելու հայկական կորպուսում։

Այսպես. 1917 թ. նոյեմբերի 25-ին Կովկասյան ռազմաճակատի շտաբը ռազմական օկրուգի շտաբին ուղարկած մի գրությամբ խնդրում էր, որպեսզի վերջինս կարգադրություն անի շտապ ուղարկել 4200 զինվոր՝ համալրելու նոր ստեղծված հայկական հրաձգային գնդերի երեք գումարտակները, այդ թվում՝ հայկական 5-րդ գնդի համար՝ 1200 և 1-ին ու 2-րդ գնդերի համար՝ 1500-ական մարդ[28]։ Դեկտեմբերի 18-ին Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար Պրժևալսկին համապատասխան կարգադրություն արեց, որպեսզի ռազմաճակատը լքող ռուսական կորպուսներից առանձնացվեն հայ զինվորականները՝ իրենց զենքով ու զինամթերքով, և նրանցից կազմավորվեն հայկական զորամիավորումներ՝ ըստ նրանցում եղած հայ զինվորների քանակի[29]։

Նույն ամսին Թիֆլիսի հայկական ռազմական խորհուրդը դիմեց Կովկասյան ճակատի օկրուգի շտաբի պետին, խնդրելով ըստ հնարավորին տեղյակ պահել, թե որտեղից ինչ համալրում է սպասվում, հատկապես արևմտյան ռազմաճակատներից, Սիբիրից և Թուրքեստանից[30]։

Կորպուսի զորամասերի կազմավորմանը ակտիվ մասնակցություն ունեցավ նաև Երևանի ազգային խորհուրդը, որի գործունեությունը հատկապես աշխուժացավ և նպատակասլաց դարձավ, երբ 1917 թ. դեկտեմբերին այն գլխավորեց Արամ Մանուկյանը։ Արխիվային փաստաթղթերը վկայում են, որ 1917 թ. դեկտեմբերից մինչև 1918 թ. մայիսը Երևանի ազգային խորհրդի գործադիր մարմինը՝ Հատուկ կոմիտեն, ընդունել է մի շարք որոշումներ, որոնք նախատեսում էին դրա-

---

27 Տե՛ս Ա. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 74։

28 Տե՛ս նույն տեղում, էջ 75։

29 Տե՛ս ՀԿՊԱ, ֆ. 45 ց. 1, գ. 16, թ. 24։

30 Տե՛ս Ա. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 75։

մական հատկացումներ՝ կազմավորվող հայկական գնդերի համար[31], նրանց՝ ռազմաճակատ մեկնելու կազմակերպում[32], ինչպես նաև բնակչության մոբիլիզացիա[33]։

1917 թ. դեկտեմբերի 23-ին Հատուկ կոմիտեն հրահանգ հրապարակեց զորահավաքից ազատվողների մասին, ուր նշված էին այն առավել կարևոր բնագավառները, որտեղ զորակոչվողների աշխատանքն ուներ կարևոր պաշտպանական նշանակություն (երկաթուղայիններ, դեղագործներ և այլն)[34]։ Դեկտեմբերի 24-ին հրաման արձակվեց Երևան քաղաքից զորահավաքի ենթակա 20-ից 32 տարեկան բաղաքացիների չբացակայելու մասին, մինչև նոր կարգադրություններ ստանալը[35]։ Հայկական զորամասեր ծառայության մեկնող կամավորների տարիքը սահմանվեց 18 տարեկանից բարձր[36]։ Երևանի ազգային խորհուրդը իր վրա վերցրեց նաև հայկական կորպուս զորակոչվածների ընտանիքների ապրուստի ապահովման գործը։ Զինվորական ծառայությունից վերադարձողներին իրավունք էր վերապահվում գրավելու նախկինում իրենց զբաղեցրած պաշտոնները[37]։

1918 թ. հունվարի սկզբի դրությամբ հայկական կորպուսն արգեն ուներ ութ հրաձգային գունդ, որոնցից յուրաքանչյուրը կազմված էր երկու գումարտակից (երրորդ գումարտակները գտնվում էին կազմավորման փուլում), ութ լեռնային և դաշտային, մեկ հաուբիցային հրետանային մարտկոցներից, երկու տեղական (Լոռվա և Ղազախի) և երկու պահեստային գնդերից, սակրավորների մեկ գումարտակից, երկու հեծելազորային գնդերից, ինչպես նաև Անդրանիկի զորամասից[38]

---

31 Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, թ. 227, 245, 89։

32 Տե՛ս նույն տեղում, թ. 103, 34։

33 Տե՛ս նույն տեղում, թ. 40, 136, 43, 137, 135, 53, նաև ֆ. 290, ց. 1, գ. 1, թ. 7։

34 Տե՛ս նույն տեղում, թ. 41։

35 Տե՛ս նույն տեղում, թ. 44։

36 Տե՛ս նույն տեղում, թ. 34։

37 Տե՛ս նույն տեղում, թ. 42։

38 Անդրանիկի զորամասը, որը կոչվում էր նաև Հատուկ հայկական դիվիզիա, կազմավորվել էր Արևմտահայ ազատագրության խորհրդի անմիջական նախաձեռնությամբ։ Այն կազմված էր բացառապես արևմտահայերից և կազմակերպական տեսակետից չուներ բանակային ընդունված կառուցվածք։ 1918 թ. սկզբին Անդրանիկի դիվիզիայի կազմի մեջ էին մտնում հրաձգային մեկ գունդ և հետևակային ու հեծյալ մի քանի ջոկատ (խումբ)։ Տե՛ս Ս. Աֆանասյան, նշվ. աշխ., էջ 17—18։

և ճակատի առաջավոր գծերում գործող կամավորական խմբերից, որոնք տեղաբաշխված էին Վանում, Խնուսում և Խլաթում[39]։

Հայկական կորպուսի զորագնդերի տեղաբաշխումը սկզբնական շրջանում ուներ հետևյալ պատկերը. 1-ին գունդը տեղավորված էր Քանաքեռում, 2-րդը՝ Խնուսում, 3-րդը՝ Դիլիջանում, 4-րդը՝ Էջմիածնում, 5-րդը՝ Վանում, 6-րդը՝ Երևանում, հեծյալ գունդը՝ Թիֆլիսում, 7-րդը՝ Սարիղամիշում, 8-րդը՝ Ալեքսանդրապոլում, 9-րդը՝ Լոռիում և 10-րդը՝ Ղազախում։

Գնդերի հրամանատարներ նշանակվեցին. հրետանային գնդում՝ գնդապետ Կովտանովը, ապա՝ գնդապետ Գամազովը, 1-ին հեծյալ գնդում՝ ռոտմիստր Բեկ Փիրումովը, 2-րդ հեծյալ գնդում՝ գնդապետ Զալինովը, 1-ին հրաձգային գնդում՝ գնդապետ Կարաքիշիշովը, 2-րդում՝ Սամարցևը, 3-րդում՝ Լ. Հովսեփյանը, 4-րդում՝ Ար. Հովսեփյանցը, 5-րդում՝ Պավել Բեկ Փիրումովը, 6-րդում՝ Մելիք-Մուրադովը, 7-րդում՝ Բեյ-Մամիկոնյանը, 8-րդում՝ Արզումինսկին, 9-րդում՝ (կամ «Լոռի»)՝ Կորգանովը։ 12-րդ (Ալեքսանդրապոլի) գնդի հրամանատար նշանակվեց գնդապետ Ապրեսովը, սակրավոր գումարտակի հրամանատար՝ փոխգնդապետ Ունջիևը[40]։

1918 թ. մարտի 31-ի տվյալներով հայկական բանակային կորպուսի զորամիավորումների խմբավորումները և մարտական կազմը ներկայացնում էին հետևյալ պատկերը. Բեգլի Ահմեդի զորաջոկատ՝ 11 գումարտակ, 14 լեռնային, 4 թեթև թնդանոթ, 8 հեծելազորային էսկադրոն. Կաղզվանի զորաջոկատ՝ 1 գումարտակ և 130 հեծելազորայիններ, Երևանի զորաջոկատ՝ 14 գումարտակ, 12 լեռնային, 6 թեթև թնդանոթներ և 3 հարյուրյակ։ Կորպուսի պահեստազորային ուժերի կազմում կային 11 գումարտակներ։ Աշոպիսով, կորպուսի կազմում կար 37 գումարտակ, 26 լեռնային և 10 թեթև թնդանոթներ, 170 գնդացիր, 12 հեծելազորային էսկադրոն և 3 հարյուրյակ, 16.715 հետևակ ու հեծյալ զինվոր և 600 սպա[41]։

1918 թ. հունվարի վերջերին Թուրքերը խախտեցին 1917 թ. դեկտեմբերի 5-ին Երզնկայում կնքված զինադադարի պայմանագիրը, ներխուժեցին Արևելյան Հայաստան։ Հայկական բանակային կորպուսի այդ զորամասերի վրա էր ընկել 1918 թ. հունվար-մայիս ամիսներ-

---

39 Տե՛ս ՀՊՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 16, թ. 33։

40 Տե՛ս նույն տեղում, թ. 16—20։

41 Տե՛ս նույն տեղում, ֆ. 121, ց. 2, գ. 88, թ. 1։

բին Անդրկովկասի վրա կատարված թուրքական, թվապես մի քանի անգամ գերազանցող, կանոնավոր զորաբանակներին դիմակայելու ողջ ծանրությունը։ Թուրքական առաջխաղացումը կասեցվեց։ Մայիսի 22-ից 28-ը տեղի ունեցած Սարդարապատի, Բաշ Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերում ձեռք բերված հաղթանակները Հայկական կորպուսի զորամասերի հերոսական ջանքերի արդյունքն էին և ունեցան հիրավի պատմական նշանակություն։ Այդ հերոսամարտերի շնորհիվ արևելահայությունը ոչ միայն փրկվեց ֆիզիկական բնաջնջման սպառնալիքից, այլև թուրքերն ստիպված եղան հաշվի նստել հայ ժողովրդի՝ պետականություն ստեղծելու կամքի հետ։

Թուրքական զորքերի դեմ մղած մայիսյան կռիվներում աչքի ընկան հատկապես հայկական կորպուսի 2-րդ հրաձգային դիվիզիան, նրա հրամանատար գեներալ-մայոր Մովսես Սիլիկովը, զորաջոկատի հրամանատար՝ գնդապետ Դանիել Բեկ Փիրումովը, 5-րդ հրաձգային գունդը, հրամանատար՝ գնդապետ Պավել Բեկ Փիրումովը, հեծելազորային գունդը, որի հրամանատարն էր հեծելազորի գնդապետ Նիկոլայ Կորգանովը, հատուկ Ղարաբաղյան զորաջոկատը՝ գնդապետ Պավել Մելիք Շահնազարովի հրամանատարությամբ, պարտիզանական գունդը՝ գնդապետ Վասիլի Պերեկրեստովի հրամանատարությամբ, 2-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարի տեղակալ, հետևակազորի փոխգնդապետ Վեքիլովը, ինչպես նաև հրետանային մարտկոցների հրամանատարներ, կապիտաններ Նիկոլայ Կլիչը, Վլադիմիր Սակիլարին և շատ ուրիշներ։ Նրանք բոլորն էլ հետագայում կարևոր դեր կատարեցին Հայաստանի առաջին հանրապետության բանակի կազմավորման գործում։ Սկսվեց հայկական բանակի վերակազմավորումը։

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության ստեղծման պահին, 1918 թ. հուլիսի 20-ի դրությամբ, հայկական կորպուսը բաղկացած էր երկու հրաձգային դիվիզիաներից, որոնցից յուրաքանչյուրն ուներ չորսական հրաձգային գնդեր և մեկական հրաձգային-հրետանային բրիգադներ՝ վեցական հրետանային մարտկոցներով, Հայկական առանձին հեծյալ բրիգադից՝ բաղկացած երկու հեծյալ գնդերից և հեծյալ լեռնային մարտկոցից, Ալեքսանդրապոլի բերդապահ հետևակային բրիգադից՝

բաղկացած հինգ հետևակային գնդերից և երեք առանձին գումարտակներից, Հայկական համահավաք զորաջոկատից՝ բաղկացած երեք հատուկ հետևակային բրիգադներից, որոնցից յուրաքանչյուրում՝ երկու հետևակային, մեկական հեծյալ գնդեր և հրետանային դիվիզիոններ, Հայկական պահեստային հետևակային բրիգադից՝ բաղկացած երկու հետևակային գնդերից և չորս առանձին գումարտակներից։ Բացի դրանցից կորպուսի մեջ մտնում էին՝ Հայկական հրացանաձիգ-գնդացրային, հրետանային-հրասանդային դիվիզիոններ, Կարսի և Ալեքսանդրապոլի բերդապահ հրետանին, պարտիզանական և Կարսի հեծյալ գնդերը, Լոռու, Շուշու, Ախալքալաքի հայկական հրաձգային գնդերը, Ղազախի հայ-ռուսական հրաձգային գունդը, Նուխու և Ախալցխայի հայկական հրաձգային գումարտակները, Լոռու հայկական պահակային գումարտակը, Թիֆլիս—Ալեքսանդրապոլ և Ալեքսանդրապոլ—Ջուլֆա երկաթուղին պաշտպանող երկու գումարտակներ, Հայկական սակրավորների գումարտակը, Կարսի սակրավորների գումարտակը, ավտոմոբիլային երեք վաշտեր, 3-րդ կովկասյան ավիաջոկատը, չորս ռադիոկայաններ և այլն։ Հայկական կորպուսը ուներ նաև ենթասպաների (ունտեր-սպայական) դպրոց, վարժական զորախումբ, ռազմասանիտարական և անասնաբուժական հաստատություններ՝ 10 հոսպիտալ, վիրաբուժական ջոկատներ, վիրավորների էվակուացման կետ, 4 անասնաբուժարան և այլն[42]։

Քանի որ Բաթումի պայմանագրով Թուրքիան «թույլ էր տալիս» Հայաստանի նորաստեղծ Հանրապետությանը ունենալ զինված ուժեր, որոնք պետք է չգերազանցեին մեկ հետևակային դիվիզիան[43], ուստի հայկական բանակային կորպուսը, որը, ինչպես արդեն նշվել է, բաղկացած էր երկու հրաձգային դիվիզիաներից, հետևակային, հեծելազորային, պահեստային բրիգադներից, հավաքական զորաջոկատից և այլ առանձին ու մասնագիտացված զորամասերից ու ստորաբաժանումներից, պետք է վերակազմավորվեր, վերածվեր մեկ հետևակային դիվիզիայի։ Վերակազմավորման աշխատանքները սկսվեցին կորպուսի հրամանատար գեներալ Թ. Նազարբեկյանի 1918 թ. հուլիսի 20-ի թիվ 94 հրամանով, որի համաձայն, վերակազմավորման նպատակով կորպուսից անմիջապես զորացրվում էին արտահաստիքային, արդեն զոյություն չունեցող և կորպուսի զորամասերում ու վարչություններում

42 Տե՛ս ՀՀՊԱ, ֆ. 204, ց. 1, գ. 42, թ. 1—5։

43 Տե՛ս նույն տեղում, ֆ. 222, ց. 1. գ. 24, թ. 333։

հետագա ծառայության համար այլևս ոչ պիտանի (առողջական վիճակի պատճառով) օտարազգի սպաները և աստիճանավորները[44]:

Հայկական կորպուսի վերակազմավորումը և Առանձին հայկական դիվիզիայի կազմավորման գործընթացը տեղի էր ունենում Թուրքիայի անմիջական հսկողության պայմաններում: Բաթումի ստորագրուցիչ պայմանագրի ստորագրումից հետո, 1918-ի օգոստոս ամսին, Երևան էր ժամանել Հայաստանի Հանրապետությունում Թուրքիայի ռազմական և դիվանագիտական ներկայացուցիչ նշանակված Ալի Մեհմեդ Փաշան[45]:

Կազմավորվող հայկական Առանձին դիվիզիայի հրամանատար է նշանակվում կորպուսի 2-րդ հրաձգային դիվիզիայի նախկին հրամանատար գեներալ-մայոր Մովսես Սիլիկյանը (Սիլիկովը)[46], որի 1918 թ. օգոստոսի 1-ի թիվ առաջին հրամանով, շտաբի պետ նշանակվեց փոխգնդապետ Ալեքսանդր Վեքիլյանը (Վեքիլովը): Քիչ ուշ, փոխգնդապետ Վեքիլյանի փոխարեն, շտաբի պետի պարտականությունների կատարումը հանձնարարվեց գնդապետ Ջինկևիչին[47]: Հայկական Առանձին դիվիզիայի հրամանատարը բոլոր հարցերով անմիջականորեն ենթարկվում էր հանրապետության զինվորական նախարարին[48]:

Գեներալ Սիլիկյանի օգոստոսի 9-ի թիվ 3 հրամանից տեղեկանում ենք, որ հայկական կորպուսի վերակազմավորման և հայկական Առանձին դիվիզիայի ստեղծման աշխատանքները ավարտվելու էին նույն թվականի օգոստոսի 15-ին[49]: «Օգոստոսի 15-ից,—ասված է դիվիզիայի հրամանատարի վերը հիշված հրամանում,—բոլոր նախկին զորամասերը, բացի կորպուսի շտաբից և վարչություններից,.... կհամարվեն գոյություն չունեցող, և բոլոր զինծառայողները, ովքեր չեն մտնի հայկական հետևակային դիվիզիայի կազմի մեջ՝ կարձակվեն պետական դրամական, ինչպես նաև բոլոր այլ տեսակի մատակարարումներից[50]:

Սկզբնական շրջանում, 1918 թ. աշնան դրությամբ, Հայկական Առանձին հետևակային դիվիզիան բաղկացած էր վեց հետևակային

---

44 Նույն տեղում, ֆ. 204, ց. 1, գ. 47, թ. 1, տե՛ս Հավելված № 1:

45 Տե՛ս Е. К. Саркисян, Նշվ. աշխ., էջ 220:

46 Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 204, ց. 1, գ. 40, թ. 55:

47 Նույն տեղում, գ. 42, թ. 9, 10:

48 Տե՛ս նույն տեղում, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 1—10:

49 Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 204, ց. 1, գ. 42, թ. 9—10:

50 Նույն տեղում:

գնդերից՝ երեքական գումարտակով։ Սկզբում այդ գնդերը միավորված էին հետեւակային երկու բրիգադների մեջ, որոնցից յուրաքանչյուրում կար երեքական գունդ։ Դիվիզիայի հրետանին կազմված էր հրետանային մեկ բրիգադից (երկու թեթեւ, չորս լեռնային և մեկ հաուբիցային մարտկոց)՝ միավորված երեք (1 թեթեւ և 2 լեռնային) հրետանային դիվիզիոնի ու հրետանային հավաքակազմի մեջ։ Դիվիզիայի հեծելազորը կազմված էր համահավաք հեծյալ գնդից։ Վերոհիշյալ զորամասերից բացի, դիվիզիայի կազմի մեջ էին մտնում նաև ինժեներական վաշտը, ավիացիոն ու ռադիոհեռաձգային ջոկերը, ավտոմոբիլային և ուսումնական զորախմբերը, դիվիզիայի տրանսպորտի ստորաբաժանումը, վիրակապող ջոկատը և անասնաբուժական լազարեթը[51]։

Հայկական առանձին հետեւակային դիվիզիայի այս կառուցվածքը պահպանվեց մինչև 1918 թ. վերջը։

Հայկական դիվիզիայի զորամասերում հրամանատարներ նշանակվեցին ռուսական բանակի շարքերում մարտական դպրոց անցած փոքաքանակ կազրային սպաներ։ Այսպես, դիվիզիայի հրամանատարի (ինժենդանտի), բժշկի, անասնաբույժի և ճարտարագետի (ինժենների) պաշտոններին նշանակվեցին դասային աստիճանավորներ՝ Տրոիցկին և Տեր Միքայելյանցը, բժիշկ Պրիբիլսկին և փոխգնդապետ Կելլերը։ Առաջին հետեւակային բրիգադի հրամանատար նշանակվեց գնդապետ Դանիել Բեկ Փիրումովը, երկրորդ բրիգադի՝ գնդապետ Բաղդասարովը։ Առաջին բրիգադի, երկրորդ և երրորդ հետեւակային գնդերի հրամանատարներ նշանակվեցին գնդապետներ Սամոյլենկոն և Գոլուխանյանը, իսկ երկրորդ հետեւակային բրիգադը կազմող 4-րդ, 5-րդ և 6-րդ գնդերի հրամանատարներ՝ գնդապետներ՝ Պերեկրյստովը, Կազեմիրսկին և Տիմշենկոն։ Դիվիզիայի հրետանային բրիգադի հրամանատարությունը հանձնվել էր գնդապետ Քրիստափոր Արարատյանին (հետագայում զինվորական նախարար)։ Հրետանային բրիգադի 1-ին թեթեւ դիվիզիոնի հրամանատար էր նշանակված կապիտան Բաղդասարյանը, իսկ այդ դիվիզիոնը կազմող 1-ին և 2-րդ հրետանային մարտկոցների հրամանատարներն էին պորուչիկ Կլիչը և շտաբս կապիտան Վեքիլովը։ Երկրորդ լեռնային դիվիզիոնի հրամանատար էր նշանակվել փոխգնդապետ Սիկորսկին, իսկ դիվիզիոնի կազմի մեջ մտնող 3-րդ և 4-րդ լեռնային մարտկոցների հրամանատարությունները վստահված էին շտաբս կապիտան Կուսիկովին և կապիտան Արուշան-

---

51 Տե՛ս նույն տեղում, թ. 4։

յանցին։ Երրորդ լեռնային դիվիզիոնի հրամանատարությունը ստանձնեց փոխգնդապետ Խոմելկովը, իսկ այդ դիվիզիոնը կազմող 5-րդ, 6-րդ և 7-րդ մարտկոցներում հրամանատարներ էին նշանակվել շտաբս կապիտաններ Պրիտխանովը, Սակիլարին և Սամուելովը։

Դիվիզիայի հավաքական հեծելազորային գնդի հրամանատար նշանակվեց գնդապետ Նիկոլայ Կորգանովը։ Ճարտարագիտական վաշտի, ավիացիոն և ռադիոհեռագրային բաժանմունքների, ավտոմոբիլային զորախմբի, դիվիզիայի տրանսպորտի ստորաբաժանումների և ուսումնական զորախմբի հրամանատարությունները հանձնված էին համապատասխանաբար փոխգնդապետ Կելլերին, պրոուչիկ Վոիպովին, պոդպորուչիկ Տեր-Մկրտչյանին, պրապորշչիկներ Վանեցյանին, Օհանյանցին և փոխգնդապետ Սոբեցկուն[52]։

Բացի վերը նշված սպաներից և դասային աստիճանավորներից, 1918 թ. հոկտեմբերի 17-ի դրությամբ Հայկական առանձին դիվիզիայի շտաբում և զորամասերում զանազան պաշտոններ էին զբաղեցնում նաև կապիտան Սիգիզմունդ Իոսիֆովիչ Գրոսսը, շտաբս կապիտաններ Նիկոլայ Ալեքսանդրովիչ Շումովը և Սեղրակ Ալեքսանդրի Սերգեևը, պրոուչիկ Բենիամին Համբարձումի Ներսեսովը, պոդպորուչիկներ՝ Միխայիլ Ռոդիոնովիչ Մեդվեդևը, Միլենտի Իվանովիչ Դվերնիցկին, Ռուբեն Պետրոսի Դաշտոյանցը, Արտեմ Նիկիտի Ահարոնովը, պրապորշչիկներ՝ Լևոն Հակոբի Աբրահամյանցը, Հակոբ Ալեքսանդրի Գևորգյանցը և ուրիշներ[53]։

Մինչև 1918 թ. հոկտեմբեր ամիսը Երևանում ավարտվեցին նաև Հայաստանի Հանրապետության բանակի բարձրագույն զինվորական կառույցի՝ զինվորական նախարարության ու նրա ապարատի ձևավորման աշխատանքները։

Հայաստանի առաջին հանրապետությունը ունեցավ զինվորական չորս նախարար։ Այդ պաշտոնում միմյանց հաջորդեցին Հովհաննես Հախվերդյանը (1918 թ. հունիս—1919 թ. մարտ), Քրիստափոր Արարատյանը (1919 թ. մարտ—1920 թ. ապրիլ), Ռուբեն Տեր-Մինասյանը (1920 թ. ապրիլ—նոյեմբեր) և Դրաստամատ Կանայանը (Դրո), 1920 թ. նոյեմբեր—դեկտեմբեր)։

Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարության

---

52 Տե՛ս ՀՊՊԱ, ֆ. 204, ց. 1, գ. 42, թ. 12։

53 Տե՛ս նույն տեղում, գ. 41, թ. 57։

կազմի մեջ, որպես նրա վարչական մարմիններ, գործում էին՝ զինվորական շտաբը (կոչվում էր նաև Գլխավոր զինվորական շտաբ), որը բաղկացած էր զորահավաքային ու հրահանգչական բաժիններից, գրասենյակից ու շտաբի վաշտից, ինչպես նաև հրետանային, ռազմատեխնիկական, համբարակային, զինվորական նախարարության գեներալ-վերահսկիչի, զորքերի բնակարանավորման, ռազմասանիտարական, ռազմաանասնաբուժական վարչությունները, ինչպես նաև զինվորական դատարանը և ռազմադատախազական հսկողության հիմնարկությունները[54]:

Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարի 1918 թ. հոկտեմբերի 27-ի թիվ 36 հրամանով նախարարության այդ վարչություններում և հիմնարկություններում պաշտոնների նշանակվեցին նախկին հայկական կորպուսի շտաբի բարձրաստիճան զինվորականները: Այսպես, օրինակ, զինվորական նախարարության Գլխավոր զինվորական շտաբի պետ նշանակվեց գեներալ-մայոր Աբրահամ Դոլուխանովը[55], հրետանային վարչության պետ՝ գեներալ-մայոր Կոստանդին Դամազովը, իսկ համբարակային վարչության պետ՝ գեներալ-մայոր Զումարովը: Հայաստանի Հանրապետության զինվորական դատարանի նախագահ նշանակվեց գեներալ-մայոր Քիշմիշյանը, սանիտարական վարչության պետ՝ արքունական խորհրդական Պապիկյանը: Նախարարության գլխավոր վերահսկիչի պաշտոնում նշանակվեց տիտղոսավոր խորհրդական Վարդանովը, անասնաբուժական վարչության պետ՝ դատային ատենակալավոր Վարդանյանցը[56]:

Որոշ ժամանակ անց տեղի են ունենում կազմակերպական մի շարք փոփոխություններ: 1919 թ. հուլիսին գեներալ Քիշմիշյանը նշանակվում է Թիֆլիսում Վրաստանի կառավարությանը կից հայկական դիվանագիտական առաքելության զինվորական ներկայացուցիչ: Զինվորական դատարանի նախագահ է նշանակվում գեներալ-մայոր Մելիք-Շահնազարովը: Նույն հրամանով գեներալ-մայոր Շահբուդաղովը նշանակվում է զինվորական նախարարության ռազմատեխնիկական վարչության պետ: Իսկ օգոստոսից զինվորական նախարարության համբարակային վարչության պետ է նշանակվում գեներալ Բեյ-Մա-

---

54 Նույն տեղում, գ. 51, թ. 161:

55 Տե՛ս նույն տեղում, գ. 41, թ. 55:

56 Նույն տեղում, գ. 40, թ. 71:

միկոնյանը[57]։ 1919 թ. սեպտեմբերին զեներալ-մայոր Դոլուխանովի փոխարեն, Հայաստանի Հանրապետության զինվորական շտաբի պետ է նշանակվում գնդապետ Ալեքսանդր Շնեուրը, հետագայում նրան փոխարինեց զեներալ-մայոր Բոգդան Բաղդասարովը[58]։

1919 թ. սկզբին Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարությանը առընթեր ստեղծվեց նաև ռազմական խորհուրդ, որը կոլեգիալ ձևով պետք է քննարկեր ռազմական շինարարության և մարտական գործողությունների սկզբունքային հարցերը և որոշումներ կայացներ դրանց վերաբերյալ։ Ռազմական խորհրդի կազմի մեջ մտան դիվիզիայի ավագ զորահրամանատարներն ու զինվորական նախարարության վարչությունների պետերը[59]։ 1919 թ. մարտի 25-ին այդ խորհրդի անփոփոխ նախագահ նշանակվեց հայկական կորպուսի նախկին հրամանատար զեներալ-լեյտենանտ Թ. Հ. Նազարբեկյանը[60]։ Հայաստանի կառավարության ապրիլի 24-ի հրամանագրով նրա վրա դրվեց նաև Հայաստանի Հանրապետության զորքերի գլխավոր հրամանատարի (սպարապետի) պարտականությունը[61]։ Այդ բարձր պաշտոնը ստանձնելու կապակցությամբ հայկական զորքերին ուղղված գլխավոր հրամանատարի ողջույնի խոսքում ասվում էր. «Երկրորդ անգամ ստանձնելով զորքերի հրամանատարությունը՝ ես համարում եմ ինձ երջանիկ ու հպարտանում եմ դրանով, իմ սրբազան պարտքն եմ համարում ողջույնի խոսքով դիմել իմ սրտին հարազատ զորքերին, որոնց հետ ինձ կապում են Հայաստանի պատմության մարտական էջերը։

Հայաստանի վերածնման այս ուրախ պահին, երբ մեր աչքերի առջև բացվում են փափագելի սահմանների լուսավոր հորիզոնները, հանուն որի կարողանում էր մեռնել հայ զինվորը, այն տիտանական պայքարից հետո, որին դիմացավ հայ ժողովուրդը՝ զոհերի հոծ բազմությամբ աշխարհին ապացուցելով ինքնուրույն ապրելու իր իրավունքը, այս պահին, երբ սկսում է իրականանալ այն ամենը, հանուն որի մենք կրեցինք անցած տարվա պատերազմի զրկանքները, երբ մեր զինվորը՝ զրկված շորից, կոշիկից, հաճախ նաև սննդից, անտրտունջ տանելով զինվորական ծառայության բոլոր դժվարությունները՝ ան-

57 Տե՛ս նույն տեղում, գ. 131, թ. 12։

58 Տե՛ս նույն տեղում, թ. 27, 43, 46, 55, 56, 61, 76։

59 Տե՛ս նույն տեղում, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 2։

60 Տե՛ս նույն տեղում, ֆ. 204, ց. 1, գ. 131, թ. 4։

61 Տե՛ս նույն տեղում, գ. 129, թ. 1։

վերջ արշավանքներում, ձյան ու անձրևի տակ, շրջապատված թշնամիներով, տոկուն և հնազանդ տանում էր իր ծանր խաչը, ես դիմում եմ հայ զինվորականությանը նոր կոչով՝ անցնել աշխատանքի, որը մեզ սպասվում է։

Ներկայումս, երբ Հայաստանի սահմանների մեջ են ընդգրկվում նոր մարզեր, ուր շտապում են անցած պատերազմին այդքան շատ տառապած անբախտ գաղթականները, հայկական զորքը կոչված է անցնելու անվտանգության և իրավակարգի ապահովման աշխատանքներին, որոնք կապահովեն Հայաստանի քաղաքացիների ազատ կյանքը...։

Ինքնուրույն ապրելու իր իրավունքը ռազմի դաշտում ապացուցած հայ զինվորը այժմ պետք է ապացուցի նաև, որ ինքը կարող է ապրել ինքնուրույն կյանքով և, ինչպես ժամապահ, զենքը ձեռքին կկանգնի օրինականության ու կարգուկանոնի պահպանմանը»։

Դիմելով սպայությանը, զորավարը կոչ էր անում նրանց՝ մոտ կանգնել հասարակ զինվորին և օգնել նրան հասկանալու այն կարևոր խնդիրը, որը կանգնած է ազգի առջև. «Հմուտ առաջնորդե՛ք հայ զինվորին, և նա չի մերժի,—գրում էր Նազարբեկյանը,—ես տեսել եմ այդ զինվորին անցած պատերազմի ծանր օրերին. նա համեստ է, դիմացկուն, լսող և չպահանջող, նա ամենուրեք կգնա սպայի հետևից՝ կատարելով նրա պահանջները։

Թո՛ղ օրհնի մեզ Տեր Աստված կատարելու այդ դժվարին խնդիրը՝ հանուն վերածնվող Հայաստանի ծաղկման ու հզորության»[62]։

Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի պարտությունից հետո (1918 թ. հոկտեմբերի 30), օգտվելով Բաթումի պայմանագրի ուժը կորցնելու հանգամանքից, Հայաստանի Հանրապետության կառավարությունը հնարավորություն ստացավ կտրուկ ավելացնել իր զինված ուժերի թիվը։

1919 թ. հունվարին, զինվորական նախարար գեներալ Հ. Հախվերդյանի հրամանով, Հայկական Առանձին դիվիզիան վերակազմավորվեց։ Մեկ առանձին հետևակային դիվիզիայի փոխարեն կազմավորվեցին երեք առանձին հետևակային բրիգադներ՝ յուրաքանչյուրը բաղկացած հետևակային երկուական գնդերից։ Հայկական Առանձին բրիգադների հրամանատարներ նշանակվեցին առաջինում՝ գեներալ-

---

62 ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 204, ց. 1, գ. 129, թ. 1։

մայոր Դանիել Բեկ-Փիրումովը, երկրորդում՝ գեներալ-մայոր Ֆրտեմ Հովսեփյանցը, երրորդում՝ գեներալ-մայոր Բոգդան Բաղդասարովը[63]։

1919 թ. սկզբի դրությամբ Հանրապետության բանակի առանձին բրիգադների ինչպես վարչական կառույցները, այնպես էլ ստորաբաժանումները հիմնականում տեղակայված էին Արարատյան դաշտավայրում։ Առաջին բրիգադի շտաբը տեղավորվեց Երևանում, երկրորդ բրիգադինը՝ Վաղարշապատում, իսկ երրորդինը՝ Ղարաքիլիսայում։ Երևան—Վաղարշապատ—Ղամարլու շրջանում տեղաբաշխվեցին 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հետևակային գնդերը՝ իրենց հրետանիով։ 5-րդ գունդը տեղակայվեց Ղարաքիլիսայի, 6-րդը՝ Դիլիջանի շրջանում[64]։

Հայկական բանակի կառուցվածքի ամբողջական պատկերի մասին արժեքավոր տեղեկություններ է պարունակում Հայաստանի պատմության պետական արխիվի 204-րդ (Գլխավոր սանիտարական վարչություն) ֆոնդում պահպանվող զինվորական նախարարության գլխավոր զինվորական շտաբի օպերատիվ բաժնի պետի պաշտոնակատար պորուչիկ Ներշովի կազմած զաղտնի փաստաթուղթը։ Ըստ այդ փաստաթղթի, 1919 թ. հունիսի դրությամբ Հայաստանի Հանրապետության զինված ուժերը բաղկացած էին մշտական (այսինքն՝ կանոնավոր), միլիցիոներական և կամավորական զորքերից։ Բանակի մշտական զորքերից էին հետևակային զորամասերը, որոնք բաղկացած էին 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, և 7-րդ հետևակային գնդերից։ 1-ին և 5-րդ հետևակային գնդերը տեղակայված էին Կարսում, 3-րդ և 7-րդ զորագնդերը՝ Ղամարլուում (այժմ՝ Աստղաշատ), 2-րդ գունդը՝ Քանաքեռում, 4-րդը՝ Սարիղամիշում, 6-րդը՝ Դիլիջանում։ Հետևակային այս յոթ գնդերը միավորված էին չորս առանձին հետևակային բրիգադների մեջ, որից 1-ին բրիգադի շտաբը տեղակայված էր Երևանում, 2-րդը՝ Կարսում, 3-րդը՝ Դիլիջանում, 4-րդը՝ Ալեքսանդրապոլում։ Բացի այդ զորամասերից, հայկական բանակի հետևակային զորքերի կազմում էին նաև Բաշգառնիի հետևակային առանձին գումարտակը և 1-ին ու 3-րդ հետևակային առանձին գումարտակները, որոնք տեղաբաշխված էին համապատասխանաբար Բասարգեչարում (այժմ՝ Վարդենիս), Զանգեզուրում, Երևանի, Ալեքսանդրապոլի և Կարսի պահակային գումարտակները, ինչպես նաև պահակախմբային գումարտակը, որը նույնպես գտնվում էր Երևանում։

---

63 Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 204, ց. 1, գ. 128, թ. 1։

64 Տե՛ս նույն տեղում, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 2։

Մշտական զորքերից էին նաև հեծելազորը, հրետազորը, ինժեներական զորամասերը և սահմանապահ ուժերը։ Հեծելազորը, բաղկացած էր 1-ին և 2-րդ հեծելազորային գնդերից, որոնք երկուսն էլ տեղաբաշխված էին Ալեքսանդրապոլում։ Բանակի հրետազորը բաղկացած էր չորս առանձին հրետանային դիվիզիոններից։ 1-ին և 4-րդ հրետանային դիվիզիոնների շտաբը տեղակայված էր Երևանում, 2-րդ դիվիզիոնինը՝ Կարսում, 3-րդինը՝ Ալեքսանդրապոլում։ Այս դիվիզիոնների մեջ էին մտնում 1-ին, 2-րդ, 8-րդ և 10-րդ թեթև հրետանային մարտկոցները, որոնք համապատասխանաբար տեղակայված էին Երևանում, Կարսում, Իգդիրում և Ալեքսանդրապոլում, ինչպես նաև 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 11-րդ և 12-րդ լեռնային հրետանու մարտկոցները, որոնք համապատասխանաբար տեղաբաշխված էին Դիլիջանում, Բաշգառնիում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Էջմիածնում, Գորիսում, Ղամարլուում և Քեշիշքենդում (այժմ՝ Եղեգնաձոր)։ Բացի այս 12 թեթև և լեռնային հրետանային մարտկոցներից, հրետազորի մեջ էին մտնում նաև առանձին հեծյալ-լեռնային մարտկոցը, երկու հաուբիցային առանձին մարտկոցները և հրետանային ուսումնական զորախումբը, որոնցից առաջինը տեղակայված էր Ալեքսանդրապոլում, իսկ մյուս երկուսը՝ Երևանում։ Հրետազորի մեջ էր մտնում նաև Կարսի բերդապահ հրետանին։

Ինժեներական զորամասերը բաղկացած էին ինժեներական գումարտակից, ռադիոհեռագրային դիվիզիոնից, զինվորական նախարարության ավտոմոբիլային զորամասից և հզոր ռադիոկայանից։ Այս բոլոր զորամասերը գտնվում էին Երևանում։ Սահմանապահ զորքերը բաղկացած էին մեկ բրիգադից, որի շտաբը տեղակայված էր Ղարաքիլիսայում։

Հայկական բանակի միլիցիոներական զորքերի մեջ էին մտնում Քարվանսարայում (այժմ՝ Իջևան) տեղաբաշխված 1-ին ռազմամիլիցիոներական գունդը, Դարալագյազի 5 վաշտանոց, Ղարանլուղում՝ (այժմ՝ Մարտունի) տեղակայված 2-րդ Առանձին և Գոդթանի միլիցիոներական գումարտակները։ Բանակի կամավորական զորքերը բաղկացած էին հետևակային և հեծյալ զորամասերից։ Կամավորական հետևակային զորքերի կազմում էին 1-ին և 2-րդ կամավորական հետևակային գնդերը, որոնք միավորված էին մեկ հետևակային կամավորական բրիգադի մեջ և տեղակայված էին Իգդիրում։ Կամավորական հեծյալ զորքերը բաղկացած էին մեկ հեծելազորային դիվիզիո-

նից, որը տեղաբաշխված էր Գորիսում։ Հայկական բանակի այս բոլոր զորամասերը և ստորաբաժանումները միավորված էին 5 հիմնական բանակային զորախմբերի և ջոկատների մեջ։ 1919 թ. հունիսի դրությամբ բանակի կազմում գոյություն ունեին Երևանյան և Ալեքսանդրապոլի զորախմբերը, ինչպես նաև հատուկ էքսպեդիցիոն, Նոր Բայազետի ու Դարալագյազի զորաջոկատները։

Բացի վերը նշված զորամասերից, Հայաստանի Հանրապետության բանակի կազմի մեջ էին մտնում նաև Սևանա լճի նավատորմիկը և Կարսում տեղաբաշխված ավիաջոկատը։ Հայկական բանակը ուներ զրահապատ գնացքներ՝ «Ազատամարտ» և «Վարդան զորավար»։ Դրանցից առաջինը գտնվում էր Երևանում, իսկ երկրորդը՝ Ալեքսանդրապոլում[65]։

Հայաստանի Հանրապետության բանակի վերակազմման և վերադասավորման մասին Ադրբեջանի կառավարությանը պարբերաբար լրտեսական տեղեկություններ էր հաղորդում Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Խան Թեքինսկին։ Այսպես, 1919 թ. հուլիսի 16-ին նրա կողմից Վրաստանում (Թիֆլիսում) Ադրբեջանի դիվանագիտական առաքելության զինվորական կցորդ գնդապետ Մահմեդ բեկ Ալիևին ուղարկված հեռագրում հայտնվում էր. «Հայաստանն ունի երեք հետևակային բրիգադ՝ յուրաքանչյուրը կազմված երկու գնդից։ Գունդը բաղկացած է երեք գումարտակից։ Երեք հեծելազորային գունդ՝ յուրաքանչյուրը կազմված վեց հեծելազորային էսկադրոնից, բայց բոլոր էսկադրոնների կազմավորումը տեղ ավարտված չէ։ 12 մարտկոց, որոնցից յուրաքանչյուրում կա չորս թնդանոթ, բացի դրանից գոյություն ունի Ղարաբաղյան զորաջոկատ, որը բաղկացած է մեկ հետևակային բրիգադից, երեք էսկադրոնից և չորս թնդանոթից։ Կարսում, մոտավոր հաշվումներով, կա մինչև 500 թնդանոթ՝ ութը դյույմանոցից մինչև դաշտային, սակայն դրանց վրա սպաներ և ծառայողներ չկան։ Երեք զրահագնացք։ Այժմ տեղի է ունենում ուժեղ զորահավաք։ Կարծում եմ, որ զորահավաքի միջոցով կկարողանան համալրել միայն մատնանշված գնդերի թվաքանակը, քանի որ դասալիքներ շատ կան։ Խնդրում եմ այս բոլորը հաղորդեցեք զինվորական նախարարին»[66]։

---

65 Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 204, ց. 1, գ. 51, թ. 161—163։

66 Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 299, մաս 1, թ. 6։

Երկու օր անց, հուլիսի 19-ին, նույն հասցեատիրոջը ուղղված մի այլ հեռագրով լրտես դիվանագետը շտապում էր կատարել հետևյալ լրացումը. «Բացի վեց հետևակային գնդերից գոյություն ունի յոթերորդը...: Կա նաև սահմանապահ բրիգադ և զինվորական շտաբի զորամասը: Զանգեզուրում կան Հայաստանի զորամասեր, բայց դրանց թվաքանակը հայտնի չէ»: Այնուհետև նա ավելացնում է. «Հինգերորդ գունդը կանգնած է Կարսում: Չորրորդը՝ ...Դիլիջանի և Նոր Բայազետի շրջանում է: Վեցերորդը հավանաբար գտնվում է Ալեքսանդրապոլի և Սուրմալուի գավառի շրջաններում: Վեգիբասարի, Շարուրի և Նախիջևանի շրջանում են գտնվում 7-րդ գնդի 1-ին, 2-րդ և 3-րդ զորամասերը, ինչպես նաև սահմանապահ բրիգադի մեկ բաժին, զինվորական շտաբի վաշտը, ականանետային զորամասը, երկու դրահագնացք, հեծելազորի և լեռնային ձիավոր մարտկոցի փոքրաթիվ զորամասերը: Երևանում են ուսումնական զորախումբը և Երևանյան առանձին գումարտակը: Ամբողջ Ղարաբաղյան ջոկատը, գնդապետ Կաֆիլևի հրամանատարությամբ, հավանաբար տեղաշարժվել է Զանգեզուր: Հեծելազորը կանգնած էր Ալեքսանդրապոլում, իսկ թե ուր է հիմա՝ դժվար է ճշտել, քանի որ միայն երեք էսկադրոններ են ձիերով, մնացածը՝ առանց ձիերի: Տեղի ունեցող մարտական գործողությունների պատճառով զորամասերի տեղակայման վայրերը ենթարկվում են փոփոխության: Գնդերի հրամանատարներին ուղղված գեներալ Շելկովնիկովի պաղտնի հրամանների պատճենները ուղարկված են ի գիտություն Շարուր—Նախիջևանի մահմեդականներին, որի մասին հայկական իշխանությունները հավանաբար չգիտեն»[67]:

Համեմատելով պորուչիկ Ներշովի տվյալների հետ, տեսնում ենք, որ Հայաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչի հաղորդած փաստերը հիմնականում համընկնում են գլխավոր շտաբի օպերատիվ բաժնի պետի կողմից կազմված տվյալների հետ: Բացառություն է կազմում միայն Հայաստանի Հանրապետության բանակի կանոնավոր զորքերի կազմի մեջ մտնող 4-րդ հետևակային բրիգադի գոյության փաստը, որի մասին չի նշվում Խան Թեքինսկու հաղորդագրության մեջ: Նշենք, որ 4-րդ բրիգադը, որի հրամանատարն էր Սեպուհը, բաղկացած էր 1919 թ. ամռանը հիմնականում Իգդիրի շրջանում գտնվող արևմտահայերից կազմված 7-րդ (հրամանատարներ՝

---

67 ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 299, մաս 1, թ. 6։

գնդապետներ Տեր-Գրիգորյան, ապա՝ Իշխանյան) և 1920 թ. սկզբին, ևս արևմտահայերից՝ հիմնականում վասպուրականցիներից, կազմավորված 8-րդ (հրամանատար՝ գնդապետ Տիգրան Բաղդասարյան) հետևակային գնդերից։

Այս զորագնդերի սպայական կազմը ևս բաղկացած էր արևմտահայերից՝ հիմնականում թուրքական բանակի հայազգի սպաներից։ Նրանցից շատերը առաջին աշխարհամարտի ժամանակ գերի էին վերցվել ռուսական զորքերի կողմից, ապա, ռազմագերիների ճամբարներից վերադառնալուց հետո անցել Հայաստան և ծառայության մտել հայկական բանակում[68]։ 4-րդ բրիգադը, որը հայկական բանակի կանոնավոր զորքերի մեջ մտնող արևմտահայերից կազմված միակ զորամասն էր, ակտիվ մասնակցություն ցուցաբերեց 1918—1920 թթ. Հայաստանի Հանրապետությունը ներքին և արտաքին թշնամիներից պաշտպանելու գործում։ Նրա զորամասերը հատկապես աչքի ընկան Իգդիրի, Բեյուք Վեդիի, Զանգիբասարի ադրբեջանաբնակ խռովարար շրջանների և Ղազախում, Դիլիջանում ու Շամշադինում Հայաստան ներխուժած կարմիր զորամասերի դեմ կռիվներում։ Սեպուհի 4-րդ բրիգադի զորամասերը եղան նաև Ալեքսանդրապոլի 1920 թ. մայիսյան բոլշևիկյան ապստամբությունը ճնշած կառավարական զորքերի հիմքը, այդ իսկ պատճառով էլ, ի տարբերություն Հայաստանի Հանրապետության բանակի զորամասերի, որոնք Հայաստանի խորհրդայնացվելուց հետո վերակազմավորվեցին, 4-րդ բրիգադը՝ այն կազմող 7-րդ և 8-րդ գնդերը, 1920 թ. նոյեմբերին կազմալուծվեցին[69]։

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կառուցվածքի և նրա զորամասերի տեղաբաշխման վերջնական տեսքի մասին հստակ տեղեկություններ է պարունակում Հայաստանի Հանրապետության կենտրոնական պետական պատմության արխիվի 290-րդ (Հայաստանի զինվորական նախարարություն) ֆոնդում պահպանվող հայկական զորքերի Գլխավոր հրամանատարի շտաբի օպերատիվ բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար, շտաբս կապիտան Խնձորյանի

---

68 Տե՛ս ՀԿՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 13, նաև Գ. Սյուրմենյան, Տաճկահայ զինվոր և զինվորականությունը նախ տաճկական, ապա հայկական բանակներուն մեջ, Բեյրութ, 1967, էջ 45—46, Հ. Սահակյան, Երկու տարի հայկական բանակին մեջ, Փարիզ, 1937, էջ 12։

69 Տե՛ս Գ. Սյուրմենյան, նշվ. աշխ., էջ 112։

կողմից կազմված «Հայաստանի Հանրապետության զորամասերի տեղաբաշխվածությունը 1920 թ. օգոստոսի 1-ի դրությամբ» վերնագիրը կրող փաստաթուղթը։

Համաձայն այդ վավերագրի տվյալ ժամանակաշրջանում Հայաստանի զինվորական նախարարության տարածքը բաղկացած էր գլխավոր և զորքերի հրամանատարի շտաբներից, հրետանային, ռազմատեխնիկական[70], համբարակային, գլխավոր վերահսկիչի, ռազմասանիտարական և ռազմանասնաբուժական վարչություններից։

Որոշակի մարտական առաջադրանքներ իրականացնելու նպատակով հայկական ողջ բանակի զորամասերն ու ստորաբաժանումները միավորված էին 7 հիմնական զորախմբերի և զորաջոկատների մեջ։ 1920 թ. օգոստոսի 1-ի դրությամբ բանակի կազմում կային հետևյալ զորախմբերն ու ջոկատները. Ալեքսանդրապոլի (շտաբը գտնվում էր Կարսում) և Արևելյան (շտաբը՝ Ղարանլուղում) զորախմբերը, ինչպես նաև Դարալագյազի (շտաբը՝ Քեշիշքենդում), Նոր Բայազետի (շտաբը՝ Նոր Բայազետում), Հատուկ էքսպեդիցիոն (շտաբը՝ Քեշիշքենդում), Շարուրի (շտաբը՝ Շահթախթում) և Դիլիջան—Ղարաքիլիսայի (շտաբը՝ Դիլիջանում) զորաջոկատները։ Այս զորաջոկատների հրամանատարներ նշանակվեցին. Նոր Բայազետի զորաջոկատում՝ գեներալ-մայոր Պողոս (Պավել) Բեկ-Փիրումյանը, Դարալագյազի զորաջոկատում՝ գնդապետ Մելիք-Գուրջիևը, ապա՝ գնդապետ Մելիք-Մուրադյանը, իսկ Հատուկ էքսպեդիցիոն զորաջոկատում՝ Դրաստամատ Կանայանը (Դրո), որը մինչև այդ հայկական բանակի Երևանյան զորախմբի հրամանատարն էր[71]։

Հայկական բանակը բաղկացած էր մշտական և միլիցիոներական ու պարտիզանական զորքերից։

Մշտական զորքերի մեջ էին մտնում 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ հետևակային գնդերը։ 1-ին և 5-րդ գնդերը տեղավորված էին Կարսում, 2-րդ և 3-րդը՝ Ղամարլուում, (Արտաշատ) 4-րդը տեղակայված էր Սարիղամիշում, 6-րդը՝ Դիլիջանում, 7-րդը՝ Քանաքեռում, իսկ 8-րդ և 9-րդ գնդերը տեղակայված էին Իգդիրում։ Մշտական զորքերի այս բոլոր գնդերը միավորված էին չորս հիմնական առանձին հետևակային բրիգադ-

---

70 Ռազմատեխնիկական վարչության մեջ էր մտնում նաև զորքերի բնակարանավորման բաժինը։

71 Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 204, ց. 1, գ. 131, թ. 92։

ների մեջ։ Առաջին բրիգադի վարչությունը (շտաբը) տեղակայված էր Երևանում, երկրորդը՝ Կարսում, երրորդը՝ Դիլիջանում, իսկ չորրորդը՝ Իգդիրում։

Բացի զորագնդերից, զոչություն ունեին նաև երեք առանձին և մեկ հինգ վաշտից բաղկացած գումարտակներ, որոնք տեղաբաշխված էին համապատասխանաբար Բասարգեչարում, Ղամարլուում, Քեշիշքենդում և Ղուշչիում։

Հեծելազորը բաղկացած էր մեկ առանձին հեծելազորային բրիգադից, որի վարչությունը տեղակայված էր Ալեքսանդրապոլում։ Բրիգադի կազմի մեջ էին մտնում առաջին և երկրորդ հեծյալ գնդերը, որոնք երկուսն էլ գտնվում էին Շարուրի զորաջոկատի կազմում։ Հրետանին բաղկացած էր չորս առանձին հրետանային դիվիզիոններից, որոնց վարչությունները տեղաբաշխված էին Երևանում, Կարսում, Ալեքսանդրապոլում և Նոր Բայազետում։ Այս դիվիզիոնների մեջ էին մտնում առաջին, երկրորդ, ութերորդ, տասներորդ թեթև հրետանային մարտկոցները, որոնք համապատասխանաբար տեղաբաշխված էին Շարուրի զորաջոկատում, Կարսում, Իգդիրում ու Բասարգեչարում, ինչպես նաև երրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ յոթերորդ իններորդ, տասնմեկերորդ, տասներկուերորդ, տասներեքերորդ լեռնային հրետանային մարտկոցները, որոնք համապատասխանաբար տեղաբաշխված էին Դիլիջանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Շարուրի ջոկատում, Քանաքեռում, Ղափանում, Քեշիշքենդում և Դիլիջանում։

Բացի վերոհիշյալ թեթև և լեռնային մարտկոցներից հրետանային դիվիզիոնների կազմի մեջ մտնում էին. Քանաքեռ—Ղուշչի տեղամասում տեղակայված լեռնային հեծյալ գումարտակը, 1-ին և 2-րդ հաուբիցային մարտկոցները, որոնցից 1-ինը տեղակայված էր Շարուրի զորաջոկատում, իսկ 2-րդը՝ Քանաքեռում, հրետանային ուսումնական զորախումբը, որը գտնվում էր Երևանում, ինչպես նաև զրահատեխնիկան։

Տեխնիկական զորամասերը տվյալ ժամանակահատվածում կազմված էին Կարսում գտնվող ավիացիոն զորաջոկատից, ինժեներական (ռազմատեխնիկական) գումարտակից, ռադիոհեռագրային դիվիզիոնից և Երևանի հզոր ռադիոկայանից։ Դրանք երեքն էլ տեղակայված էին Երևանում։ Տեխնիկական զորքերի մեջ էին մտնում նաև Սևանի լճային նավատորմիկը, որի նավակայանը գտնվում էր Ելենովկայում (այժմ՝ քաղաք Սևան)։

Հայաստանի Հանրապետության բանակի մշտական զորամասերի մեջ մտնում էին նաև Կարսի բերդապահ հրետանին և սահմանապահ զորքերը, որը բաղկացած էր Ղարաքիլիսայում տեղակայված 1-ին և Կարսի 2-րդ սահմանապահ բրիգադներից և Շարուրի զորաջոկատի սահմանապահ զորախմբի հատուկ բաժնից: Հայկական բանակի սահմանապահ զորքերը ենթարկվում էին գլխավոր հրամանատարի շտաբին կից գործող հատուկ սահմանապահ բաժնին, որը գտնվում էր Երևանում: Մշտական զորամասերից էին նաև պահակակետային գումարտակը, ինչպես նաև Երևանի, Ալեքսանդրապոլի և Կարսի պահակային գումարտակները:

Հայկական բանակի միլիցիոներական, պարտիզանական-կամավորական՝ այն է ոչ կանոնավոր, զորքերի մեջ մտնում էին Դարալագյազի և Զանգեզուրի միլիցիոներական գումարտակները, որից առաջինը տեղակայված էր Քեշիշքենդում, իսկ երկրորդը՝ Ղափանում, Էջմիածնի տեղական վումարտակը և Կրխբուլաղի առանձին գումարտակը, որոնք տեղաբաշխված էին Շարուրում, և առաջին առանձին հեծյալ դիվիզիոնը, որը տեղավորված էր Ղուշչիում: Ոչ կանոնավոր զորքերի մեջ էին մտնում նաև հայկական բանակի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ առանձին պարտիզանական հեծյալ հարյուրյակները, որոնք տեղաբաշխված էին Իգդիրում, Կարսում և Ալեքսանդրապոլում:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի տեղական կառավարման մարմինները և հիմնարկությունները էին՝ Կարսի բերդի, Երևան քաղաքի պարետների վարչությունները, Կարսի, Ղարաքիլիսայի ու Սարիղամիշի երկաթուղային կայարանների պարետային վարչությունները, Երևանի, Ալեքսանդրապոլի և Կարսի զինվորական պետերի վարչությունները, ինչպես նաև Երևանի, Ղարաքիլիսայի, Սուրմալուի, Նոր Բայազետի, Դարալագյազի, Ալեքսանդրապոլի և Դիլիջանի հավաքակետերը:

Զինվորական ուսումնական հաստատություններն էին՝ Գլխավոր շտաբի սպայական դասընթացները, սպայական նախապատրաստական դպրոցը, ինչպես նաև հայկական առանձին բրիգադին և անասնաբուժական լազարեթին կից գործող ուսումնական դարբնոցները:

Բանակի բժշկական հաստատություններն էին՝ Երևանի և Ալեքսանդրապոլի զինվորական հոսպիտալները, ինչպես նաև Կարսում, Սարիղամիշում, Ղամարլուում, Իգդիրում, Դիլիջանում և Ջալալօղլիում գտնվող տեղական բժշկական լազարեթները: Բուժական հաստատու-

թյուններից էին նաև սանիտարական գնացքը և ապաքինման դասակը, որը գտնվում էր Քանաքեռում։

Անասնաբուժական հիմնարկը գտնվում էր Ալեքսանդրապոլում և կազմված էր զորամասային անասնաբուժական լաղարեթից։

Շտաբս կապիտան Խնձորյանի կազմած այս փաստաթղթից իմանում ենք նաև, որ 1920 թ. օգոստոսի 1-ի դրությամբ հայկական բանակը իր տրամադրության տակ ուներ մի շարք զորապահեստներ, պարենային խանութներ, գործարան և արհեստանոցներ։ Հրետանային պահեստները գտնվում էին Քանաքեռում, Ալեքսանդրապոլում, Նոր Բայազետում, Ղարաքիլիսայում և Դիլիջանում, իսկ ինժեներական պահեստներ կային Երևանում և Կարսում։ Համբարակային ապրանքների պահեստները գտնվում էին Ալեքսանդրապոլում և Երևանում։ Պարենային խանութները տեղակայված էին Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարիղամիշում, Դիլիջանում, Ղարաքիլիսայում, Իգդիրում, Էջմիածնում, Ղամարլուում, Քարվանսարայում և Նոր Բայազետում։ Զինագնդացրային արհեստանոցը գտնվում էր Քանաքեռում, իսկ Ալեքսանդրապոլում էին տեղակայված հրետանային արհեստանոցը և ճիաբուծական գործարանը։ Նույն փաստաթղթից տեղեկանում ենք նաև, որ Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարության ենթակայության տակ էին գտնվում Հայաստանի սահմաններից դուրս գտնվող զինվորական հիմնարկություններ, որոնք էին՝ Վրաստանում Հայաստանի զինվորական նախարարությանը պատկանող գույքի հավաքման և պահպանման լիազորի, ինչպես նաև Վրաստանում Հայաստանի զինվորական նախարարության ներկայացուցչի վարչությունները[72]։

Հայկական բանակի կառուցվածքի մասին լրացուցիչ որոշ տեղեկություններ է պարունակում նաև Բաթումում Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Զվերևի կազմած տեղեկագիրը, որը պահպանվում է Հայաստանի Կենտրոնական պետական պատմության արխիվի 200-րդ (Հայաստանի արտաքին գործերի նախարարություն) ֆոնդում։ Համաձայն այդ փաստաթղթի, 1920 թ. հոկտեմբերի 25-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության բանակը բաղկացած էր հետևակային, հեծելազորային և հրետանային կանոնավոր և կամավորական զորամասերից։ Հետևակային կանոնավոր զորքերը բաղկացած էին հինգ

---

72 ՏԻ՛ս 22 ԿՊՊԱ, ֆ. 290, ց. 1, գ. 9, թ. 1—3։

առանձին հետևակային բրիգադներից, որոնց մեջ էին մտնում 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ 8-րդ, 9-րդ և 10-րդ հետևակային գնդերը: Յուրաքանչյուր գունդ բաղկացած էր երկու գումարտակից, գումարտակը՝ 4 վաշտից: Գունդը ուներ գնդացրային զորախումբ, հետախույզների հեծյալ զորախումբ և կապի ծառայություն: Յուրաքանչյուր հետևակային գնդում կար 1500 սվին:

Հետևակային զորքերից էին Դրոյի զորաջոկատը, որի մեջ էր մտնում Երևանյան գունդը: Այդ գունդը մասնակցել էր Զանգեզուրի մարտերին, ունենալ զգալի կորուստներ, որի հետևանքով նրա թվակազմը չէր գերազանցում 300 սվիններից: Այս զորաջոկատի մեջ մտնում էր նաև եզդիներից կազմված 1-ին հետևակային դիվիզիոնը: Բացի այս զորամասերից, հետևակային զորքերի կազմի մեջ էին մտնում նաև Երևանի ու Ալեքսանդրապոլի պահակային գումարտակները, ինչպես նաև երեք հատուկ հետևակային գումարտակներ, որոնք տեղաբաշխված էին համապատասխանաբար Բասարգեչարում, Ղարաքիլիսայում և Գարալագյազում:

Հրետանագորը բաղկացած էր 11 լեռնային-հեծյալ մարտկոցներից, որոնցից յուրաքանչյուրում կար 4 հրանոթ, երեք հաուբիցային մարտկոցներից, ինչպես նաև Կարսի ու Ալեքսանդրապոլի ամրոցային հրետանուց: Հրետանային մարտկոցների տեղաբաշխվածությունը ուներ հետևյալ պատկերը. 1-ին ու 2-րդ հաուբիցային մարտկոցները տեղակայված էին Քանաքեռում, 3-րդը՝ Դիլիջանում, ուր գտնվում էր նաև 4-րդ լեռնային մարտկոցը, 5-րդը՝ տեղակայված էր Ղազախում, 6-րդը՝ Ղարաքիլիսայում, 7-րդը և 8-րդը՝ Իգդիրում, 9-րդը՝ Նոր Բայազետում, 10-րդը Բասարգեչարում, իսկ 11-րդը՝ Զանգեզուրում:

Հայկական բանակի կազմի մեջ կար 4 զրահագնացք և մեկ զրահապատ ավտոմոբիլ, որը գտնվում էր Երևանում: Հայկական բանակի ստորաբաժանումներից էր նաև ավիացիոն ջոկատը, որը տեղավորված էր Կարսում[73]:

Համեմատելով երկու փաստաթղթերի տվյալները, տեսնում ենք, որ Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցչի կազմած տեղեկագիրը համընկնում է Գլխավոր շտաբի օպերատիվ բաժնի պաշտոնական կազմած տվյալների հետ, միաժամանակ պարունակելով որոշ լրացուցիչ փաստեր: Տեղի ունեցած կարևոր փոփոխությունների թվում կարելի է

---

73 Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 486, թ. 366:

նշել միայն 10-րդ հետևակային գնդի ստեղծման փաստը, որի հետևանքով կազմավորվել էր նաև հայկական բանակի 5-րդ հետևակային բրիգադը, ինչի մասին չի նշված շտաբս կապիտանի կազմած տեղեկագրում:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի այս կառուցվածքը մասնակի փոփոխություններով պահպանվեց մինչև Հայաստանի առաջին հանրապետության անկումը և հայկական բանակի վերակազմավորումը: Տեղի ունեցած կարևոր փոփոխություններից պետք է նշել զինվորական նախարարի 1920 թ. հոկտեմբերի 16-ի հրամանով հայկական բանակի 11-րդ հետևակային գնդի կազմավորումը, որը բաղկացած էր 2 գումարտակից, և առանձին հետևակային գումարտակի վերակազմավորումը գնդի, որի հետևանքով ստեղծվեց հայկական բանակի նաև 12-րդ գունդը՝ բաղկացած երկու հետևակային գումարտակներից[74]:

Հայկական բանակի յուրքանչյուր գունդ ուներ իր գնդային քահանան. 1918 թ. նոյեմբերի 11-ին կազմված գնդային քահանաների մասին հրահանգի համաձայն, հայկական բանակի յուրաքանչյուր գնդային քահանա պարտավոր էր ունենալ մատյան, որի մեջ ցուցակագրելու էր գնդի զինվորներին, ցույց տալով նրանց տեղը, ով լինելը, ընտանիքի անդամների թիվը, անունները և բնակության վայրը: Գնդի անձնակազմի բոլոր անդամները համարվում էին զինվորական քահանայի ծխականներ, ուստի քահանան պարտավոր էր ունենալ նաև չափաբերական մատյան՝ արձանագրելու կատարված պսակները, ծնունդները ու թաղումները: Գնդային քահանան ամեն օր, որոշակի ժամերի, լինելու էր իր գնդի զինվորների մոտ, իսկ եթե գունդը տեղավորված էր մաս-մաս՝ զանազան վայրերում, պարտավոր էր շարունակ այցելել նրանց: Գնդային քահանան պարտավոր էր իր գնդի հրամանատարի որոշած հատուկ ժամերին դասախոսել զինվորների համար Սուրբ գրքից և ազգային եկեղեցու պատմությունից՝ նպատակ ունենալով վառ պահել նրանց ազգային պարտքի գիտակցությունը, սերը դեպի ազգը և ազգային սրբությունները: Գնդային քահանան պարտավոր էր զինվորներին սովորեցնել «Հայր մեր» աղոթքը և երգել տալ առավոտյան արթնանալուց հետո, ճաշին և քնելուց առաջ, իսկ կիրակի և տոն օրերին նրանց տանել այն եկեղեցին,

---

74 Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 142, թ. 184:

ուր ինքը հաճախում է։ Սուրբ պատարագ մատուցելը թույլատրվում էր միայն եկեղեցիներում։ Գնդային քահանաները ամեն տեղ՝ թե՛ քաղաքներում և թե՛ գյուղերում, ուր մնում էր գունդը, ինչպես նաև թե՛ ճանապարհին, երբ զորքը շարժվում էր, և թե՛ պատերազմի դաշտում պարտավոր էին լինել հոգևորականի սքեմով և առանց զենքի։ Յուրաքանչյուր ամիս գնդային քահանան պարտավոր էր գրավոր զեկուցում ներկայացնել թեմական իշխանությանը՝ իր գործունեության մասին[75]։

Արխիվային փաստաթղթերը ցույց են տալիս, որ 1918—1920 թթ. ժամանակաշրջանում հայկական բանակի թվաքանակը կրել է որոշակի փոփոխություններ։ Այսպես, օրինակ, ըստ Հանրապետության զինվորական առաջին նախարար գեներալ Հովհաննես Հախվերդյանի հուշերի, 1918 թ. աշնանը հայկական դիվիզիայի ստորաբաժանումներում, վարչություններում և զինվորական հիմնարկություններում կար շուրջ 16 հազար մարդ[76]։

Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարության զինվորական շտաբի գրասենյակի պետ գեներալ-մայոր Զինկիևիչի տվյալներով, 1919 թ. հունվարի 16-ի դրությամբ, հայկական բանակի զորամասերում, ստորաբաժանումներում և հիմնարկություններում ծառայության մեջ կար ընդամենը 15.878 զինվոր և սպա, որից 295 ավագ ենթասպա, 1168 կրտսեր ենթասպա, 1201 եֆրեյտոր և 13.214 շարքային զինվոր[77]։

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի թվակազմի վերաբերյալ հավաստի տվյալներ կան նաև Հայաստանի Հանրապետության՝ զինվորական 2-րդ նախարար գեներալ-մայոր Քրիստափոր Արարատյանի 1919 թ. վերջին կազմած մի փաստաթղթում, որի համաձայն, հայկական բանակի թվաքանակը կազմում է 30.000 մարդ[78]։

Նույն թվաքանակն է նշվում նաև Կովկասյան ռազմաճակատի պատմությունն ուսումնասիրած ռուս գեներալ Ա. Պ. Կուլեբյակինը, որը քաջածանոթ էր ոչ միայն Հայաստանի Հանրապետության բանակի կառուցվածքին, այլև հստակ պատկերացում ուներ Հայաստանի առջև ծառացած ռազմական շինարարության խնդիրների մասին։ Համաձայն

---

75 Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 513, թ. 18։

76 Տե՛ս նույն տեղում, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 122։

77 Տե՛ս նույն տեղում, թ. 2։

78 Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 254, թ. 90։

նրա «Հայկական բանակը և նրա խնդիրները» վերնագրով հուշագրությունների, 1919 թ. հոկտեմբերի 26-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ընդհանուր թվակազմը հասնում էր մոտ 30.000-ի, որից գործող բանակում հաշվվում էր մոտավորապես 20.000 սվին և սուր[79]։

Հայաստանի Հանրապետության զեկավար շրջաններին մոտ կանգնած և պաշտոնի բերումով բոլոր անցուդարձերին քաջատեղյակ Հակոբ Տեր-Հակոբյանի տվյալներով 1920 թ. հոկտեմբերին Հայաստանի Հանրապետության բանակի ընդհանուր թվաքանակը հասնում էր 55.000-ի[80]։

Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ և Հայաստանի խորհրդարանի պատգամավոր Կարո Սասունու տվյալներով 1920 թ. հայ-թուրքական պատերազմի նախօրյակին հայկական զինված ուժերի ընդհանուր թիվը կազմում էր 35.000 մարդ[81]։

Հայ ժողովրդի պատմության ԳԱԱ հրատարակած ուսհատորյակի և «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը» 3-րդ լրացուցիչ հրատարակության հանրագիտարանի մեջ հայկական բանակի թվաքանակի մասին նշված է, որ Հայաստանի առաջին հանրապետությունը 1920 թ. աշնանը ուներ 40.000-անոց բանակ[82]։

Նույն թվական տվյալներն է պարունակում նաև Հայաստանի Հանրապետության հաջորդ՝ զինվորական 3-րդ նախարար Ռուբեն Տեր-Մինասյանի կողմից 1920 թ. նոյեմբերի սկզբին կազմված տեղեկագիրը. «Հայաստանն ունի 4 ճակատ, բոլորն էլ պատերազմական վիճակում՝ Կարս—Ալեքսանդրապոլի, Սուրմալուի, Նախիջևանի և Դիլիջան—Ղազախ,—գրում է նախարարը։—Կարս—Ալեքսանդրապոլի ճակատում կանգնած են հետևյալ զորամասերը. խոսքը վերաբերում է կանոնավոր զորքերին և, հատկապես, հետիոտն զորքերին։ Այդտեղ են՝ 1-ին գունդը (Մազմանյան)—1500 սվին, 4-րդ գունդը՝ (Միրիմանյան)—2000 սվին, 5-րդ գունդը (Շաղուբաղյան)—700 սվին, 6-րդ գնդի մի բատա-

---

79 Տե՛ս նույն տեղում, ֆ. 196, ց. 1, գ. 12, թ. 63-70։

80 Տե՛ս Հակոբ Տեր-Հակոբյան, Հայաստանի վերջին ազատը, Կ. Պոլիս, 1921, էջ 88։

81 Տե՛ս Կ. Սասունի, Հայ-թուրքական պատերազմը, «Հայրենիք» ամս., Բոստոն, 1926, № 11—12, էջ 112։

82 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1967, հ. 7, էջ 52, նաև՝ Великая октябрьская социалистическая революция. Энциклопедия, Москва, 1987, стр. 45.

լիոն—700 սվին, 7-րդ գնդի մի բատալիոն (Իշխանյան Գնդունի)—800 սվին և 8-րդ գունդը (Տիգրան Բաղդասարյան)—1500 սվին։ Ընդամենը՝ 7200 սվին։ Բացի դրանից կան նաև Սմբատի խմբերը։

Սուրմալուի ճակատում (Դրոյի մոտ) կան՝ 9-րդ գունդը—2000 սվին, 8-րդ գունդը (մի բատալիոն)—1000 սվին և 7-րդ գունդը (մի բատալիոն)—700 սվին, Ղարաբաղի առանձին զորամասը (Կուռո)—800 սվին։ Ընդամենը՝ 4500 սվին և փոքրիկ հզդիական զորամաս։

Նախիջևանի ուղղությամբ կանգնած են 3-րդ գունդը—2000 սվին, 2-րդ գունդը (2 բատալիոն)—1000 սվին։ Ընդամենը՝ 3000 սվին։

Դիլիջան—Ղազախի ճակատում գտնվում է 6-րդ գունդը (Մանիևի)—2000 սվին։ Այս թվերի մեջ չեն մտնում հեծելազորը, հրետանին և հատուկ նպատակ ունեցող մասերը, ինչպես սապյորներն են ու հեռադրական ջոկատները։

Այսպիսով, բոլոր չորս ուղղությունների վրա մենք ունենք ընդամենը 16.700 սվին, բացի դրանից Զանգեզուրում գտնվում է 800 սվին, ուրեմն, վերոհիշյալների հետ 17.500 սվին։

Երևանում պահեստում մնում է 10-րդ ջոկատը (Հալապյանի)—1500 սվին, ընդամենը, ուրեմն՝ 19.000 սվին։

Ընդունելով և մյուս տեսակի զենքերը՝ 6000 հոգի—ուրեմն գործող բանակում կանոնավոր մարտական ուժեր կան 25.000 հոգի։

Ավելացնելով դրանց նաև թիկունքում ծառայողներին, բեռնակիրներին, կառապաններին, սպայակույտը, առողջապահական սպասավորներին—ընդհանուր թվի 30 տոկոսը, կստանանք բանակի ամբողջ կազմը 34000 հոգի, խմբերի հետ միասին—մոտ 40.000 հոգի»[83]։

Այսպիսով, 1918—1920 թթ. ընթացքում հայկական պետականության ստեղծման հետ միաժամանակ կազմակերպվեցին նաև նրա զինված ուժերը։ Հայկական բանակային կորպուսի վերակազմավորման հետևանքով ստեղծվեց հայկական մեկ առանձին դիվիզիա։ Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի պարտվելուց հետո, 1919 թ. հունվարից Հայաստանի Հանրապետության կառավարությունը կտրուկ ավելացրեց իր բանակի թվաքանակը։ Հայկական Առանձին դիվիզիայի փոխարեն ստեղծվեց երեք առանձին բրիգադներից կազմված մի բանակ, որի թվակազմը 1919—1920 թթ. մշտապես աճում էր։

---

83 Սիմոն Վրացյան, *Հայաստանի Հանրապետություն*, Թեհրան, 1982, էջ 484—485։

Եթե 1918 թ. վերջին հայկական դիվիզիայի շարքերում ծառայում էին մոտ 16.000, 1919 թ. աշնան վերջին 30.000 մարդ, ապա 1920 թ. նոյեմբերի սկզբին Հայաստանի Հանրապետության բանակի թվաքանակը, ներառյալ կամավորական-պարտիզանական, միլիցիոներական ու թիկունքային ծառայողները, հասնում էր 40.000-ի:

Հայաստանի առաջին հանրապետության բանակի կազմավորման, համալրման, մարտական պատրաստականության և այլ հարցերի մասին տեղեկություններ է պարունակում նաև արտաահմանյան մամուլը: Հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում մասնավորապես Փարիզում հայերեն լեզվով հրատարակվող «Հայաստան» ամսագիրը: Այդ հարցին անդրադարձել են նաև ֆրանսիական բանակի կապիտան Պուադեբարը և անգլիական հետազոտողները Ալլենը և Մուրատովը:

Քրիստափոր Արարատյան, գեներալ-մայոր, Հայաստանի Հանրապետության զինվորական նախարար (1919 թ. մարտ—1920 թ. ապրիլ)

Ռուբեն Տեր Մինասյան, Հայաստանի Հանրապետության զինվորական նախարար
(1920 թ. ապրիլ—նոյեմբեր)

Դրաստամատ Կանայան (Դրո), Հայաստանի Հանրապետության զինվորական նախարար (1920 թ. նոյեմբեր—դեկտեմբեր)

Թովմաս Նազարբեկյան, գեներալ-լեյտենանտ, Հայաստանի Հանրապետության զորքերի գլխավոր հրամանատար

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱԼՐՈՒՄԸ: ԲԱՆԱԿԻ ՍՊԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԸ

*1918 թ. մինչև 1920 թ. մայիսը, Հայաստանի Հանրապետության բանակի սպառազինումը տեղի էր ունենում հիմնականում ռուսական նախկին Կովկասյան բանակի կողմից Հայաստանի տարածքում թողնված զենքի և զինամթերքի հաշվին:*

*Հետևակի հիմնական զենքը՝ ռուսական 1890 թ. տիպի 7,62 մմ-ոց «Մոսին» համակարգի եռագիծ հրացաններն էին: Բացի դրանից սպառազինության մեջ կային նաև «Լեբելի» և 1883 տիպի, ժամանակի համար արդեն հնացած, «Բերդանկա» համակարգի հրացաններ: Գնդացիրներից բանակի սպառազինության մեջ էին «Մաքսիմ», «Կոլտ», «Լյուիս», ինչպես նաև, ոչ մեծ քանակությամբ, այլ համակարգի գնդացիրներ: Հայկական բանակի հրետանին բաղկացած էր հիմնականում մարտում հետևակազորին աջակցելու համար նախատեսված 3 դյույմանոց թեթև և լեռնային թնդանոթներից, ինչպես նաև ռուսական մակնիշի 48 մմ-ոց հաուբիցներից: Բանակի սպառազինության մեջ էին գտնվում նաև սառը զինատեսակները, ինչպիսիք էին՝ սվինները, սրերը և խանչալները[1]: Բանակի հանդերձանքը ևս ռուսական արտադրության էր:*

*Ավիաջոկատը, որի տրամադրության տակ կային ռուսական բանակից մնացած ինքնաթիռներ, կազմավորվել էր 1918 թ. օգոստոսի վերջին՝ հայկական կորպուսի 3-րդ կովկասյան ավիաջոկատի հիման վրա: Նրա առաջին հրամանատարն էր նշանակվել օդաչու պորուչիկ Վոյիպովը:*

---

1 *Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 204, ց. 1, դ. 41, թ. 5:*

1819 թ. մարտին, Կարսը Հայաստանին վերադարձվելուց հետո, այդտեղ ավարտվեցին նոր հայկական ավիաջոկատի կազմավորման աշխատանքները։ Կարճ ժամանակամիջոցում (մինչև 1919 թ. հոկտեմբեր) այստեղ կարգավորվեցին պահեստները և օդանավարանները, կարգի բերվեցին թռիչքադաշտը և ինքնաթիռների նորոգման ու հավաքման արհեստանոցները։ Հայկական ավիաջոկատը հիմնականում համալրված էր «Վուազեն», «Մորան» և «Նյուպորտ» մակնիշի ինքնաթիռներով, որոնց քանակը, անսարքների հետ միասին, հասնում էր 8-ի։ Սակայն Հայաստանում ավիապահեստամասերի բացակայության պատճառով, ինքնաթիռների զգալի մասը մշտապես անսարք վիճակում էր։ 1919 թ. վերջին ավիաջոկատում թռիչքի համար պիտանի էին միայն մեկ «Մորան» և մեկ «Նյուպորտ» մակնիշի ինքնաթիռներ[2]։

Ավիաջոկատը նոր ինքնաթիռներով համալրելու նպատակով Ֆրանսիա գործուղվեց կապիտան Գուլյանը, որը Հայաստանի կառավարության առաջադրանքով Մարսելում գնեց Salmson A2A մակնիշի երկու ինքնաթիռ։ Այդ ինքնաթիռները պետք է օգտագործվեին ռմբակոծման և հետախուզական նպատակներով և ունեին ժամում 200 կմ արագություն[3]։

1919 թ. փետրվարի 28-ի դրությամբ հայկական ավիաջոկատի անձնակազմում, հրամանատարից բացի, կար 5 զինվորական օդաչու, մեկ դիտորդ, մեկ ավիամեխանիկ-հրահանգիչ, երեք շարժիչագործ (մոտորիստ), վեց շարժիչագործի օգնական, երկու ավտովարորդ, 10 ավտովարորդի օգնական և 10 վարպետ[4]։

Ավիաջոկատը մասնակցել էր զանազան մարտական գործողությունների, որի ընթացքում թշնամու վրա կատարել էր 30 ռմբահետում[5]։

Սևանա լճի նավատորմիկը, որը զբաղվում էր ուղևորների և ռազմաբեռների փոխադրմամբ, սկզբում բաղկացած էր շարժիչներով սարքավորված մի քանի թիանավերից և «Աշոտ Երկաթ» մինչև 1000 փութ բեռնատարողությամբ ռազմաբեռնատար երկկայմ առագաստանավից։ Վերջինիս վրա տեղադրված էր մեկ թնդանոթ, երկու գնդացիր և լու-

---

2 Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 79, թ. 46—52։

3 Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 442, 165։

4 Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 35, թ. 53։

5 Տե՛ս նույն տեղում, գ. 142, թ. 186։

սարձակ[6]։ Սևանի նավատորմիկը համալրելու նպատակով 1920 թ. սեպտեմբերին Շարուրից Երևանի միջով Ելենովկա փոխադրվեց ռուսական բանակից մնացած (նախատեսվում էր այն ուղարկել Վան) «Սեստրիցա Նյուշա» նավը[7], որը վերանվանվեց «Գեղանուշ»։ Սևանա լճի նավատորմիկի անմիջական կազմակերպիչն էր ծովակալության սպա Թումանյանը։ Նրանից բացի, նավատորմիկի ձևավորման գործում մեծ ներդրում ունեցան նաև Հայաստանի Հանրապետության խորհրդարանի անդամ Տիգրան Ծամհուրը (նրան կոչել են նաև ծովակալ Սեյմուր), ծովակալության սպաներ՝ Գարագաշյանը, Հերյանը և Կոստան Զարյանը[8]։

Զինվորական նախարարության կատարած աշխատանքի մասին տեղեկագրից իմանում ենք, որ միայն 1920 թ. մայիսի 1-ից մինչև օգոստոսի 1-ը ընկած ժամանակահատվածում Սևանի լճային նավատորմիկը կատարել է 76 հածում, անցնելով 6448 վերստ տարածություն։ Այդ ընթացքում նրա միջոցով փոխադրվել է 342 մարդ և 12.796 փութ բեռ, որից՝ 9298 փութը համբարակային, 1396 փութը՝ հրետանային բեռներ[9]։

1920 թ. մայիսից Հայաստանի Հանրապետության բանակի սպառազինության և հանդերձավորման կարիքները բավարարվում էին դաշնակից տերությունների, մասնավորապես Անգլիայի կառավարության առաքումների հաշվին։ 1920 թ. հուլիսի 25-ին Փոթիի նավահանգիստ է ժամանում անգլիական մի նավ, որը հայկական բանակի համար բերել էր 25 հազար «Բոշ» համակարգի հրացան, 400 թեթև «Մաքսիմ» համակարգի գնդացիր, 58.000.000 «Վիկերս» կարգի փամփուշտ, 40.000 լրակազմ համազգեստ, 500 հեռադիտակ, ինչպես նաև մեծ քանակությամբ դեղորայք և վիրաբուժական գործիքներ[10]։ Անգլիայից ռազմական բեռները հասցվում էին Վրաստանի Փոթիի կամ Բաթումի նավահանգիստները, իսկ այնտեղից երկաթուղով փոխադրը-

---

6 Տե՛ս նույն տեղում, ֆ. 276, ց. 1, գ. 79, թ. 52։

7 Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 190, թ. 117։

8 Տե՛ս Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 435, Տե՛ս նաև նույնի, Կյանքի ուղիներով, Գահիրե, 1955, հ. Ա, էջ 223։

9 Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 142, թ. 136։

10 Տե՛ս Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 1960, էջ 359։

վում Երևան։ Սակայն այդ բեռների միայն մի մասն էր հասնում Հայաստան, քանի որ Վրաստանի կառավարությունը, որպես փոխադրավարձ, մշտապես բռնագրավում էր այդ զենքի և զինամթերքի 25 տոկոսը, դրանով իսկ մեծ վնաս պատճառելով հայկական բանակի սպառազինությանը և մարտունակությանը[11]։

Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարության կատարած աշխատանքների մասին կազմված համառոտ տեղեկագրից իմանում ենք, որ 1920 թ. մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածում Անգլիայից ստացվել և հայկական բանակի զորամասերին ու ստորաբաժանումներին է բաժանվել 29.000 լրակազմ հագուստեղեն (վերարկուներ, բաճկոններ, անդրավարտիքներ, գլխարկներ, կոշիկներ, փաթաթաններ, գուլպաներ) և զինասարք (հրերի տոպրակներ, փամփշտակալներ, գոտիներ, ջրամաններ և կաթսայիկներ)[12], ինչպես նաև 25.000 միավոր հրաղեն[13]։ Հայաստանի վարչապետ Ալեքսանդր Խատիսյանի տվյալներով, զենքով և հանդերձանքով հայկական բանակին Անգլիայի ցուցաբերած օգնության ընդհանուր գումարը 1920 թ. կազմել է 1.200000 անգլիական ֆունտ ստեռլինգ[14]։

Հայաստանի բանակին զինամթերքով և հանդերձանքով ապահովելու գործը զգալի չափով կատարվում էր նաև զինվորական նախարարության համբարակային վարչության ենթակայության տակ գտնվող ռազմական արհեստանոցների և գործարանների միջոցով, ներմուծված և տեղական հումքի հաշվին։ Եվ, ինչպես ցույց են տալիս արխիվային տվյալները, այդ ուղղությամբ կային լուրջ ձեռքբերումներ։

Այսպես, օրինակ, մինչև 1920 թ. օգոստոսի 1-ը Երևանի և Կարսի ճարտարագիտական արհեստանոցներում բանակի համար պատրաստվել են 2896 տարբեր տեսակի տարաներ, 17.000 սուր, 3500 թոխրեր 470 լինգ, 45 սեղան, 190 աթոռ, 25.225 ամրաշինության գործիքներ և 17 պահարան։ Նույն ժամանակահատվածում այդ արհեստանոցներում հավաքվել և պահեստավորվել է 743 փութ զինամիտ, 3971 փութ

---

11 Տե՛ս ՀՀՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 498, թ. 76։

12 Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 142, թ. 186։

13 Տե՛ս Հ. Տեր-Հակոբյան, նշվ. աշխ., էջ 86։

14 Տե՛ս Ա. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 183։

պիրոքսիլին (պայթուցիկ նյութ), 17. 600 շրջանակ բիկֆորդյան քուղ, 150.000 ճաթռուկ և ձեռքի ու այլ ռումբերի համար նախատեսված 73680 պայթուցիչներ։

Նույն ժամանակամիջոցում համբարակային վարչության Ալեքսանդրապոլի և Կարսի հանդերձակարի արհեստանոցներում կարվել է 6371 անդրավարտիք, վերանորոգվել են 795 անգլիական բաճկոններ, 3770 գլխարկ, 10.250 շապիկ և 9665 վարտիք։ Բացի դրանից, Երևանի կապալառուների միջոցով բանակի համար ձեռք է բերվել 6598 անդրավարտիք, 8085 շապիկ և նույնքան վարտիք, 2821 ներքնակի երես, 3461 հատ բարձի երես, 16462 արշին կտավ, 26387 արշին տեղական գործվածք, 103492 արշին գործարանային կտավ և գործված մահուդ։

Ալեքսանդրապոլի կոշիկի և սայլաքարշային արհեստանոցներում կարվել է 2994 զույգ կոշիկ, վերանորոգվել է զորամասերից ստացված 4275 զույգ կոշիկ, պատրաստվել է 350 ձիաթամբ, 4030 զոտի։ Այդտեղ են վերանորոգվել նաև ռուսական բանակի կողմից հանրապետության տարբեր վայրերում թողնված մեծ քանակությամբ երկձի, երկանիվ սայլեր և շարժական խոհանոցներ, ինչպես նաև այլ զինասարք[15]։

Հայաստանի Հանրապետությունում զինամթերքի խիստ զգացվող պակասը լրացնելու համար փամփուշտներ էին արտադրվում Քանաքեռի 75 և Ալեքսանդրապոլի 35 ձիաուժ հզորությամբ փամփուշտի մեխանիկական գործարաններում[16]։

Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարության գործունեության մասին կազմված վերոհիշյալ համառոտ տեղեկագրից իմանում ենք, որ 1920 թ. մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածում Քանաքեռի փամփուշտի գործարանում արտադրվել է 296.000, իսկ Ալեքսանդրապոլի համապատասխան ձեռնարկությունում՝ 492.000 հատ փամփուշտ[17]։

Վերոհիշյալ ժամանակահատվածում հայկական բանակի սպառազինման կարիքները բավարարվում էին նաև Հայաստանի մյուս դաշնակցի՝ գեներալ Դենիկինի Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի հաշվին, որի հետ կապը հաստատվել էր 1918 թ. նոյեմ-

---

15 Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 142, թ. 184—190։

16 1920 թ. հոկտեմբերի 20-ի դրությամբ Քանաքեռի փամփուշտի գործարանում աշխատում էր ընդամենը 171, իսկ Ալեքսանդրապոլի՝ 175 բանվոր։

17 Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 142, թ. 189։

բերից, երբ որպես Հայաստանի Հանրապետության կառավարությանը առընթեր այդ բանակի ռազմական ներկայացուցիչ նշանակվեց սկզբում գնդապետ Լեսլին, ապա՝ գնդապետ Զինկևիչը[18]։ Ինչպես մատնանշում է զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը, 1920 թ. մայիս-հունիս ամիսների ընթացքում, երբ գրեթե սպառված էին հայկական բանակի փամփուշտի պաշարները, Դենիկինի բանակից ստացվում է ռուսական «Մոսին» հրացանի մոտ 3.000.000 փամփուշտ։ «Եթե այդ ռազմամթերքը չհասներ, իրոք Հայաստանը զինաթափ կարելի էր համարել այդ թվականներին,—գրում է Ռ. Տեր-Մինասյանը։—Այդ փամփուշտները փրկեցին մեզ և միջոց տվին հետագա կռիվները առաջ տանելու»[19]։

Հայկական բանակը զինամթերքով օգնություն ստացավ նաև գեներալ Դենիկինից հետո Կամավորական բանակի գլխավոր հրամանատարությունը ստանձնած գեներալ Վրանգելից։ Մասնավորապես 1920 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին գաղտնի՝ անկողնային պիտույքների տեսքով, Մերձավոր Արևելքի ամերիկյան Near East Relief օգնության կոմիտեի միջոցով, Ղրիմից, գնացքով, Վրաստանով Ալեքսանդրապոլ հասցվեցին հրետանային թեթև արկեր և ութ վագոն փամփուշտ[20]։

Իհարկե, Կամավորական բանակի հրամանատարությունը այդ բոլորը անում էր ոչ անհատույց։ 1920 թ. մարտի 7-ին, Հայաստանի կառավարության հետ բանակցություններ վարելու նպատակով, Հյուսիսային Կովկասից Երևան էր ժամանել Դոնի, Կուբանի և Թերեքի միացյալ պատվիրակությունը։ Մարտի 8-ին տեղի են ունենում պատվիրակության բանակցությունները Հայաստանի կառավարության հետ, որը ներկայացնում էր վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը։

Բանակցությունների ժամանակ միացյալ պատվիրակության կողմից առաջ են քաշվում բոլշևիկյան Ռուսաստանի դեմ հայկական զինված ուժերի օգտագործման, Հայաստանի տարածքում Կամավորական բանակի համար հայկական զորամասեր կազմավորելու, ինչպես նաև Խորհրդային Ռուսաստանի կարմիր բանակի առաջխաղացման դեպ-

---

18 Տ'ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 164, թ. 54։

19 Ռուբեն Տեր-Մինասյան, Հայ հեղափոխականի մը հիշատակները, Երևան, 1990, էջ 261։

20 Տե՛ս С. И. Кузнецова, Крах турецкой интервенции в Закавказье 1920—1921 гг., Вопросы истории, № 9, 1951, стр. 145.

քում կամավորական զորամասերին Հայաստանում ապաստան տրամադրելու հարցերը։ Այդ բոլորից բացի, զինամթերքի փոխարեն Հայաստանը Կամավորական բանակին տրամադրում էր գինի, սպիրտ, բամբակ, աղ, ածուխ և այլ ապրանքատեսակներ[21]։

Հայկական բանակը օգնություն էր ստանում նաև Հունաստանից։ 1920 թ. օգոստոսին Բաթում է ժամանում հունական «Էլեֆթերիա» (Ազատություն) շոգենավը, որը հայկական բանակի համար բերել էր 10.000 հրացան, 4 միլիոն փամփուշտ և 47 հայ կամավոր[22]։ Բացի այդ, հունական բանակի գլխավոր հրամանատար Փարսքէվոփուլոսը Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարին էր ուղարկել 50 հատ «Հելլեն» պատերազմական խաչեր՝ մարտերում առավել աչքի ընկած քաջարի հայ ռազմիկներին, սպաներին ու գեներալներին պարգևատրելու համար[23]։

Հայաստանի Հանրապետության բանակին նյութական օգնություն ցուցաբերելու գործին ակտիվ մասնակցություն ունեցան նաև սփյուռքահայերը։ Նրանք իրենց համայնքներում հայկական բանակի օգտին կազմակերպում էին զրամական հանգանակություններ, հավաքում և Հայաստան էին ուղարկում զենք և պարենամթերք։ Այսպես, 1919 թ. մարտին Եթիոպիայի (Հաբեշստան) մայրաքաղաք Ադիս-Աբեբայում ապրող փոքրաքանակ հայկական դաղթօջախի կողմից հանգանակվել և Փարիզի խաղաղության խորհրդաժողովում Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանին էր ուղարկվել 11.640 ֆրանսիական ֆրանկ[24]։ Դրամական հանգանակություններ էին ձեռնարկել նաև Հարարե և Ջիբուտի քաղաքներում ապրող հայերը։ Կ. Պոլսի հայկական բանակի նվիրահավաք կենտրոնի կողմից Ալեքսանդր Խատիսյանին էր տրամադրվել 66183 ռուսական ռուբլի և 21000 ռումինական լեյ, որը հավաքել էր Ռումինիայի Կոստանցա քաղաքի դաղթօջախի Հայկական միությունը[25]։

1920 թ. Կ. Պոլսում լույս տեսնող «Ճակատամարտ» և «Վերջին լուր» թերթերի նախաձեռնությամբ հայկական բանակի համար կազմա-

---

21 Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 33, թ. 8—10, նույն տեղում, գ. 442, թ. 157—158։

22 Նույն տեղում, գ. 442 (2-րդ մաս), թ. 378։

23 Տե՛ս նույն տեղում, թ. 339։

24 Տե՛ս «Վերածնունդ», ամսագիր, Փարիզ, 1919, № 39—40, էջ 638։

25 Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 248, թ. 142—146։

կերպված հանգանակության շնորհիվ հավաքվել էր 20.000 ռուբի[26]։ Հայկական Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբար փաշան հայկական բանակի համար սեփական միջոցներով գնեց մեկ սավառնակ[27]։

1920 թ. մայիսին Կ. Պոլսի և Լոնդոնի հայկական կոմիտեներից Հայաստանի բանակի համար ստացվում է 5.150 ձեռք սպիտակեղեն, 9.808 գործարանային կտավ, 207 զինվորական վերարկու, 35 հատ մահուդի անդրավարտիք և 31 հատ բաճկոն[28]։

1920 թ. մայիսի 23-ին Նյու Յորքի հայկական բանակի հանգանակության հանձնախումբը «Կոռնեգի հոլլ» դահլիճում հրավիրեց հրապարակային ժողով, որտեղ հավաքվեց մեծ գումար։ Այդ ժողովին մասնակցում էր Հայաստանի Հանրապետության զորավար Հակոբ Բագրատունու գլխավորած միացյալ պատվիրակությունը, որի կազմի մեջ էին մտնում Ամենայն հայոց կաթողիկոսի պատվիրակ սրբազան Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանը, Ամերիկայում Հայաստանի Հանրապետության դեսպան դոկտոր Գարեգին Բաստրմաջյանը և ազգային-քաղաքական գործիչ Շահան Նաթալին[29]։ Հայկական բանակի Նյու Յորքի հանգանակության հանձնախմբի կողմից հրատարակվում էր «Բանակին համար» թերթը, որտեղ տեղեկություններ էին տրվում Հայաստանի ռազմաքաղաքական կյանքից և կոչեր էին հրապարակվում հանրապետության բանակին նյութական օգնություն ցուցաբերելու վերաբերյալ։

Ամերիկահայությանն ուղղված այդ կոչերից մեկում ասված էր. «Օգնենք մեր քաջարի բանակին և թող ազատության երկրորդ տարեդարձին թնդա մեր բանակի հաղթական ուռռան մեր բարձրաբերձ սարերում, և թող թշնամին սարսափած դառնա ընտանի և քաղաքակիրթ։

Մեր նյութական աջակցության հետ միասին նաև թող հնչե մեր գաղութի սրտագին կոչը.

Կեցցէ Հայկական բանակը...
Կեցցէ Ազատ Հայաստանը...»[30]։

---

26 Տե՛ս Հ. Տեր-Հակոբյան, նշվ. աշխ., էջ 74։
27 Տե՛ս «Վերածնունդ» ամսագիր, Փարիզ, 1919, № 20—37, էջ 581։
28 Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 142, թ. 186։
29 «Բանակին համար», տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 290, ց. 1, գ. 28, թ. 1—2։
30 ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 290, ց. 1, գ. 28, թ. 1—2։ Տե՛ս Հավելված, թիվ 2։

1920 թ. ամռանը Հայ հեղափոխական Դաշնակցություն կուսակցության կողմից բանակի օգտին ԱՄՆ-ում կազմակերպած հանգանակությունից հավաքվում է ավելի քան կես միլիոն ամերիկյան դոլլար, Երևան է հասցվում մեծ քանակությամբ պաքսիմատ և պահածո[31]։

Հանրապետության բանակը պարենամթերքով ապահովելու ուղղությամբ զգալի աշխատանք էր կատարում զինվորական նախարարության համբարակային վարչությունը։ Նրա միջոցով 1920 թ. մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 20-ը ընկած ժամանակաընթացքում, տեղական միջոցների հաշվին, բանակի համար պատրաստվեց 600 փութ աղ դրած ձուկ, 200 փութ տոմատ, 110 փութ թեյ, 33 փութ ծխախոտ, 71.800 հատ գլանակ։ Ջալալօղլու պետական բանջարանոցից հավաքվել էր 25.000 փութ կարտոֆիլ, Վանանդի նահանգում մթերվել էր 20.000 փութ գարի և 1.000.000 փութ խոտ։ Բացի դրանից, ձեռք բերվեց մոտ 5.000 փութ Սևանի թարմ ձուկ, 30.000 փութ հացահատիկ, 3000 փութ աղ, 30 փութ պղպեղ, 52 փութ ծխախոտ և 300 փութ դանաղան նպարեղեն։ Մասնավոր ջրաղացներում աղացվեց մոտ 6000 փութ հացահատիկ, Շարուրի շրջանի լեռնային մասում հնձվել էր մեծ քանակությամբ ցորեն, որի շնորհիվ կուտակվել էր մոտ 70.000 փութ հացահատիկ։ Բանակի համար մսի ձեռքբերումը կատարվում էր զորամասերի համար համբարակությանը տրված կառավարության կանխավճարներով։ Համբարակության այդ բոլոր հայթայթումները կատարվում էին թե՛ կապալառուական և թե՛ տնտեսական միջոցներով՝ մասամբ համբարակային վարչության, մասամբ էլ իրենց՝ զորամասերի միջոցով։ Այդ նպատակների համար տարբեր ժամկետներում համբարակության պաշտոնյաներին բաց էր թողնվել 465 միլիոն ռուբլի կանխավճար[32]։

* * *

Հայաստանի Հանրապետության բանակի կանոնավոր զորամասերը և ստորաբաժանումները համալրվում էին Հայաստանի խորհրդարանի կամ կառավարության կողմից ընդունված օրենքների ու որոշումների հիման վրա։

Համաձայն կառավարության 1919 թ. հուլիսի 1-ին ընդունված «Ազգարնակչության վիճակագրության, դինապարտների հաշվառման

---

31 Տե՛ս Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 423։

32 Տե՛ս ՀՀՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 142, թ. 187։

ու զորակոչի մասին» օրենքի, հանրապետության բանակում Հայաստանի քաղաքացիների զինվորական ծառայության ընդհանուր ժամկետը սահմանվում էր 18 տարի, որից 3 տարին՝ որպես իսկական զինվորական ծառայություն, իսկ 15 տարին՝ որպես պահեստազորային։ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները իսկական զինվորական ծառայության էին զորակոչվում 18 տարեկան հասակում[33]։

Բարձրագույն ռազմական հաստատություններում սովորող ուսանողները բանակ էին զորակոչվում 20 տարեկան հասակում, իսկ միջնակարգ դպրոցի աշակերտները զորակոչի էին ենթակա միայն դպրոցն ավարտելուց հետո։ Թե՛ առաջինների և թե՛ վերջինների համար բանակում ծառայության ընդհանուր ժամկետը նույնպես սահմանված էր 18 տարի, որից 9 ամիսը՝ որպես իսկական ծառայություն, իսկ 17 տարի և 3 ամիսը՝ որպես պահեստազորայիններ։

Նույն օրենքով սահմանվում էր նաև Հայաստանի արական սեռի 16-ից 43 տարեկան բոլոր քաղաքացիների պարտադիր ծառայության զինվորական հաշվառում։ Արտոնություններ տրվում էին անաշխատունակ ծնողներ ունեցող ընտանիքի միակ կերակրողին[34]։

Զորակոչի ենթակա չէին նաև փոստ-հեռագրատան հիմնարկությունների ծառայողները, երկաթգծի, միլիցիայի, դատական մարմինների աշխատակիցները, ինչպես նաև գավառային և թաղային կոմիսարներն ու նրանց օգնականները[35]։

Հայաստանի տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները (մահմեդականներ, ռուսներ, լեհեր, ուկրաինացիներ, հույներ և այլն) զինվորական ծառայության չէին զորակոչվում։ Սկզբնական շրջանում, նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության սահմանների անորոշությունը և հպատակության վերաբերյալ օրենքի բացակայությունը, բանակ զորակոչվելու ենթակա չէին նաև թուրքահպատակ և պարսկահպատակ հայերը։ 1919 թ. հուլիսի 18-ին Գլխավոր զինվորական շտաբի զորահավաքային վարչության պետ, գնդապետ Մակկավեևի կողմից այս հարցը առաջադրվում է հանրապետության վարչապետին[36]։ Թույլատվություն է ստացվում ար-

---

33 Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 41, թ. 34։

34 Տե՛ս նույն տեղում, գ. 65, թ. 129, Տե՛ս նաև Հավելված, № 3։

35 Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 86, թ. 45։

36 Տե՛ս նույն տեղում, գ. 35, թ. 306։

մրտահայերին նույնպես զորակոչել զինվորական ծառայության։ Դրա վերաբերյալ օրենքը ընդունվում է սեպտեմբերի 9-ին[37]։

Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներից հայկական բանակի շարքերը զորակոչվում էին միայն եզդիները և ասորիները, որոնց թույլատրված էր ծառայելու կամավորական սկզբունքներով գործող իրենց ազգային զորամասերում։ Այսպես, օրինակ, գեներալ Սիլիկյանի հրամանագրից իմանում ենք, որ 1918 թ. վերջին հայկական առանձին դիվիզիայի կազմում գործել է եզդի կամավորականներից կազմավորված մի գումարտակ, որը մինչ այդ ակտիվ մասնակցություն էր ունեցել 1918 թ. թուրքերի դեմ մղված մայիսյան հերոսամարտերին։ Նրա հրամանատար Յուսուպ Բեկ Թեքմուրովը դիվիզիայի հրամանատարի 1918 թ. նոյեմբերի 7-ի թիվ 34 հրամանով պարգևատրվեց Գեորգիևյան խաչի 4-րդ աստիճանով՝ Սարդարապատի ճակատամարտում Երևանյան զորաջոկատին աջակցություն ցուցաբերելու համար[38]։ Բաթումում խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Զվերևի կողմից կազմված տեղեկագրից պարզվում է, որ 1920 թ. հոկտեմբերի 25-ի դրությամբ հայկական բանակի հեծելազորի կազմում գործում էր եզդիներից կազմված հեծյալ դիվիզիոն, որը տեղակայված էր Էջմիածնում։ Նրա կազմում կային 200 ձիավոր և երեք սպա։ Եզդիական հեծյալ դիվիզիոնի հրամանատարն էր գնդապետ Շահբաբովը։ Այդ փաստաթղթից իմանում ենք նաև, որ նույն ժամանակամիջոցում եզդիներից կազմված մեկ հեծելազորային դիվիզիոն էլ գործում էր Դրոյի հրամանատարության տակ գտնվող Սուրմալուի զորաջոկատի կազմում[39]։

1920 թ. մայիսին Ղամարլու գյուղում (այժմ՝ ք. Արտաշատ) տեղակայված էր նաև Հայաստանում բնակվող ասորիներից կազմված գումարտակը, որը մտնում էր Հայկական առաջին առանձին հետևակային բրիգադի երրորդ գնդի մեջ։ Մայիսի 29-ի տվյալներով, գումարտակը ձևավորման ընթացքում էր և նրա անձնակազմը բաղկացած էր 4 սպայից ու 66 զինվորից[40]։

Հայաստանի Հանրապետության բանակի զորամասերն ու ստորաբաժանումները համալրվում էին ըստ սահմանված հաստիքների։ Այս-

---

37 Տե՛ս նույն տեղում, գ. 86, թ. 45։

38 Նույն տեղում, ֆ. 204, ց. 1, գ. 42, թ. 145։

39 Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 486, թ. 366։

40 Նույն տեղում, գ. 568, թ. 15։

պես, օրինակ, 1918 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ յոթ մարտկոցից կազմված հրետանային բրիգադը բաղկացած էր 1519 մարդուց, որից 175-ը ոչ շարայիններ, 1093-ը շարքայիններ, 25-ը՝ դասային աստիճանավորներ և 52 սպա։ Նույն պահին լեռնային մարտկոցի անձնակազմը բաղկացած էր 44 հոգուց, որից 37-ը շարքային զինվորներ, 2-ը՝ դասային աստիճանավորներ և 5-ը սպա[41]։

Ըստ 1919 թ. ապրիլի դրությամբ գոյություն ունեցող հաստիքացուցակի, հեծելազորային բրիգադը պետք է ունենար 655 ձի, որից 604-ը հեծկան, 38-ը բեռնակիր, 13 գումակային[42]։

Սակայն իրականում հայկական բանակի ստորաբաժանումներից ոչ մեկը, մարդկանց և ձիերի անբավարար քանակության պատճառով, համալրված չէր ըստ հաստիքով նախատեսվածի։ Նույնիսկ Երևանյան զորաջոկատը, որը համարվում էր Հայաստանի Հանրապետության բանակի ամենակազմակերպված և մարտունակ զորամիավորումներից մեկը, 1919 թ. մարտի 12-ի դրությամբ ուներ անձնակազմի զգալի անլրիվակազմություն։ Այսպես, այդ զորաջոկատի կազմի մեջ մտնող 2-րդ հետևակային գունդը, որը ըստ հաստիքի բաղկացած էր 665 հոգուց, ուներ ընդամենը 482 սվին, իսկ 3-րդ հետևակային գունդը 1058 հոգու փոխարեն համալրված էր միայն 565-ով։ Մարդկանց և ձիերի անբավարար քանակության պատճառով համալրված չէին նաև այդ զորաջոկատի մեջ մտնող հեծյալ-լեռնային, թեթև 1-ին և 6-րդ լեռնային հրետանային մարտկոցները, իսկ ներքին գործերի նախարարության միլիցիոներական պահեստային գունդը, որը տվյալ շրջանում նույնպես մտնում էր Երևանյան զորաջոկատի մեջ, բաղկացած էր ընդամենը 300 հոգուց[43]։ Ձիերի խիստ անբավարար թվի պատճառով համալրված չէր նաև հայկական բանակի միակ հեծելազորային բրիգադը։ Այդ է վկայում նրա հրամանատար գեներալ-մայոր Խաչատուրովի 1919 թ. ապրիլի 25-ի՝ Հայաստանի զինվորական նախարարին ուղղված զեկուցագիրը, որում ասված էր. «Ծանոթանալով ինձ հանձնված բրիգադի գնդերի վիճակին, պարտքս եմ համարում տեղեկացնել նրանց անմարտունակ լինելու մասին։ Ձիակազմը բացակայում է։ 1-ին գնդում կա 123, իսկ 2-րդում միայն 7 ձի»[44]։

---

41 Տե՛ս նույն տեղում, ֆ. 204, ց. 1, գ. 41, թ. 36, 37, 38։

42 Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 65, թ. 40։

43 Տե՛ս նույն տեղում, գ. 35, թ. 147։

44 Տե՛ս նույն տեղում, գ. 65, թ. 40։

Զորամասերի անձնակազմի չհամալրվածության պատճառներից հիմնականը դասալքությունն էր, որը բանակի շարքերում երբեմն հասնում էր մեծ չափերի։ Այսպես, օրինակ, 1919 թ. հուլիսի տվյալներով, զինակոչից խուսափող նորակոչիկների ու զինապարտների թիվը ամբողջ Հայաստանում կազմում էր 17.665 մարդ[45], իսկ մարտական զորամասերը լքած զինվորների թվաքանակը 1919 թ. մարտից մինչև դեկտեմբեր կազմում էր 5728 մարդ[46]։ 1919 թ. սեպտեմբերի 18-ին այդ հարցը բարձրացվում է Հայաստանի կառավարությունում։ Զինվորական նախարար Քրիստափոր Արարատյանի կարծիքով, դասալքության դրդող հիմնական պատճառներն էին պատերազմական դրությունը, որում անվերջ գտնվում էր հանրապետությունը, և բանակում զինվորական ծառայության ծանր պայմանները (մշտական արշավանքները, ծառայության ժամկետի մշտական երկարաձգումը, զինվորների մերկ և կիսաքաղցած վիճակը և այլն)[47]։

Քանի որ կարգապահությունը բանակի կազմակերպվածության ու մարտունակության կարևոր գրավականն էր, ուստի խստագույն պայքար էր տարվում դասալքության դեմ։ 1919 թ. հուլիսի 24-ին ուժի մեջ մտավ Հայաստանի Հանրապետության կառավարության («Մահապատժի մասին») օրենքը, որի համաձայն, երկրում որպես պատժի առավելագույն չափ մտցվում էր մահապատիժ՝ գնդակահարություն։ Ըստ այդ օրենքի, որը մեջ ենք բերում ամբողջությամբ, պատժի առավելագույն չափը տարածվում էր այն զինծառայողների վրա, ովքեր կկատարեին հետևյալ ծանր հանցագործությունները. «1-ին. կփախչի թշնամու մոտ՝ պատերազմի դաշտից, ինքնազլուխ կթողնի տեղը կռվի ժամանակ և կհրաժարվի կռվին մասնակցելուց. 2-րդ. կհորդորի, խորհուրդ կտա կամ կդրդռի հանձնվել թշնամուն, կփախչի կամ կհրաժարվի թշնամուն դիմադրելուց. 3-րդ. առանց դիմադրության դերի կընկնի. 4-րդ. թշնամուն հանձնվելու դեպքում ժամապահությունը ինքնակամ լքելու համար. 5-րդ. բռնի ուժ գործ կդնի իր պետի հանդեպ. 6-րդ. պետերի հրամանների ու կարգադրությունների իրագործմանը կխանգարի. նրանց դեմ բացարձակ կապստամբի կամ կդրդռի. 7-րդ. կհարձակվի

---

45 Տե՛ս նույն տեղում, գ. 89, թ. 348, նաև՝ Ավետիս Յափուճյան, Հայաստանի Հանրապետության քաղաքական, զինվորական, տնտեսական, ընկերային կացությունը, Գահիրե, 1972, էջ 253։

46 Տե՛ս ՀՀՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 39, թ. 350։

47 Տե՛ս նույն տեղում, գ. 39, (1-ին մաս), թ. 71։

պահակի և զինվորական պահակախմբի վրա, կդիմադրի նրանց զենքով, դիտավորյալ կսպանի պահակին. 8-րդ. զինվորական ծառայությունից խուսափելու համար խաբեության, անդամահատության կամ այլ միջոցի կդիմի. 9-րդ. դասալքություն կանի. 10-րդ. դիտավորյալ կոշնչացնի կամ կփչացնի ամրությունները, թնդանոթները, զինանոցները, մթերանոցները և այլն. 11-րդ. կհափշտակի, կվատնի կամ կգողանա պետական զենքը կամ հրանյութերը»[48]:

1920 թ. օգոստոսին Հայաստանի կառավարությունը հայկական բանակի հրամանատարությանը թույլ տվեց բոլոր զորամասերում ստեղծել ռազմադաշտային դատարաններ, որոնց իրավունք էր վերապահվում կիրառել այս օրենքը[49]: Միևնույն ժամանակ Հայաստանի Հանրապետության կառավարությունը խստագույն միջոցներ ձեռնարկեց նաև դասալիքներին թաքցնող անձանց նկատմամբ: Այսպես՝ «Զորքերում դասալքության դեմ պայքարի մասին» օրենքի համաձայն, իսկական զինապարտության մեջ գտնվող դասալիքներին թաքցնող անձինք, ինչպես նաև պահեստազորում զինվորական աստիճան ունեցող քաղաքացիները, ովքեր խուսափում էին իսկական զինվորական ծառայության համար զորակոչին կամ ուսումնական հավաքներին ներկայանալուց, ենթակա էին կալանքի 3-ից մինչև 4 ամիս ժամկետով: Դասալիքների հետ բնակվող և միասնավոր նրանց թաքցնող անձինք ենթարկվում էին կալանքի՝ 1-ից մինչև 6 ամիս ժամկետով կամ դրամական տուգանքի՝ մինչև 200.000 ռուբլի և զրկվում պետական նպաստներ ստանալու որևէ իրավունքից[50]:

* * *

Հայաստանի Հանրապետության բանակի սպայական կազմը հիմնականում բաղկացած էր ռուսական զինվորական գիմնազիաներ և ուսումնարաններ ավարտած, ռուսական բանակում ծառայած, առաջին համաշխարհային պատերազմի ռազմաճակատներում կոփված կադրերից: Այսպես. հայկական զինված ուժերի Գլխավոր հրամանատար

---

48 Տե՛ս նույն տեղում, գ. 78, թ. 10, նաև՝ «Կառավարության լրաբեր» 4-ը սեպտեմբերի, 1919 թ.:

49 Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 186, թ. 53:

50 Տե՛ս նույն տեղում, ֆ. 290, ց. 1, գ. 36, թ. 4, նաև ֆ. 199, ց. 1, գ. 73, թ. 264, Տե՛ս Հավելված № 4:

Թեվմաս (Ֆոմա) Հովհաննեսի (Իվանի) Նազարբեկյանը, որը ծնվել էր 1846 թ. Թիֆլիսի նահանգում, ավարտել էր Միխայիլովո-Վորոնեժյան և Մոսկովյան զինվորական գիմնազիաները, իսկ հետո նաև՝ Ալեքսանդրովյան զինվորական ուսումնարանը: Նա մասնակցել է 1877—1878 թթ. ռուս-թուրքական և 1904—1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմներին: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ուղարկվել է ռուսական բանակի Կովկասյան ռազմաճակատ, որտեղ 1914—1917 թթ. եղել էր սկզբում բրիգադի, այնուհետև հրաձգային դիվիզիայի հրամանատար, իսկ 1917 թ. վերջին Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի կողմից նշանակվել էր հայկական առանձին կորպուսի հրամանատար: Գեներալ-մայորի զինվորական կոչումը նրան շնորհվել էր 1907 թ.[51]: Զանազան մարտական ծառայությունների համար նա պարգևատրվել է Սուրբ Ստանիսլավի 3-րդ և 1-ին, Անանայի 3-րդ և 2-րդ, Վլադիմիրի 2-րդ և 3-րդ, Գեորգիևյան 4-րդ աստիճանի շքանշաններով ու ոսկե զենքով[52]:

Հայաստանի Հանրապետության զինվորական՝ թվով 2-րդ նախարար, գեներալ-մայոր Քրիստափոր Արարատյանը ավարտել էր Թիֆլիսի կադետական կորպուսը, Պետերբուրգի Միխայլովյան հետևակային զինվորական ուսումնարանը և Յարսկոսելսկի սպայական դպրոցը: Մասնակցել է առաջին համաշխարհային պատերազմին, եղել է Հարավարևմտյան, Հյուսիսարևմտյան և Կովկասյան ճակատներում: Հրետանային գեներալ-մայորի զինվորական կոչմանը նա արժանացել է 1919 թ. մարտին[53]:

Հայաստանի Հանրապետության զինվորական առաջին նախարարի տեղակալ Իվան Սերգեյի Բագրամովը ռուսական բանակի աչքի ընկնող գործիչներից էր՝ 1912 թվականից գեներալ-մայոր և ռուսական բանակի գլխավոր շտաբի մոբիլիզացիոն բաժնի պետ: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Արևմտյան ռազմաճակատում եղել էր 50.000-անոց բանակային զորախմբի հրամանատար: 1918 թ. մարտ-ապրիլին, Անդրկովկասում մուսուլմանական խժդժությունների ժամանակ, գեներալ Բագրատունու հետ միասին եղել է Բաքվի հայկական շրջանների պաշտպանության կազմակերպիչ, մուսավաթական

---

51 ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 16, թ. 1:

52 Նույն տեղում, ֆ. 41, թ. 6:

53 Տե՛ս Армянский вопрос, Энциклопедия, Ереван, 1991, стр. 30.

խոովությունը ակտիվորեն ճնշողներից մեկը։ Հայաստանի Հանրապետության ստեղծումից հետո նա Թիֆլիսում զբաղվում էր հայկական նոր կազմավորվող բանակի համար սպայական կազմ հավաքագրելու և Հայաստան ուղարկելու գործը[54]։

Հայկական Առանձին դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Մովսես Բարսեղի (Վասիլի) Սիլիկյանը ավարտել էր Մոսկվայի կադետական դպրոցը (1882 թ.) և Ալեքսանդր 3-րդի անվան զինվորական ուսումնարանը (1884 թ.), իսկ 1904 թ. ստացել էր սպայական հրաձգային դպրոցի շրջանավարտի դիպլոմ։ 1914 թ. ծառայել է Կովկասյան ռազմական օկրուգում, սկզբում որպես Երևանի պարետի օգնական, ապա գումարտակի, գնդի և հետևակային դիվիզիայի հրամանատար։ Մասնակցել է Կովկասյան ռազմաճակատի մարտական գործողություններին, 1918 թ. զբաղվորել է Վանի գորախումբը, արժանացել է բազմաթիվ մարտական շքանշանների։ 1918 թ. հունվարին նա նշանակվել է հայկական բանակային կորպուսի 2-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, որի կազմում հատկապես աչքի է ընկել Սարդարապատի հերոսամարտում՝ զբաղվորելով Երևանյան գորախումբը[55]։

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զինվորական Գլխավոր շտաբի պետ՝ գեներալ-մայոր Դոլուխանյանը, ռուսական բանակի շարքերում ծառայել էր ավելի քան 25 տարի։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ցուցաբերած զանազան սխրագործությունների համար նա պարգևատրվել էր Սուրբ Գեորգիի շքանշանով և Գեորգիևյան ոսկե զենքով[56]։

Մարտական հարուստ փորձ ունեցող սպա էր գեներալ-մայոր Դանիել Բեկ-Փիրումյանը, որն ավարտել էր Թիֆլիսի հետևակային յունկերական ուսումնարանը (1883 թ.)։ 1884 թ. նա ծառայության էր անցել Կովկասյան ռազմական օկրուգում, 13-րդ լեյբ-գվարդիական Երևանյան գնդում։ 1883 թ. նրան շնորհվում է փոխպրապորշչիկի, 1888 թ.՝ պորուչիկի, 1900 թ.՝ կապիտանի, 1913 թ.՝ փոխգնդապետի, 1915 թ.՝

---

54 Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 35, թ. 157—158, ֆ. 204, ց. 1, գ. 40, թ. 12, 15, 16, 17։

55 Տե՛ս Սերժ Աֆանասյան, Սարդարապատի հազվանակը (Հայաստան, մայիս, 1918 թ.), Երևան, 1991, էջ 90։

56 ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 35, թ. 238։

Դանիել Բեկ Փիրումյան, գեներալ-մայոր, բրիգադի հրամանատար

Պողոս (Պավել) Բեկ Փիրումյան, գեներալ-մայոր, զորաջոկատի հրամանատար

Արտեմ Հովսեփյանց, գեներալ-մայոր, բրիգադի հրամանատար

Գարեգին Տեր Հարությունյան (Նժդեհ), փոխգնդապետ, Ղափան–Գենվազ–զողբան շրջանի զորքերի հրամանատար

գնդապետի զինվորական կոչում։ Եղել է վաշտի, դումարտակի, այնուհետև գնդի հրամանատար։ Կովկասյան ճակատում մասնակցել է Էրզրումի գրավմանը (1916 թ.)։ 1917 թ. վերջին ընդգրկվում է հայկական կորպուսի կազմում։ Սարդարապատի ճակատամարտին մասնակցել է որպես զորաջոկատի հրամանատար[57]։

Հայկական բանակի մարտական սպաներից մեկն էր նաև գնդապետ Պողոս (Պավել) Ղահրամանի Բեկ-Փիրումյանը, որը ավարտել էր Շուշիի յունկերական զինվորական դպրոցը։ Եղել է դումարտակի, այնուհետև՝ գնդի հրամանատար։ Գնդապետի զինվորական կոչմանը նա արժանացել էր 1914 թ. սկզբին։ Առաջին աշխարհամարտի տարիներին մարտնչել է Արևմտյան, ապա Կովկասյան ռազմաճակատներում, որտեղ, հատկապես աչքի էր ընկել Վանի և Մուշի ազատագրման ժամանակ։ 1917 թ. վերջին նա նույնպես ներգրավվել էր Հայկական կորպուսի շարքերը[58]։

Բացի վերոհիշյալ բարձրաստիճան սպաներից Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կառույցներում զանազան պաշտոններ էին վարում գեներալներ Հակոբ Բագրատունին, Յուլիան Ֆրանցևիչ Բրժեզինսկին, Ալեքսանդր Բեյ-Մամիկոնյանը, Պավել Մելիք-Շահնազարյանը, Միքայել Գևորգի Մելիք-Մուրադյանը, Գրիգորի Խորամանսկին, Սերգեյ Իվանի Հաջիևը, Դմիտրի Անդրեևսկին, Շահբուդաղյանը, Իվան Իվանովիչ Վասիլևը, գնդապետներ՝ Անդրեյ Պավելի Մելիք-Շահնազարյանը, Միքայել Մելիքի-Աղամալյանը, Ա. Կ. Մելիքովը, Միքայել Մելիք-Շահնազարյանը, Սերգեյ Թումանյանը, Ստեփանյանը, Պապունցը, Պրիտոմանովը, Ղորղանյանը (Կորգանով), Կազիրովը, Մազմանյանը, Գևորգ Բարսեղի Բաբաջանյանը, Պյոտր Աթաևը, Ապրեսյանը, Զատիկյանը, Կոստանդին Մելիք-Փարաջանյանը, Ալեքսանդր Տեր-Ներսիսյանը և շատ ուրիշներ[59]։

Մոտավոր հաշվարկներով 1918—1920 թթ. Հայաստանի Հանրապետության բանակում ծառայում էին ավելի քան 20 գեներալներ և 60-ից ավելի գնդապետներ։ Բոլոր այդ գեներալները և գնդապետները ևս անցել էին առաջին աշխարհամարտի թոհուբոհով և ունեին հարուստ մարտական փորձ։ Նրանցից ոմանք մաքառել էին Բաքվի կոմունայի

---

57 Տե՛ս Ս. Աֆանասյան, նշվ. աշխ., էջ 91։

58 Տե՛ս Армянский вопрос, стр. 262.

59 Տե՛ս Գյուլար Մարտիրոսյան, Դպահանական սև գործի հերմակ երեսը, «Ազատամարտ» շարաթաթերթ, № 48, Երևան, 1993։

բարիկադներում, Կոմունայի տապալումից հետո անցել էին Հյուսիսային Կովկաս, ապա այնտեղից, Վրաստանի տարածքով, աճապարել էին Հայաստանի Հանրապետություն և ծառայության անցել հայկական բանակում[60]։

Հայաստանի հանրապետության բանակում տարբեր ժամանակ ծառայել են նաև հրետանային մարտկոցների հրամանատարներ, կապիտաններ՝ Գեորգ Չայլախյանը, Վլադիմիր Տամբուչին, Հմայակ Հախնազարյանը, Իվան Վեքիլովը, Բագրատ Առուշանյանը, Վլադիմիր Սակիլարին, Նիկոլայ Կլիչը (բոլորն էլ հետագայում դարձան խորհրդային բանակի գեներալներ), հեծյալ դասակի հրամանատար, պրուշիկ Հովհաննես Քրիստափորի Բաղրամյանը (հետագայում խորհրդային Միության մարշալ, կրկնակի հերոս), հետևակազորի կապիտան Գեորգի Ալեքսանդրի Բախչիևը, շտաբս-կապիտան Սերգեյ Միխայիլովիչ Զարիկովը, պոդպորուչիկներ Իվան Դավթի Ալխազյանցը, Եղիշե Զաքարի Մարգարյանցը, Վահան Ավետիքի Գարգալովը, Դավիթ Գրիգորի Ինգոյանցը, Գառնիկ Պողոսի Մուշեղյանցը, Միքայել Աստվածատուրի Ղուկասովը, Բեգլար Անդրեյի Աթանասյանցը, Անատոլի Սերգեևիչ Յանիշևը, պրապորշչիկներ Մոիսեյ Գավրիլովիչ Ցուրինովը, Հովհաննես Հակոբի Հարությունյանցը, Հովհաննես Տիգրանի Նունիյանցը, Լևոն Ներսեսի Իգիթխանովը, Ավետիս Շաքարի Հարությունյանցը, Հակոբ Մելիքսեթի Հակոբյանցը, Պավել Դիմիտրիևիչ Բլինովը, հեծելազորի շտաբս-կապիտաններ Գեորգ Սարգսի Սայադյանցը և Սերգեյ Մինասի Փիրումովը, պորուչիկներ Նիկոլայ Թալիանբեկի Թարխանովը, Հայկ Լևոնի Խուդավերդյանցը, Վլադիմիր Անտոնովիչ Խարշենկոն, Հովսեփ Կարապետի Շահինյանցը, Գեորգյանցը, Տիգրան Իվանի Անիևը, Հովհաննես Գերասիմի Կարաբեկյանցը, Հակոբ Սարգսի Մարտիրոսյանցը, պոդպորուչիկներ Միխայիլ Իվանովիչ Կուբենևը, Իվան Իվանովիչ Ասյուտինը, Իվան Ալեքսանդրովիչ Եգանբեկը, Միխայիլ Իվանովիչ Կացովսկին, Արկադի Իվանի Մարտիրոսյանցը, Հակոբ Արսենի Մուշեղյանցը, Մկրտիչ Գալուստի Տեր-Պողոսյանցը, պրապորշչիկներ Լևոն Գաբրիելի Հարությունյանցը, Արմենակ Ֆագեյի Թաղիանոսովը, Տաճատ Գեորգիի Ավետիսյանցը, Շաբաթ Պլատոնի Ալիխանովը, Յակով Ռուվենովիչ Բուրսուկը, Լևոն Աբրահամի Հովսեփյանցը, Սաֆիբեկ

---

60 Տե՛ս նույն տեղում։

Մկրտչի Միրզոյանցը, Տեր-Աստվածատուրովը, Փիրոյանցը, հրետանու-ի կապիտաններ՝ Պավել Վենեդիկտովիչ Յասենսկին, Անդրիան Մարգարի Առուշանյանցը, Գեորգի Ալեքսանդրի Կարաքեշիշևը, շտաբս-կապիտաններ Սեմյոն Զաքարի Մելիք-Հարությունյանցը, Իոսիֆ Դավիդովիչ Խեչումովը, Հարություն Ալեքսանդրի Այվազյանցը, Լևոն Իպոլիտովիչ Լեսիշը, Պետրոս Սեմյոնի Պետրոսյանցը, Հրանտ Զուրաբի Սարգսյանցը, Գրիգորի Պավլովիչ Սուլթան-Շահը, Վալենտին Իվանովիչ Միրիմանովը, Նիկոլայ Ալեքսանդրի Յուզբաշյանցը, Ավետիք Կարապետի Ազազյանցը, պորուչիկներ Հովհաննես Գրիգորի Բազրատունին, Հակոբ Գրիգորի Ասլանյանցը, Հովհաննես Փիլոսի Հակոբյանցը, Նիկոլայ Դիմիտրիևիչ Միշեկը, Սերգեյ Արտեմի Բեկզալովը, Սարգիս Անդրեասի Աթանասյանցը, Սերգեյ Միխայլովիչ Կուտիրևը, Մամիկոն Կարապետի Լալայանցը, Գարեգին Սարիբեկի Մելիք-Ադամյանցը, Վասիլի Աբրահամի Տեր-Մովսեսովը, Աղասի Գեորգիի Շերենցը, Վարդան Գրիգորի Տեր-Ղևոնդյանը, Արամ Գեորգիի Տեր-Մարտիրոսովը, պոդպորուչիկներ Գասպար Դավիթի Եվանգուլովը, Գեորգ Բարսեղի Շյոլկով-Եզովը, Գեորգի Իվանի Դաբրիելյանցը, Սարգիս Գեորգի Ջանոյանցը, Լևոն Գավրիլի Շտիկյանցը, Քրիստափոր Ստեպանովիչ Կուշնարևը, Վանիկ Իոսիֆի Ավետիքովը, Վիկտոր Պավլովիչ Ամերիկովը, Ալեքսանդր Համբարձումի Աթաևը, պրապորշչիկներ Նիկոլայ Դանիելի Խառատյանցը, Բաղթան Բեկի Մելիք-Եգանյանցը, Իոսիֆ Աբրահամի Տեր-Մովսեսովը, Գուրգեն Գեորգի Մանասյանցը, Արտավազդ Սողոմոնի Մելիք-Փարսադանովը, Գրացիան Գրիգորևիչ Լիսիցյանը, Միքայել Հակոբի Էկոբաշյանցը, Վահան Ստեփանի Ղարիբովը, Վահան Մկրտչի Բալյանցը, Վարդգես Գալուստի Աբուլյանցը, Ստեփան Միքայելի Աղամալյանցը և ուրիշներ[61]։

Նրանք բոլորն էլ անկուսակցական էին և չէին պատկանում որևէ քաղաքական հոսանքի, սակայն, լինելով հայրենասեր և ազգային շահերով առաջնորդված զինվորականներ, սրությամբ էին կատարում իրենց զինվորական պարտքը հայրենիքի հանդեպ։

Ինչպես իր հուշերում նշում է Ռուբեն Տեր-Մինասյանը, գեներալ Հովհաննես Հախվերդյանի նախաձեռնությամբ մի նոր շրջան է սկսվում հայ զինվորական կյանքի մեջ։ Գլխավոր սկզբունքն է դառնում. «Զինվորականությունը դուրս է քաղաքականությունից, ժողովրդական ոչ մի

---

61 Տե՛ս ՀՀՊԱ, ֆ. 204, ց. 1, գ. 41, թ. 57—58։

ուժ մուտք չպիտի ունենա նրա մեջ, նրանք են զինվոր, որոնք ենթակա են զորակոչի, նրանք են ղեկավար, որոնք ավարտած են զինվորական դպրոց»:

«Սա մի ճիշտ սկզբունք պիտի համարել մի բնականոն երկրի մեջ, զինվորական մտայնության բոլորովին համապատասխան, հետևողական շարունակությունը ռուսական զինվորական դպրոցի»[62],—գրում է Ռ. Տեր-Մինասյանը:

Բանակում պահպանված էին սպայական, շարքային և դասական զինվորական այն կոչումները և աստիճանները, ինչպիսիք գոյություն ունեին ռուսական բանակում: Այդ կոչումներն էին պրապորշչիկ (վառատար), պոդպորուչիկ (փոխտեղակալ)., պորուչիկ (տեղակալ), շտաբ-կապիտան (փոխգլխապետ), կապիտան (գլխապետ), պոդպոլկովնիկ (փոխգնդապետ), պոլկովնիկ (գնդապետ), գեներալ-մայոր (կրտսեր զորավար), գեներալ-լեյտենանտ (ավագ զորավար) և ինֆանտերիայի կամ լրիվ գեներալ (զորավար): Բանակի շարքային կազմի աստիճաններն էին. շարքային (զինվոր), եֆրեյտոր (հնդապետ), կրտսեր ենթասպա (տասնապետ), ավագ ենթասպա (քսանհինգապետ), ֆելդֆեբել (խմբապետ) և պոդպրապորշչիկ (փոխվառատար)[63]: Դասային աստիճաններն էին. կոլեժսկի ռեգիստրատոր (կոլեգիական ռեգիստրատոր), գուբերնսկի սեկրետար (նահանգային քարտուղար), կոլեժսկի սեկրետար (կոլեգիական քարտուղար), տիտուլյարնի սովետնիկ (տիտղոսավոր խորհրդական), կոլեժսկի ասեսոր (կոլեգիական ասեսոր), նադվորնի սովետնիկ (արքունական խորհրդական), կոլեժսկի սովետնիկ կամ ստատսկի սովետնիկ (կոլեգիական կամ պետական խորհրդական), տայնի սովետնիկ (գաղտնի խորհրդական) և դեյստվիտելնի տայնի սովետնիկ (իսկական գաղտնի խորհրդական): Այդ դասային աստիճանները հավասարազոր էին համապատասխանաբար վառատարի, փոխտեղակալի, փոխգլխապետի, գլխապետի, փոխգնդապետի, գնդապետի, կրտսեր զորավարի, ավագ զորավարի և զորավարի կամ լրիվ գեներալի սպայական աստիճաններին[64]: Նշենք, որ հայկական բանակում ամենաբարձր դասային աստիճանը արքունական խորհրդականն

---

62 Ռուբեն Տեր-Մինասյան, նշվ. աշխ., էջ 332:

63 Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 442, թ. 569:

64 Տե՛ս նույն տեղում, թ. 205:

էր, այդ աստիճանը ունեին Հայկական դիվիզիայի հրամանատար և բժիշկ Տրոիցկին, Տեր-Միքայելյանցը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարության սանիտարական վարչության պետ Պապիկյանը։

Զինվորական կոչումների և դասային աստիճանների այդ համակարգը հաստատված էր նաև Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքով։ Այսպես, օրինակ, 1918 թ. դեկտեմբերի 25-ին Հայաստանի խորհրդարանն ընդունեց աստիճանաբաշխման մասին օրենք, համաձայն որի Հայաստանի Հանրապետության բանակում պահպանվում էին սպայական և դասային այն զինվորական աստիճանները, որոնք գոյություն ունեին ռուսական բանակում։ Սպաները և դասային աստիճանավորները Հայաստանի Հանրապետության բանակի զորամասերում և հիմնարկություններում ծառայության էին ընդունվում այն զինվորական աստիճաններով, որը նրանք ունեցել են ռուսական բանակում։ Ինչպես սպաների, նույնպես դասային աստիճանավորների աստիճանաբաշխումը կատարվելու էր այն կանոնների և օրենքների հիման վրա, որոնք գոյություն ունեին ռուսական բանակում։ Սպաների և աստիճանավորների աստիճանաբաշխման իրավունքը վերապահվում էր Հայաստանի Հանրապետության կառավարությանը և կատարվում էր զինվորական նախարարի առաջարկով[65]։

Անդրադառնալով հայկական բանակի կազմակերպական համակարգին, զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանն իր հուշերում գրում է. «Զինվորական նախարարությունը պարզ մանրանկարն էր ռուսական զինվորական նախարարության, իսկ բանակը՝ իր ոգով, վարժությամբ և գործելակերպով, նույնն էր, ինչ ռուսական որևէ զորաբաժին։ Իզուր չէ, որ հայկական բանակը կհամարվեր Դենիկինի բանակի մի մասը, նմանությունը մեծ էր...»[66]։

Հայկական բանակի սպաները և զինվորները կրում էին պաշտպանական գույնի (գորշ կանաչագույն) կարճ օձիքներով զինվորական համազգեստ և երկար հովարով եզրաքուղ գորշ կանաչագույն զինվորական գլխարկներ։ Ուսադիրները և տարբերանշանները նույնն էին, ինչ որ ռուսական բանակում։

---

65 ՏԵ՛ս ՀՀՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 86, թ. 17—18։

66 Ռուբեն Տեր-Մինասյան. նշվ. աշխ., էջ 332։

*1918—1920 թթ. Հայաստանի Հանրապետության բանակի զինվորական համազգեստի մասին կարելի է պատկերացում կազմել նաև ըստ մեր կազմած աղյուսակի (աղ. 1)*։*

Աղյուսակ 1

| | Զորամասակներ | Օձիքի վրայի մակիկարի գույնը | Ուսադիրի եզրագծի գույնը | Ենգրավարաթիքի վրայի լամպասի գույնը | Տրեգակաբը | Մակիկարի վրայի տարբերանշանները |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Հետևազոր | մուգ նարնջագույն | նույնը | նույնը | ոսկի | երկու խաչաձևված հրացաններ՝ ձեռքի նռնակի հետ |
| 2 | Հեծելազոր | սև | նույնը | նույնը | արծաթե | թևավոր թուր |
| 3 | Հրետանազոր | ալ կարմիր | սև | ալ կարմիր | ոսկի | երկու խաչաձևված հրանոթ |
| 4 | Գատական հիմնարկություն. | սև | մորեգույն | նույնը | արծաթե | օրենքի խորհրդանշան |
| 5 | Գլխավոր շտաբ | սև | ալ կարմիր | նույնը | արծաթե | խաչաձևված թուր և վեռուր |
| 6 | Ժանդարմական զորքեր | կանաչ | նույնը | նույնը | ոսկի | ֆինանս. նախարար. տարբերանշանները |
| 7 | Համբարակություն | կապույտ | նույնը | նույնը | արծաթե | — |
| 8 | Ռազմատանիտ. հիմնարկություններ | մուգ կապույտ | ալ կարմիր | նույնը | արծաթե | կարմիր խաչ |
| 9 | Ռազմանավանդաբուժ. հիմնարկներ | սև | բաց կապույտ | նույնը | արծաթե | կապույտ խաչ |
| 10 | Ժակրավոր զորամասեր | դարչնագույն | ալ կարմիր | դարչնագույն | արծաթե | — |

* Կազմված է ըստ ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 442, թ. 204, 205, 206, 207, տե՛ս նաև՝ Համեմատ № 5։

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| 11 | Հեռագրային | գարշնագույն | ալ կարմիր | գարշնագույն | արծաթե | կայծակի նշան |
| 12 | Ռազիո-հեռագրային | գարշնագույն | ալ կարմիր | գարշնագույն | արծաթե | ռազիո-հեռագրանշան |
| 13 | Ավտոմոբիլային | գարշնագույն | ալ կարմիր | գարշնագույն | արծաթե | թեռավոր անիվ ու զնկ |
| 14 | Ավիացիոն զորամասեր | երկնագույն | ալ կարմիր | երկնագույն | արծաթե | երկթևանի պրոպելիր |
| 15 | Զրահագնացք | ալ կարմիր | ալ կարմիր | երկնագույն | ոսկի | շոգեկնացք |
| 16 | Զորքերի գլխ. հրամանատարի շտաբ | սպիտակ | սպիտակ | ալ կարմիր | արծաթե | նշված են Ս. Շ. տառերը |
| 17 | Պարեռ. և ամբոց. բրիգադների շտաբ | սպիտակ | սպիտակ | ալ կարմիր | արծաթե | — |
| 18 | Իտալական զումարտակներ | մուգ գարշնագույն | սպիտակ | ալ կարմիր | ոսկի | խաչաձևված երկու գրաշակներ |

Բացի տարբերանշաններից, Հայաստանի Հանրապետության բանակի սպաները իրենց վրա կրում էին նաև ուսակապ (ակսելբանտ), խթան և թուր։ Նրանք իրավունք ունեին կրելու նաև նախկինում խիզախության և մարտերում ցուցաբերած քաջության և հմտության համար ստացած իրենց բոլոր մարտական մեդալները և շքանշանները[67]։

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ձեռնամուխ եղավ նաև իր սեփական մարտական շքանշանների ստեղծմանը։ Այսպես, 1919 թ. մայիսի 26-ին Հայաստանի կառավարության որոշմամբ հաստատվեց «Հայրենիքին մատուցած ծառայության համար» շքանշանը, որի պատրաստման համար բաց թողնվեց 20.000 ռուբլի վարկ[68]։ 1920 թ. հունիսի 2-ին կառավարության համապատասխան օրենքով հաստատվեցին նաև «Սուրբ Վարդան զորավար» և «Մեծն Տրդատ» մարտական շքանշանները[69]։ Շքանշանները պատրաստված էին նշա-

67 Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 442, թ. 205։

68 Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 65, թ. 64։

69 Տե՛ս նույն տեղում, գ. 154, թ. 137։

նավոր նկարիչ Հակոբ Կոջոյանի նախագծով, իսկ մրցույթի հանձնաժողովի նախագահը անվանի ճարտարապետ, ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանն էր։ Նախարարների խորհրդին զինվորական նախարար Թուբեն Տեր-Մինասյանի ներկայացրած զեկուցագրում նշվում էր, որ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ աստիճանի «Սուրբ Վարդան զորավար» շքանշանով պետք է պարգևատրվեին անձնական խիզախություն ցուցաբերած սպաներն ու զինվորները, իսկ 5-րդ և 6-րդ աստիճանով՝ զորամասերի, շտաբների հրամանատարներն ու պետերը՝ մարտական գործողությունների հմուտ ղեկավարման համար։ Այս շքանշանը համապատասխանում էր ռուսական Գեորգիևյան խաչին և պետք է շնորհվեր ռուսական բանակում գոյություն ունեցող կանոնների համաձայն՝ մինչև սեփական կանոնադրության ընդունումը։

«Մեծն Տրդատ» շքանշանով պարգևատրվում էին սպաները՝ մարտական ծառայությունների համար։ Այդ շքանշանով կարող էին պարգևատրվել նաև քաղաքացիական անձինք՝ հատուկ ծառայությունների համար։ Ընդ որում, այդ շքանշանով պարգևատրված սպաներին հանձնվում էր նաև զենք (սուր)[70]։

Հայկական բանակում որպես զինվորական հրահանգիչ ծառայող անգլիացի սպա Օլիվեր Բոլդվինի հուշերից պարզվում է, որ նա պարգևատրվել է այդ շքանշաններից մեկով, սակայն չի նշվում, թե հատկապես որով[71]։ Հայտնի է նաև, որ «Սուրբ Վարդան զորավար» շքանշանով պարգևատրվել է գնդապետ Նիկոլայ Թարխանյանը (Կուռո)՝ հայ-վրացական պատերազմի ժամանակ ցուցաբերած անձնական խիզախության համար[72]։

Հայկական բանակի շարքային անձնակազմի ամսական ռոճիկը սահմանվում էր Հայաստանի Հանրապետության խորհրդարանի կամ կառավարության համապատասխան օրենքներով և որոշումներով՝ հաշվի առնելով ինչպես զինվորական կոչումը, այնպես էլ զինվորական ծառայության ժամկետները։ Շարքային անձնակազմի աշխատավար-

---

70 Տե՛ս նույն տեղում, թ. 139։

71 Տե՛ս Օլիվեր Բոլդվին, Վեց բանտ և երկու հեղափոխություն, Ալեքսանդրիա, 1933, էջ 200։

72 Տե՛ս Գ. Լազյան, Դեմքեր հայ ազատագրական շարժումին, Գահիրե, 1949, էջ 388։

ձի չափերի մասին կարելի է պատկերացում կազմել ըստ մեր կազմած աղյուսակի (աղ. 2)*։

Աղյուսակ 2

| Զինվորական կոչում | 1918 թ. աշուն | 1919 թ. հուլիս | 1919 թ. դեկտեմբեր | 1920 թ. հուլիս |
|---|---|---|---|---|
| Շարքային | — | 350 ռ. | — | 1000 ռ. |
| Եֆրեյտար | — | 375 ռ. | 525 ռ. | 1050 ռ. |
| Կրտսեր ենթասպա | 50 ռ. | 400 ռ. | 575 ռ. | 1150 ռ. |
| Ավագ ենթասպա | 75 ռ. | 425 ռ. | 625 ռ. | 1250 ռ. |
| Ցկլոֆելդիկ | 100 ռ. | 450 ռ. | 675 ռ. | 1350 ռ. |
| Փոխպրապորշչիկ | 125 ռ. | 500 ռ. | 700 ռ. | 1400 ռ. |

Ինչպես երևում է աղյուսակից, երկրում դրամի արժեզրկման հետ միասին, կառավարության կողմից բարձրացվում էին նաև զինվորների ռոճիկների չափերը։ Նույն պատկերն ուներ նաև Հայաստանի Հանրապետության բանակի սպայական կազմի աշխատավարձը, որի մասին պատկերացում է տալիս մեր կազմած աղյուսակը (աղ. 3)**։

Զինվորականների տնտեսական վիճակը բարելավելու նպատակով, նախարարների խորհրդի 1920 թ. մայիսի 15-ին ընդունած օրենքով, սպաների և դասային աստիճանավորների օրապահիկը ավելացվում էր 100 տոկոսով։ Նույն թվականի հուլիսի 31-ի համապատասխան օրենքով նրանց օրապահիկը ավելացվեց ևս 100 տոկոսով։ Բացի դրանից, նույն թվականի մայիսի 8-ից, սպաների և դասային աստիճանավորների ընտանիքներին թույլատրվեց ստանալ մեկ զինվորի վճարովի օրապահիկ։ Իսկ կառավարության հուլիսի 31-ի որոշմամբ վիրավորված սպայակների (денщик) փոխարեն, սպաներին ու դասային աստիճանավորներին լրացուցիչ բաց էր թողնվում մեկ զինվորի ձրի օրապահիկ և ամսական 1000 ռուբլի դրամ՝ ծառայող վարձելու համար։ Միաժամանակ մթերքների անհատական թանկացման

* Կազմված է ըստ ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 190, ց. 1, գ. 89, թ. 209, ֆ. 204, ց. 1, գ. 41, թ. 100, Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, 1918—1919—1920 թթ., էջ 88—89։

** Կազմված է ըստ ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 442, թ. 569, ֆ. 199, ց. 1, գ. 27, Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, 1918—1919—1920 թթ., էջ 86—87։

պատճառով զինվորի մեկ օրվա օրապահիկի չափը 1920 թ. մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 20-ը ընկած ժամանակահատվածում ավելացվեց երկու անգամ, մայիսի 13-ի օրենքով՝ 107 տոկոսով, իսկ սեպտեմբերի 20-ի որոշմամբ՝ 300 տոկոսով[73]:

Աղյուսակ 3

| Սպայական կոչում | 1918 թ. վերջը | 1919 թ. հունիս | 1919 թ. դեկտեմբեր | 1920 թ. հունիս |
|---|---|---|---|---|
| Վաստակաբ | 650 ռ. | 1300 ռ. | 3000 ռ. | 6600 ռ. |
| Փոխանդապետ | 675 ռ. | 1350 ռ. | 3100 ռ. | 6700 ռ. |
| Տեղակալ | 725 ռ. | 1450 ռ. | 3200 ռ. | 6800 ռ. |
| Փոխգլխապետ | 750 ռ. | 1500 ռ. | 3300 ռ. | 7000 ռ. |
| Գլխապետ | 800 ռ. | 1600 ռ. | 3400 ռ. | 7200 ռ. |
| Փոխգնդապետ | 850 ռ. | 1700 ռ. | 3600 ռ. | 7400 ռ. |
| Գնդապետ | 900 ռ. | 1800 ռ. | 3800 ռ. | 7600 ռ. |
| Կրտսեր գորավար | 1000 ռ. | 2000 ռ. | 4000 ռ. | 7800 ռ. |
| Ավագ գորավար | 1050 ռ. | 2100 ռ. | 4200 ռ. | 8200 ռ. |
| Զորավար | — | 3200 ռ. | — | 9000 ռ. |

Հայաստանի Հանրապետության կառավարության ուշադրության կենտրոնում էր նաև հայկական բանակի համար տեղում սպայական կադրեր պատրաստելու խնդիրը, որոնց կարիքը խիստ էր զգացվում: Այդ նպատակով 1920 թ. գարնանից Երևանում բացվեցին զինվորական Գլխավոր շտաբի սպայական դասընթացներ և սպայական նախապատրաստական դպրոց: Նույն թվականի սեպտեմբերին Ալեքսանդրապոլում սկսվեցին զինվորական գիմնազիայի, իսկ Կարսում մեկամյա ուսուցմամբ զինվորական ուսումնարանի կազմակերպման աշխատանքները: Կառավարության սեպտեմբերի 16-ի որոշմամբ, գիմնազիայի 3 դասարանների կահավորման համար հատկացվեց 24.495380 ռուբլի[74], իսկ ուսումնարանի համար՝ 36129513 ռուբլի[75]:

Զինվորական գիմնազիայում ընդգրկվելու էին առավելապես զինծառայողների՝ սպաների, դասային աստիճանավորների, զինվորական

73 Տե՛ս ՀՀՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 142, թ. 183:

74 Տե՛ս նույն տեղում, գ. 190, թ. 6:

75 Տե՛ս նույն տեղում, գ. 142, թ. 187:

բժիշկների, ինչպես նաև որբանոցների՝ 10—12 տարեկան ծնողազուրկ երեխաները։ Դիմնազիայում պետք է սովորեին 350 սաներ։ Ուսուցումը զինվորական գիմնազիայում պետք է տևեր յոթը տարի և նպատակ ուներ մանկահասակ անձանց մտավորապես, բարոյապես և ֆիզիկապես պատրաստել զինվորական ուսումնարան ընդունվելու համար։

Մեկամյա ժամկետով զինվորական ուսումնարանում պետք է պատրաստվեին սպայական կադրեր՝ հետևակազորի, հրետանազորի և հեծելազորի համար։ Ուսումնարանում սովորելու էին 17-ից մինչև 28 տարեկան միջնակարգ կրթությամբ և զինվորական գիմնազիան հաջողությամբ ավարտած ընդամենը 145 յունկերներ։ Այն ավարտողները ստանալու էին պոդպորուչիկի սպայական աստիճան[76]։

Բացի դրանից, բանակի համար բարձրորակ բժշկական անձնակազմ պատրաստելու նպատակով, Երևանի և Ալեքսանդրապոլի զինվորական հոսպիտալներին կից բացվեցին զինբուժակների դպրոցներ, որտեղ սովորելու էր 120 մարդ։ Այդ դպրոցները համալրելու նպատակով, կառավարության որոշմամբ, հայտարարվեց 32-ից մինչև 40 տարեկան բժիշկների զորահավաք[77]։ Վերջապես, ռադիոհեռագրային կայանների համար մասնագետներ պատրաստելու նպատակով ռադիոհեռագրային դիվիզիոնին կից բացվեց դպրոց։ Դպրոցն ավարտած մասնագետները պետք է աշխատեին ինչպես հին, այնպես էլ նոր ստացված ռադիո-հեռագրային կայաններում[78]։

Քանի որ Հայաստանի Հանրապետության բանակի սպայական կազմը հիմնականում բաղկացած էր ռուսական կադետական կորպուսներ և զինվորական ուսումնարաններ ավարտած կադրերից, նրանց զգալի մասը չէր տիրապետում մայրենի լեզվին։ Այդ էր պատճառը, որ հայկական բանակում՝ զորամասերում, շտաբներում և այլն, ամբողջ գրագրությունը (հրամանները, հաշվետվությունները, զեկուցագրերը և այլն) վարվում էր հիմնականում ռուսերենով։ Միայն 20 թ. ապրիլին, երբ զինվորական նախարար է նշանակվում Ռ. Տեր-Մինասյանը, հրամաններ են արձակվում բանակում հայերեն լեզվի օգտագործման վերաբերյալ։ Այսպես, օրինակ, Տեր-Մինասյանի 1920 թ. հունիսի 26-ի թիվ

---

76 Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 190, թ. 12—13, տե՛ս նաև՝ Հավելված № 6 և 7։

77 Տե՛ս նույն տեղում, ֆ. 276, ց. 1, գ. 79, թ. 46—52։

78 Տե՛ս նույն տեղում, թ. 51։

1073 շրջաբերական հրամանի համաձայն, որը բխում էր Հայաստանի Հանրապետության խորհրդարանի 1919 թ. դեկտեմբերի 26-ի[79] և նախարարների խորհրդի 1920 թ. մայիսի 30-ի օրենքներից, ոչ ուշ, քան մինչև նույն թվականի օգոստոսի 1-ը զինվորական նախարարության ենթակայության տակ գտնվող բոլոր վարչություններում, շտաբներում, հիմնարկություններում, հաստատություններում և զորամասերում գրագրությունը և գործավարությունը պետք է տարվեր միայն հայերենով: Բացի դրանից, սույն հրամանի համաձայն, բանակից զորացրման էին ենթակա բոլոր այն օտարազգի սպաները, աստիճանավորները և ազատ վարձու ծառայողները, ովքեր չէին տիրապետում հայոց լեզվին. բացառություն էին կազմում միայն նրանք, ովքեր իրենց հատուկ մասնագիտական գիտելիքներով և պատրաստվածությամբ ժամանակամիջոցում անհրաժեշտ էին զորամասերին ու հիմնարկություններին (տնտեսական մասի ծառայողներ և այլն) և նրանց փոխարինումը ուրիշ անձանցով կարող էր վնաս հասցնել բանակի կազմակերպական գործին: Հայազգի սպաները, ովքեր չգիտեին մայրենի լեզուն, սույն հրամանի համաձայն պարտավոր էին անմիջապես ձեռնամուխ լինել նրա տիրապետմանը: Սույն հրամանով արգելվում էր նաև այսուհետև զինվորական նախարարության համակարգում ծառայության ընդունել անձանց, ովքեր չեն տիրապետում հայերենին[80]:

Զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանի՝ բանակի ազգայնացմանը ուղղված վերը նշված հրամանը իրագործելու նպատակով գլխավոր զինվորական շտաբում ստեղծվում է թարգմանչական հանձնախումբ, որը ձեռնամուխ է լինում գրավարության զանազան ձևերի, գրությունների, տերմինների, հրամանների, հրահանգների, զեկուցագրերի, տնտեսական մասի պահանջաթերթիկների ու մատյանների հայացմանը: Բացի այդ, հանձնախմբի կողմից ծավալուն աշխատանք է կատարվում տարբեր զինվորական կանոնագրքերի, զենքի հետ վարվելու կարգի մասին գրականության ռուսերենից հայերեն թարգմանելու և տպագրելու ուղղությամբ: Կարճ ժամանակամիջոցում թարգ-

---

79 Այստեղ խոսքը վերաբերում է 1919 թ. դեկտեմբերի 26-ին Հայաստանի խորհրդարանի կողմից ընդունված «Պետական լեզվի մասին» օրենքին, համաձայն որի, Հայաստանում պաշտոնական լեզուն համարվում էր հայերենը, որի գործածումը առօրյայում, պարտադիր էր նաև բանակում:

80 ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 290, ց. 1, գ. 9, թ. 28:

մանվում և հրատարակվում են «Լեռնային հրետազորի հրանոթի վարժություն», «Թեթև հրետազորի մարտկոցի վարժություն», և «Թեթև հրետազորի վարժություն» գրքույկները, Լեբել հրացանի, փամփուշտի, «Նագան» ատրճանակի հետ վարվելու կարգի մասին նկարագրությունները, ինչպես նաև խրամատներ պատրաստելու, կայազորի, կապի, կարգապահական, ներքին և ռազմադաշտային ծառայության կանոնագրքերը[81]:

Գլխավոր զինվորական շտաբի կողմից որոշ աշխատանք տարվեց Ռուբեն Տեր-Մինասյանի 1920 թ. հունիսի 26-ի թիվ 1073 շրջաբերական վերոհիշյալ հրամանով նախատեսված նաև հայերեն լեզվին չտիրապետող օտարազգի սպաներին ու ստորաճանավորներին բանակից զորացրելու ուղղությամբ: 1920 թ. հունիսի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության բանակում ծառայում էին 256 օտարազգի սպաներ և ստորաճանավորներ, նրանցից 81-ը արդեն մինչև սեպտեմբերի վերջը այդ հրամանի հիման վրա ազատվեցին զինվորական ծառայությունից և զորացրվեցին: Նման կարգի միջոցառումների իրականացման աննպատակահարմարությունը շուտով զգացնել տվեց: Զորացրումը տեղի էր ունենում այն ժամանակ, երբ Հայաստանի Հանրապետության վրա կախված էր Թուրքական հարձակման վտանգը: Հետագա զորացրումը զինվորական նախարարի կարգադրությամբ դադարեցվեց՝ պատերազմական գործողությունների ծավալման պատճառով[82]:

Հայկական բանակի ազգայնացման գործը ավելի հստակ կազմակերպելու, ինչպես նաև զինված ուժերի անձնակազմի մտավոր-կրթական կարիքներին ծառայելու նպատակով, Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարությունը ձեռնամուխ եղավ Երևանում «Ռազմիկ» անունով զինվորական շաբաթաթերթի հրատարակմանը: Թերթը լույս ընծայելու կապակցությամբ ընթերցողներին ուղղված խմբագրության հայտարարության մեջ ասված էր. «Հայաստանի ռամկավար հանրապետության զինվորական նախարարությունը ձեռնարկել է «Ռազմիկ» զորական շաբաթաթերթի հրատարակումը, հատուկ նպատակ ունենալով ծառայել հայկական բանակի մտավոր-բարոյական կարիքներին: Հավատացած լինելով, որ Դուք ևս նախանձախնդիր

---

81 ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 290, ց. 1, գ. 9, թ. 28:

82 Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 142, թ. 189:

եք հայ զինվորականության առողջացման, պետականության զարգացման անհրաժեշտության և մեր բազմատանջ հայրենիքի վերածնությանը, «Ռազմիկի» խմբագրությունը խնդրում է Ձեզ աշխատակցել զինվորական շաբաթաթերթին»[83]։ Շաբաթաթերթը պարբերաբար անդրադառնում էր ոչ միայն Հայաստանի Հանրապետության զինված ուժերի խնդիրներին, այլև աշխարհի հեռու և մոտիկ թեժ կետերին, տարբեր պետությունների քաղաքական ձգտումներին և նրանց զինված ուժերին, զինատեսակներին և այլ հարցերի։ Թերթը պարբերաբար անդրադառնում էր նաև ներքին կյանքի բազմաթիվ ցավոտ խնդիրների՝ գրոհավաքից խուսափողներին, հանրապետությունում տիրող բարոյական մթնոլորտին, տարածված վարակիչ հիվանդություններին, դասալիքներին աջակցող պաշտոնյաների նկատմամբ պատժիչ միջոցների կիրառման անհրաժեշտությանը և մի շարք այլ կարևոր ու առաջնահերթ լուծում պահանջող հարցերի։ Ինչպես տեղեկանում ենք «Ռազմիկի» խմբագրության հայտարարությունից, թերթի հրատարակման հենց առաջին օրերից, խմբագրությունը ընդհանուր հրավեր էր ուղղել հայ գրողներին ու երաժշտագետներին՝ մտահոգվել հայ զինվորի մտավոր-գեղարվեստական դաստիարակության խնդիրներով։ Եվ, որպես դրա արձագանք, խմբագրությունը մշտապես ստանում էր բազմաթիվ ոտանավորներ, քայլերգեր, օրհներգեր, որոնցից լավագույնները պարբերաբար տպագրվում էին թերթի էջերում։ «Ռազմիկը» բաղկացած էր 16 էջից, իսկ նրա խմբագրությունը տեղակայված էր գլխավոր զինվորական շտաբում, որը գտնվում էր Երևանում։ Մեկ թերթի հատավաճառ արժեքն էր 50 ռուբլի, բաժանորդագրության դեպքում տարեկանը՝ 200 ռուբլի[84]։ Ինչպես իմանում ենք Հայաստանի զինվորական նախարարության գործունեության մասին պաշտոնական տեղեկագրից, չնայած փոխադրական միջոցների սղությանը և անբավարար լինելուն, «Ռազմիկ» համարները պարբերաբար և կանոնավոր կերպով ուղարկվում ու տարածվում էին բանակի բոլոր զորամասերում[85]։

Իր գոյության շրջանում «Ռազմիկի» խմբագրությունը չբավարարվեց միայն շաբաթաթերթի հրատարակմամբ։ Խմբագրության աշխատակիցների կողմից մշակվեցին և հրատարակվեցին մի քանի զինվո-

---

83 Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 438, թ. 22։

84 «Ռազմիկ» շաբաթաթերթ, 9-ը օգոստոսի, № 13, 1920 թ.։ Տե՛ս Հավելված № 8։

85 Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 142, թ. 137։

յական գրքեր, որոնցից կարելի է նշել «Զինվորական մարզանք և կանոնադրություն Երևանյան 1-ին, 2-րդ հրաձգային գնդերի» վերնագրով 39 էջանոց կանոնագիրքը, որը 1918 թ. Երևանում կազմել էին Նժդեհը և Շերամը։ Կանոնագիրքը տպագրվել էր «Լույս» տպարանում։

1920 թ. նոյեմբերի 17-ին «Ռազմիկի» խմբագրությունը ձեռնարկեց և հրատարակեց նաև «Հայ սպայի համար» 29 էջանոց մի գրքույկ, որի նպատակն էր հայկական բանակի տպաներին դաստիարակել հայրենասիրական ոգով և հիմնավորել այն կարևոր դերը, որ դրված էր սպայի վրա հայրենիքի և ժողովրդի պաշտպանության գործում։

«Հայ բանակի սպա,—ասված է նրանում,—քեզանից է կախված քո հարազատ ժողովրդի և հայրենիքի բախտը։

Դու միայն կարող ես պաշտպանել քո պապենական օջախը դրսի մեր թշնամիներից, որոնք մեր իսպառ բնաջնջումն են ցանկանում։

Դու միայն կարող ես քո ետևից տանել հայրենասիրությամբ համակված զինվորներին՝ դարձնելով նրանց անձնվիրության և հերոսության մարմնացում, վառ պահելով նրանց մեջ մեր հայրենիքի արևոտ և ծաղկուն ապագայի հույսը։

Դու միայն կարող ես ամրապնդել և ուժեղացնել մեր ազգային բանակը, որովհետև դու ես այդ բանակի ոգին, նրա սիրտը, հրամայողը։

Քեզանից է կախված քո զինվորների վարքը և բարքը։

Ուրեմն՝ գործի անցի՛ր և դաստիարակի՛ր քո զինվորներին, դաստիարակի՛ր ինքդ քեզ.

Կազմակերպի՛ր Հայաստանի բանակը ամուրջ հիմունքների վրա»[86]։

---

86 Հայ սպայի համար, Երևան, 1920, էջ 29։

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

# ԲԱՆԱԿԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

*Հայաստանի առաջին հանրապետությունը գոյություն ունեցավ չափազանց բարդ ռազմաքաղաքական պայմաններում։ Իր գոյության երկուուկես տարվա ընթացքում հանրապետության բանակի զորամասերը և ստորաբաժանումները ստիպված եղան մշտապես պատերազմական գործողություններ վարել ինչպես հարևանների՝ Վրաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի դեմ, այնպես էլ ներքին ճակատների՝ ադրբեջանական խռովարար շրջանների դեմ։ Վեճերի, ընդհարումների, պատերազմի պատճառները տարածքային հարցերն էին։*

*1918 թ. նոյեմբերին Վրաստանում (Թիֆլիսում) հաստատված անգլիական զորքերի հրամանատարությունը պահանջեց Թուրքերից կատարել Մուդրոսի 1918 թ. հոկտեմբերի 30-ի զինադադարի պայմանները՝ դուրս հանել զորքերը Հայաստանից և վերականգնել 1914 թ. ռուս-թուրքական սահմանները։ Դեկտեմբերի սկզբին թուրքերը թողեցին Ալեքսանդրապոլը։ Այն թողեցին թալանված, քայքայված վիճակում։ Հանրապետության արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչը Հայաստանի արտաքին գործերի նախարարին հղած նամակում մանրամասն նկարագրել է ստեղծված մռայլ վիճակը։ Ահա այդ նամակի բովանդակությունը.*

*«Այն, ինչ արված է տաճիկների՝ Ալեքսանդրապոլի շրջանում վեցամսյա տիրապետության միջոցում և առանձնապես այն, ինչ կատարվում է վերջին օրերս, նրանց այստեղից հնարավոր հեռացման դուրսթաց՝ ուրիշ անուն կրել չի կարող, քան սիստեմատիկ տնտեսական քայքայում, հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման հետապնդում։*

Օսմանյան կառավարությունն անում է ամենը այդ նպատակին հասնելու համար, անում է անշեղ, համառ։

Գյուղից տարված է ամեն ինչ՝ և անասուն, և բերք, և տնային իրեր։ Հայ գյուղացին այժմ ոչինչ չունի, կերակրվում է միայն կանաչով, արմտիքներով ու այդ հողի վրա զարգանում է մահացությունը, որը սոսկալի չափերի է հասնում։ Բայց, չնայած այս դրության, տաճիկ իշխանությունը զանազան անուններով խլում է նրանից և այն, ինչ մնացել է նրան մոտ ձմռան համար. հարյուր հազարավոր փթերով տանում են ցորենը, գարին, ալյուրը, կարտոֆիլը, տասնյակ հազարներով քշում անասուններ, այն ժամանակ, երբ հայ ժողովուրդը, այդ բոլորի տերը, կամաց-կամաց մեռնում է քաղցից։ Գյուղերից շատերը թալանվել են, բնակչությանը մի շյուղ չոփ չի մնացել։ Աշխատող ձեռքեր էլ չկան. մոտ 10.000 երիտասարդ հավաքվել և շրջանից ուղարկվել է Էրզրում, որը կերեզման է դարձել նրանց համար. շատ քչերն են վերադարձել այնտեղից ու վերադարձողներն էլ այնպիսի դրության են հասցվում, որ ապրել չեն կարող։ Տանում են աշխատանքների նաև իրենց սայլերով, շարչարում ամիսներով, քաղցած ու ծարավ, առանց վարձատրության, մեռնում են մարդիկ, կոտորվում անասունները, իսկ այժմ էլ էվակուացիայի համար Շեֆքի փաշայի կարգադրությամբ հավաքում են եղած սայլերի 85—100 տոկոսը։ Տանում են բոլորին ու մնացողները գիտեն, որ շատ քչերը պիտի վերադառնան այնտեղից։ Շատերն են լալիս՝ տերերը նրանց, որոնք գնացել են սրանցից առաջ, իրենց սայլերով ու հետ չեն եկել. շատերին կոտորել են Էրզրումում ու Ճանապարհին շատերն էլ մեռել են՝ չկարողանալով դիմանալ այդ սոսկալի պայմաններին։ Գնացողներին այստեղ ցուցակագրում ենք ապագայում ստուգելու համար, թե քանիսն են նրանցից վերադառնալու։

Գյուղերում հաճախացել են բռնաբարությունների, թալանի ու սպանության դեպքերը. շատացել են քյուրդերի ավազակությունն ու ավարառությունները, իսկ քաղաքում կատարվում է թալան ավելի «օրինական»։ Տանում են ամեն ինչ. տնային իրերը, հասարակական ու պետական գույքը։ Կայարանից ու դեպոյից տանում են, ծախում, փչացնում ամեն ինչ ու վաղը, հաղորդակցության միջոցներից զուրկ, պիտի ակամա գաղարի երթևեկությունը՝ իր հետ բերելով սոսկալի հետևանքներ։ Տեսնում եմ բոլորը, բողոքում, դիմումներ անում, բայց իրական հետևանքների հասնել անհնարին է այստեղ։

Գերիների համար, իմ բոլոր դիմումներին ստացա միայն մի պատասխան, որն ավելի շուտ ծաղր է այդ հազարավոր թշվառների ու հայ կառավարության հասցեին՝ սպանություն, ձերբակալություններ չեն կատարվել, սակայն թող Հայաստանի ներկայացուցիչը հանգիստ լինի. ձերբակալվածների վերաբերմամբ արդարություն պիտի կատարվի։ «Արդարություն»... որ շատ նշանակություններ կարող է ունենալ իրեն իսկ նշանակությունից շատ տարբեր, առանձնապես տաճկի բերանում, հայի վերաբերմամբ։ Արդարություն պիտի գործադրվի։ Բայց ե՞րբ պիտի արձակվեն այն հազարները, որոնք տանջվում են գերության մեջ, եթե միայն այդ տանջվողները արդեն մի վերջ չեն ունեցել այնտեղ, էրզրումում ու Կարսում։

Դիմում եմ, ցույց տալիս դաշնագիրը, սակայն դաշնագիրը իրենց համար Շեֆքի փաշան էր։ Կարգադրել է գրավել։

Գործադրում են և այնպիսի խստություններ, որոնք ոչ մի բանավոր բացատրություն ունենալ չեն կարող։ Գալիս են հայկական գնացքներ ու օրերով կանգնում Ջաջուռում։ Գնացքը պիտի սպասի մինչև ամեն անգամ Շեֆքի փաշայից անցնելու թույլտվությունն ստանա, իսկ այդ հետևում է միայն մեկ, երկու, և նույնիսկ երեք օր հետո։ Ինչո՞ւ է արվում այդ, այստեղ միայն Շեֆքի փաշայի կամայականությունն ու հայատելությունն է—ուրիշ ոչ մի բացատրություն չի կարող լինել։

Քանի Շեֆքի փաշան յուր տեղումն է, այստեղ ոչինչ անել չի կարելի։ Կարծում եմ, որ հայ կառավարությունը պիտի շտապի դիմել և՛ Պոլիս, և՛ դաշնակից պետություններին՝ ամենից առաջ թույլ չտալու, որ այստեղից արտահանվի ժողովրդի, պետական ու հասարակական դույքը ու առանձնապես հացը, կենսամթերքները, վերադարձնելու գերիներին, եթե դեռ կենդանի են, դադարեցնելու սայլերի բեղյառը, հեռացնել տալու յուր պաշտոնից Շեֆքի փաշային, որը մասամբ հեղինակն է ու տոն տվողը բոլոր այս խժդժությունների ու սրա հետ միջոցներ ձեռք անել հենց հիմիկվանից, որ տաճիկների հեռանալուց հետո ժողովուրդը սովից չմեռնի։ Հաց—այս հրամայական ու անհետաձգելի պահանջն է մոմենտի. ու հաց ձեռք բերելու համար պիտի արվի կարելին ու նույնիսկ անկարելին, այլապես Ալեքսանդրապոլի շրջանի ժողովուրդը անպայման մահվան է դատապարտված։ Կարծում եմ, որ կանոնավոր ստատիստիկա և ամբողջ պատկերը ունենալով միայն կարելի կլինի դիմել Ամերիկային ու դաշնակիցներին՝ մեր տված հսկայական կո-

բուստների վարձահատուցման և հնարավոր օգնության ու երկրի վերաշինության աջակցության համար»[1]։

Թուրքերի հեռանալուց անմիջապես հետո Ալեքսանդրապոլ մտան գեներալ-մայոր Հովսեփյանցի հրամանատարության տակ գտնվող Հայկական 2-րդ բրիգադի 1-ին (հրամանատար՝ գնդապետ Հարությունյան) և 4-րդ (հրամանատար՝ գնդապետ Միրիմանյան) հրաձգային գնդերը, հեծյալ գունդը և հրետագորը։ Միաժամանակ Ալեքսանդրապոլ ժամանեց հրետանային վարչության պետ գեներալ-մայոր Դամաղյանը, որը պետք է միջոցներ ձեռք առներ Թուրքերի կողմից քաղաքում թողնված հրաղենի պահեստները ընդունելու և կարգի բերելու ուղղությամբ։

Հայկական զորքերի Ալեքսանդրապոլ մտնելու պահին թուրքերը թալանել էին զինանոցները, հրետանային պահեստները. սակավաթիվ ռազմամթերքը բարձիթողի վիճակում էր։ Պահեստների գոները բաց էին, հրետանային արկերը և վառոդը թափված էին գետնին, բաց երկնքի տակ։ Դեկտեմբերի 12-ին պահեստներում տեղի ունեցավ ուժեղ պայթյուն, որը ոչնչացրեց ոչ միայն առանց այն էլ զինամթերքի սակավ պաշարները, այլև մեծ վնաս հասցրեց երկաթգծի կայարանին և նրա մոտակա շինություններին։ Հայկական բանակին պիտանի զինամթերքից Ալեքսանդրապոլի պահեստներում մնացել էին միայն «Լյուիս» գնդացրի շնչին քանակությամբ մարտական փամփուշտներ[2]։ Անմխիթար վիճակում էին Ալեքսանդրապոլի զորանոցները՝ ջարդված և թալանված, առանց լուսամուտների և դռների։ Ավերված վիճակում էր նաև երկաթգիծը, կիսաքանդված էին կայարանի շինությունները, կտրված և հափշտակված էին հեռագրային ու հեռախոսային լարերը, ապարատները, ավերված էր քաղաքի ջրամատակարարումը։ Ալեքսանդրապոլի կայարանում թողել էին մեծ քանակությամբ փչացած շոգեքարշեր և ապրանքատար վագոններ։ Երկաթգծի այս ողբալի վիճակը ծայրահեղ դժվարացնում էր հաղորդակցությունը և փոխադրումները, որոնց իրականացնելու անհրաժեշտությունն ավելի էր զգացվում հանրապետությունում ներքին կարգուկանոն հաստատելու դժվարին պայմաններում։ Այդ զգացվեց և հայ-վրացական պատերազմի ժամանակ։ Հարաբերությունները երկու բարեկամ ժողովուրդների միջև սկսեցին սրվել դեռևս 1918 թ. մայիսի վերջից՝ Անդրկովկասում երեք անկախ հանրապետությունների

---

1. ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 2, գ. 23, թ. 12—14։
2. Տե՛ս նույն տեղում, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 5։

ստեղծումից անմիջապես հետո։ Սկզբնապես դրա համար առիթ հանդիսացավ այն հանգամանքը, որ Վրաստանի կառավարությունը չէր ուզում Թիֆլիսից բաց թողնել Հայոց ազգային խորհրդի դույքը, այն միակողմանիորեն համարելով իր սեփականությունը։ Հայերի հանդեպ անբարյացակամ վերաբերմունք Վրաստանի կառավարությունը ցուցաբերեց նաև 1918 թ. հունիսի 21-ին, երբ Թիֆլիսից Հայաստան էին տեղափոխվում նորաստեղծ Հայաստանի Հանրապետության կառավարության անդամները։ Նրանց տեղափոխող 3 ավտոմեքենաները մեծ դժվարությամբ բաց թողնվեցին դեպի Երևան, ընդ որում նրանց ճանապարհելու համար չէր եկել Վրաստանի ոչ մի պաշտոնական ներկայացուցիչ։ Սակայն Վրաստանի հետ վիճաբանության հիմնական նյութը Բորչալուի գավառում Հայաստանի և Վրաստանի միջև պետական սահմանի որոշման՝ մասնավորապես նրա մեջ մտնող հայաբնակ Լոռիի և Փամբակի, Հարավային Բորչալուի պատկանելության հարցն էր։ Դեռևս 1918 թ. մայիսին, երբ թուրքական զորքերը Ալեքսանդրապոլի գրավումից հետո սպառնում էին հարձակումը զարգացնել դեպի հյուսիս, Հայոց ազգային խորհուրդը, հաշվի առնելով Վրաստանի սահմանների ապահովության հարցը և ընդառաջելով նրա կառավարության խնդրանքին, համաձայնեց, որպեսզի վրացական զորամիավորումները մուտք գործեն այդ շրջանը։ Ընդսմին այդ ժամանակ վրացական իշխանությունները (Նոյ Ռամիշվիլի և Նոյ Ժորդանիա) հավաստիացնում էին Հայոց Ազգային խորհրդի ներկայացուցիչներին (Ա. Ահարոնյան, Ա. Խատիսյան և Հ. Քաջազնունի), որ վրացական բանակը անմիջապես կպարպի Բորչալուն, երբ թուրքերը հեռանան Վրաստանի սահմանամերձ շրջաններից։

Հայոց և վրաց ազգային խորհուրդների լիազորների հանդիպման ժամանակ Ռամիշվիլու առաջարկությամբ ստեղծվեց հանձնաժողով՝ հայ-վրացական սահմանները ճշտելու համար։ Հայոց Ազգային խորհուրդը ներկայացնում էին Խ. Կարճիկյանը, Գ. Խատիսյանը, Գ. Ղորղանյանը, վրացական հանձնաժողովը ղեկավարում էր Հ. Ծերեթելին, որը հայտարարեց, թե սահմանները պետք է գծվեն այնպես, որ Վրաստանին մնան ոչ միայն արդեն գրավված հայկական Բորչալուն, այլև Ղազախի գավառը և Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի շրջանը։ Կարճիկյանը նման առաջարկը գնահատեց որպես Հայաստանը Թուրքիայի, Ադրբեջանի և Վրաստանի միջև բաժանելու դիվային ծրագրի վերականգնում։ Այդ ծրագիրը, բնականաբար, Հայոց Ազգային խորհրդի համար

ընդունելի չէր։ Վրացական կառավարությունը միակողմանի հայտարարեց իր սահմանները, նրանցում ներառնելով հայկական Բորչալուն ու Ախալքալաքը։ Նշվում էր, որ Վրաստանի «Ռազմական, տնտեսական, քաղաքական շահերը հրամայաբար պահանջում են Վրաստանի սահմանների մեջ առնել ամբողջ Բորչալու գավառը»։

Խնդրո առարկա հարցը քաղաքագիտական քննարկումից անցավ ռազմական օրենքների տնօրինությանը։ Ակտիվ գործում էին Վրաստանի Հանրապետության ռազմական նախարար Գեորգաձեն և նրա օգնականները։

Վրաստանի զրահապատ գնացքների գլխավոր հրամանատար Գոգլաձեն, հենվելով Գեորգաձեի կարգադրության վրա, 1918 թ. հոկտեմբերի 21-ին Դիլիջանի հայկական զորքերի հրամանատար Դրոյից պահանջեց 24 ժամվա ընթացքում հետ քաշվել գրաված զիրքից դեպի Շահալի կայարանից արևելք։ Գործողությունները իրականացնելու համար զինվորական նախարարի հրամանով «վիճելի» շրջան ուղարկվեց 250 զինվոր՝ գեներալ Ցիցիանովի հրամանատարությամբ։ Ցիցիանովի զորամասը՝ հետևակ, հրետանի, շարժվեց դեպի Վորոնցովկա։ Նրա վրա դրվեց վրացական գործող զորքերի ընդհանուր հրամանատարությունը։ «Մեր պահանջը, որ հայերը ազատեն ամբողջ Բորչալուի գավառը և հետ քաշվեն մինչև Թիֆլիսի նահանգի սահմանը, անվերապահ է»,—1918 թ. հոկտեմբերի 22-ին գրում էր զինվորական նախարարի տեղակալ գնդապետ Գեղևանովը[3]։

Հայաստանի կառավարությունը, որը չէր ցանկանում պատերազմել Վրաստանի հետ, վրացական կառավարության վերջնագրին տվեց հետևյալ պատասխանը. «Թիֆլիս. վարչապետ Ժորդանիային, պատճենը՝ Հայաստանի ներկայացուցիչ Ջամալյանին.

Դիլիջանի զորամասի պետը հայտնում է, որ վրացական հրամանատարը նրան վերջնագիր է ներկայացրել ազատել Շահալի կայարանը։ Հրամայված է չթողնել կայարանը, իսկ եթե վրացիք հարձակման կանցնեն՝ պաշտպանվել։ Խույս տալու համար բարդություններից, որոնք կարող են նոր թշնամությունների դուռ բանալ, խնդրում եմ, հանուն Վրաստանի և Հայաստանի, որոնք տառապել ու տանջվել են պատերազմից հանուն իրավունքի և արդարության, դդուշանալ հարձակողական գոր-

---

3 Տե՛ս Ա. Ջամալյան, Հայ-վրացական կնճիռը, «Հայրենիք» ամսագիր, № 27, 1928, էջ 85։

ծողություններից և պահել վրաց զորքերին նրանց բռնած այժմյան գծի վրա, իսկ սահմանների խնդիրը լուծել խաղաղ համաձայնությամբ։

Հիշեցնում եմ Ձեզ Ձեր հանդիսավոր հայտարարությունը հունիսին՝ նոյ Ռամիշվիլիի և Ահարոնյանի ու Խատիսյանի ներկայությամբ, թե Վրաստանը ոչ մի հավակնություն չունի Լոռիի նկատմամբ և միայն ժամանակավորապես է գրավել այն։

Վարչապետ Քաջազնունի»[4]։

Թուրքերի հեռանալուց հետո վրացիները իրենց զորքերին ոչ միայն հետ չքաշեցին Բորչալուից ու Լոռիից, այլ անցան նոր զավթողական գործողություններ։ Նրանք դեկտեմբերի 5—10-ը ընկած ժամանակամիջոցում գրավեցին Ախալքալաք քաղաքը և ամբողջ գավառը, որը, ինչպես նշված էր Հայաստանի կառավարության բողոքում, «ո՛չ պատմական, ո՛չ քաղաքական և ո՛չ էլ բարոյական տեսակետից վիճելի չի հանդիսանում»։

Ուժեղացան վրացական ճնշումները Լոռիում, նրանց գեմ հանդես եկավ Ուզունլար (Օձուն), Հազվի, Ամուշ, Ակորի և այլ հայկական գյուղերի բնակչությունը։ Ապստամբած գյուղացիները իրենց գյուղերից վտարեցին վրացական զորքերին։ Սկսվեց վրացական զորքերի հարձակումը կորցրած գյուղերը վերագրավելու համար, սակայն ապարդյուն։ Հայաստանի կառավարությունը պահանջեց Վրաստանի կառավարությունից ազատված շրջաններից հանել վրացական զորամասերը։ Վրացական կառավարությունը հայկական կառավարության այդ պահանջը գնահատեց որպես «միջամտություն Վրաստանի ներքին գործերին»[5]։

Դրան հետևեց հայկական բանակի Դիլիջան—Լոռի ջոկատի հրամանատար Դրոյի հեռագիրը վրացական զորքերի հրամանատարին. «Ձեր և Ձեր տնօրինության տակ գտնվող զինվորների բռնությունը հայ բնակչության նկատմամբ անցնում է բոլոր սահմանները, որի հետևանքով եղել է Հայաստանի կառավարության հրամանը՝ զենքի ուժով վերջ տալ հայ աշխատավոր գյուղացիության նկատմամբ կիրառվող բռնությանը։ Խնդրի եկե՛ք, մի՛ մոռանաք, որ դուք դեմոկրատական հանրապետության զինվորներ եք, որի գլուխը կանգնած են ժողովրդի ինքնորոշումը

---

4 Ա. Ջամալյան, նշվ. աշխ., էջ 92—94, տե՛ս նաև «Հայ-վրացական զինված ընդհարումը», Բաքու, 1919։

5 Նույն տեղում, էջ 97։

հոչակած մարդիկ և անմիջապես արձագանքեք մեր դիմումին, եթե դուք չեք ցանկանում հետագա արյունահեղություն»[6]:

Հայաստանի կառավարությունը շարունակում էր պնդել իր տեսակետը՝ հայ-վրացական սահմանագիծը անցկացնել Շուլավերի մոտով, որից հարավ հիմնականում բնակեցված էր հայերով, իսկ վրացիները, ելնելով իբրև թե ռազմավարական նկատառումներից (սահմանագծի Թիֆլիսին մոտ լինելը և այլն), առաջարկում էին սահմանը անցկացնել բավականաչափ հարավ՝ Լոռու հովտով և Ախալքալաքի գավառի հարավային մասով: Սահմանագծի նման անցկացման դեպքում Բորչալուի գավառի զգալի մասը, ինչպես նաև Ախալքալաքի հարավային մասը, իրենց բացարձակ հայ աղգաբնակչությամբ, անցնելու էին Վրաստանի տիրապետության տակ: Որոշվեց մինչև հարցի շուրջ վերջնական համաձայնության գալը այդ տարածաշրջանը հայտարարել «չեզոք գոտի»: Հայաստանը առաջարկեց հարցի լուծման նպատակով դիմել դաշնակից տերություններին: Սակայն վրացիները, մերժելով հարցի լուծման այդ առաջարկը, որոշեցին տարածքը գրավել զենքի ուժով՝ Լոռիի շրջան ուղարկելով նոր զորամասեր: Հայաստանի Հանրապետության կառավարությունը, բողոք հայտնելով վրացիներին՝ «չեզոք գոտի», զորքեր մտցնելու կապակցությամբ, իր հերթին զորքերը տեղաշարժեց դեպի Ախալքալաքի գավառ, որտեղ տեղակայված էր վրացական մի պարեսատազոր:

Հայ-վրացական պատերազմը սկսվեց 1918 թ. դեկտեմբերի 11-ին, երբ Ալեքսանդրապոլից ուղարկված հայկական 4-րդ հետևակային գնդի առաջին գումարտակը շարժվեց Ախալքալաքի գավառ և, առատ ձյան միջով շարժվելով դեպի քաղաք, ճանապարհին ընդհարում ունեցավ վրացական փոքրաթիվ կայազորի հետ, որը կարճատև մարտից հետո դիմեց նահանջի:

Ռազմական բուռն գործողությունները հայ-վրացական պատերազմում սկսվեցին դեկտեմբերի 12-ից: Այս ռազմաճակատում գործող հայկական զորքերի կազմի մեջ ներգրավվեցին 3-րդ բրիգադի 5-րդ և 6-րդ հայկական գնդերը՝ իրենց տրամադրված հրետանային դիվիզիոնով, որոնք տեղակայված էին Ղարաքիլիսայում և Դիլիջանում, 2-րդ հետևակային գունդը՝ 6-րդ հրետանային մարտկոցով, 4-րդ գունդը, որից մեկ գումարտակ արդեն ուղարկվել էր Ախալքալաք, գնդապետ Կորոլկովի սահմանապահ հեծյալ գունդը, որը տեղաբաշխված էր Շահալի-

---

6 ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 149, թ. 76:

Վորոնցովկա ուղղության վրա։ Բացի հայկական դիվիզիայի այս կանոնավոր գնդերից կային նաև աշխարհազորայիններից կազմավորված մի քանի վաշտեր՝ յուրաքանչյուրում 100—200 մարդ։ Այս ճակատում գործող հայկական կանոնավոր բանակի ընդհանուր թիվը կազմում էր 6000 մարդ և 2000 աշխարհազորայիններ, 16—20 հրանոթ։ Հայկական զորքերի ընդհանուր հրամանատարությունը հանձնված էր հայկական առանձին դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Մովսես Սիլիկյանին, որի շտաբը տեղակայված էր Ղարաքիլիսայում։ Գեներալ Սիլիկյանի հրահանգների համաձայն հայկական զորքերը շարժվում էին երեքշարասնյա մարտակարգով։ Գլխավոր զորաշարասյունը շարժվում էր Ղարաքիլիսա—Թիֆլիս երկաթգծի ուղղությամբ։ Նրա ձախ թևից Վորոնցովկա—Եկատերինֆելդ ուղղությամբ շարժվում էր 5-րդ գնդի փոքրաթիվ շարասյունը, իսկ աջ թևից 6-րդ գնդի մի զորամաս, որը ուժեղացված էր տեղական խմբերի հաշվին, առաջանում էր Այրումի ուղղությամբ։ Սանահինի մոտ վրացական զորքերի հետ դեկտեմբերի 20-ից 22-ը տեղի ունեցած գլխավոր շարասյան համառ կռիվները ավարտվեցին հայերի լիակատար հաղթանակով։ Հայկական զորքերի հաղթանակով ավարտվեցին նաև վրացիների հետ ձախ թևի զորաշարասյան մարտերը, որի հետևանքով գրավվեց Այրումը։ Այդ մարտից հետո հայկական զորքերի ձեռքն ընկան վրացական 2 զրահագնացք, 3-րդը պայթեցրին իրենք՝ վրացիները։ Բացի դրանից վրացիներից գրավվեց մեկ գնացք՝ լրիվ կազմով, և հագուստեղենով ու պարենով բեռնված 3—4 վագոն։ Այրումի մոտ տեղի ունեցած կռիվներում հայկական զորամասերը գրավեցին նաև վրացական զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Մազնիևին պատկանող անձնական վագոնը, ինչպես նաև գերեվարվեց մի ամբողջ վրացական զումարտակ, գնդապետ Էրիստովի գլխավորությամբ, որը պահակազորի ուղեկցությամբ ուղարկվեց Դիլիջան։ Հայկական զորքերը շարունակեցին իրենց առաջխաղացումը և դեկտեմբերի 25-ին, կոտրելով վրացիների համառ դիմադրությունը, գրավեցին Սադախլուն և Շուլավերը։

Պատերազմը սկսվելու հենց առաջին պահից Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը և Հայաստանի կառավարությունը ձեռնամուխ եղան եղբայրասպան պատերազմը դադարեցնելու, արյունահեղությանը վերջ տալու գործին։ Ազգային խորհուրդը դեկտեմբերի 13-ին որոշեց պատվիրակություն ուղարկել Լոռի՝ ապստամբած գյուղացիության մոտ, և բանակցել Վրաստանի կառավարության հետ։ Ժորդանիայի, Դեգեչկո-

ռու, Ռամիշվիլու հետ բանակցությունները վարում էին Հայոց ազգային խորհրդի նախագահ, Վրաստանի պառլամենտի անդամ Արամայիս Երզնկյանը, Արտեմ Խաչատրյանը, Յաղջյանը։ Նախնական համաձայնության գալուց հետո, զինված համապատասխան փաստաթղթերով և հրահանգներով, պատվիրակության անդամները (Երզնկյան, Քոչարյան, Աբովյան, Հայաստանի պառլամենտի անդամ Տեր-Օհանյան) դեկտեմբերի 15-ին գուրս եկան Թիֆլիսից՝ Վորոնցովկայի վրայով Ղարաքիլիսա գնալու համար։ Պատվիրակության նպատակն էր՝ անցնելով ճակատային գծից, կապվել ապստամբների և Հայաստանի Հանրապետության կառավարության հետ՝ բոլոր վիճելի հարցերը խաղաղ ճանապարհով լուծելու համար։ Սակայն նույն օրը՝ դեկտեմբերի 15-ին, հասնելով Եկատերինֆելդ, պատվիրակությունը վրացական ժողովրդական գվարդիայի շտաբի անդամ Մայսուրաձեի կողմից առաջ անցնելու թույլտվություն չստացավ։ Պատվիրակության անդամները ենթարկվեցին ծեծի և վիրավորանքի։ Պարզ դարձավ, որ վրացական կառավարության հավաստումը, թե պետք է վերջ տալ «երկու ժողովուրդների ընդհարումներին, որոնք ներ են քաշվել եղբայրասպան պատերազմի և կռիվների բոցի մեջ»[7], սոսկ հայտարարություն է։

Վիճելի խաղաղ լուծմանը իր ծառայությունն առաջարկեց անգլիական հրամանատարությունը։ Հայաստանի և Վրաստանի կառավարություններին կապիտան Գրինը ներկայացրեց նախագիծ, որտեղ առաջարկվում էր. 1. զինադադար 14 օրով, 2. պատերազմող երկու կողմերն էլ թողնում են բոլոր վիճելի մարզերը և Ախալքալաքը, 3. բոլոր գյուղացիները պետք է մնան հանգիստ և ոչ մեկը չպետք է խառնվի նրանց գործերին, 4. երկաթուղին պետք է վերականգնվի. բոլոր գնացքները պետք է բաց թողնվեն և ճանապարհը պետք է անհապաղ բաց լինի ինչպես վրացիների, այնպես էլ հայերի համար, 5. երկու կողմերն էլ պետք է ուղարկեն պատվիրակություններ՝ հարցի համատեղ լուծման համար, 6. զրահագնացքը պետք է դտնվի բրիտանական հրամանատարության տրամադրության տակ, 7. փախստականների գծով հայկական հանձնաժողովին պետք է թույլատրել մնալ Ախալքալաքում և շարունակել աշխատանքը անխափան. սննդամթերքը պետք է անցնի անարգել[8]։

Դեկտեմբերի 15-ին վարչապետ Քաջազնունին Ղարաքիլիսայում գտնվող Սիլիկյանի միջոցով Դրոյին հեռագրով հայտնում էր, որ կա-

7 ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 149, թ. 70—72։

8 Նույն տեղում, թ. 73։

պիտան Գրինի առաջարկությունը սկզբունքորեն ընդունելի է, սակայն պառլամենտին զեկուցելու համար անհրաժեշտ է պարզաբանում.

1-ին կետի կապակցությամբ։ Կերաշխավորվի՞ արդյոք, որ զինադադարը չի օգտագործվի վրացիների կողմից զորքերի ուժեղացման և կենտրոնացման համար։

2-րդ կետի կապակցությամբ. Ազգային և ժողովրդի ինքնորոշման սկզբունքի հիման վրա ամբողջ Ախալքալաքի գավառը և Բորչալուի հայկական մասը անվերապահորեն պետք է համարել Հայաստանի մասը և պետք է պատկանի Հայաստանին. վիճաբանական է համարվում Խրամ գետի հյուսիսային մասը։

5-րդ կետի կապակցությամբ. Ինչպիսի՞ հարցեր են նախատեսվում դնել և լուծել Սանահինում՝ Հայաստանի և Վրաստանի ներկայացուցիչների հավաքում։

6-րդ կետի կապակցությամբ. Չի կարելի՞ արդյոք զրահազնացքը դնել Հայաստանի կառավարության տրամադրության տակ. դա ծայրահեղ անհրաժեշտ է Երևան—Ջուլֆա երկաթուղին պարսկական քրդերից պաշտպանելու համար։

Քաջազնուն հետաքրքրում էր նաև, թե արվա՞ծ են արդյոք նույն առաջարկությունները վրաց կառավարությանը[9]։

Պարզելով իրեն հետաքրքրող հարցերը Հայաստանի կառավարությունը անհրաժեշտ գտավ Սանահին ուղարկել լիազորներ՝ Վրաստանի կառավարության լիազորների և կապիտան Գրինի հետ ռազմական գործողությունների դադարեցման պայմանները սահմանելու համար։ Հայաստանի պառլամենտը գտնում էր, որ որպես անհրաժեշտ պայման պետք է ընդունել այն, որ Հայաստանը կարող է Բորչալուի գավառից հանել իր զորքերը միայն այն դեպքում, եթե կլինի երաշխիք, որ այդ գավառը, ինչպես նաև Ախալքալաքը կապահովեն վրացական զորքերի նոր ներխուժումից։ Պառլամենտի այս որոշման մասին դեկտեմբերի 17-ին վարչապետ Քաջազնունին հայտնեց կապիտան Գրինին[10]։

Արտաքին գործերի նախարար Տիգրանյանը այդ որոշման մասին իր հերթին հայտնեց Վրաստանի արտաքին գործերի նախարարին և Վրաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչին։

---

9 Նույն տեղում, թ. 62։

10 Նույն տեղում, թ. 74։

Մերժելով վրացական կողմի մտացածին մեղադրանքները՝ Տիգրանյանը հույս էր հայտնում, որ Վրաստանի կառավարությունը ընդառաջ կգնա Հայաստանի կառավարության պատրաստակամությանը՝ հաստատել ամուր և խաղաղ հարաբերություններ բնակչության ինքնորոշման ու տարածքային իրավունքների սկզբունքների փոխադարձ հարգման հիման վրա։ «Մեր պատվիրակությունը ուրախ կլինի հանդիպել Ձեր լիազորների հետ համերաշխ աշխատանքի համար՝ ի փառս լավագույն պատմական ավանդույթներով կապված, ընդհանուր մշակութային իդեալներով ներծծված երկու հարևան ժողովուրդների բարօրության»[11],— գրում էր Տիգրանյանը։

Բանակցությունների սկսվելը ձգձգվում էր, մարտերը՝ շարունակվում։

1918 թ. դեկտեմբերի 26-ի դրությամբ հայկական զորքերը վերցրել էին 1000 ռազմագերի, որից 40 սպա, գրավել 400 վագոն, 25 շոգեքարշ, 39 գնդացիր և 3 զրահագնացք[12]։ Սակայն վրացիները, կենտրոնացնելով թվապես մի քանի անգամ գերազանցող ուժեր, անցան հարձակման և 4 օր տևած համառ մարտերից հետո, ճեղքելով ճակատը, ետ գրավեցին Շուլավերը և շարժվեցին դեպի Սադախլու։ Հայկական զորքերը նահանջեցին դեպի Այրում։ Սակայն դեկտեմբերի 31-ին հայերը, նորից անցնելով հարձակման, վերագրավեցին Սադախլուն և սպառնացին Թիֆլիսին։ Հենց այդ ժամանակ Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչների միջնորդությամբ կնքվեց զինադադար և 1918 թ. դեկտեմբերի 31-ի գիշերը ժամը 24-ից դադարեցվեց հայ-վրացական պատերազմը։ 1918 թ. դեկտեմբերի 11-ից մինչև 31-ը՝ 20 օր տևած կարճատև հայ-վրացական պատերազմի արդյունքը եղավ այն, որ Հայաստանը փաստորեն կարողացավ իր տիրապետության տակ վերցնել Վրաստանի կողմից զավթված հայկական տարածքների մեծ մասը և ստիպեց վրացիներին այսուհետև ավելի զգույշ և հարգալից վերաբերվել հայերին[13]։

Հայ-վրացական պատերազմը որոշ ժամանակ շեղեց Հայաստանի կառավարության ուշադրությունը Թուրքերից ազատված հայկական տարածքների զբաղեցման հիմնական խնդրից։ Սակայն պատերազմի

---

11 Նույն տեղում, թ. 77։

12 Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 16, թ. 373—374։

13 Տե՛ս նույն տեղում, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 2—10։

ավարտից հետո այդ հարցը նորից դարձավ կառավարության առջև ծառացած առաջնահերթ խնդիր։

Ալեքսանդրապոլը թուրքական զորքերից մաքրելուց հետո, Թիֆլիսից Կարս ժամանեցին 2 անգլիական զումարտակներ, որոնց պահանջով թուրքերը հեռացան նաև Կարսի մարզից՝ մինչև 1914 թ. սահմանները։ Կարսում մնաց միայն փոքրաթիվ մի կայազոր, որը պետք է ղեկավարեր զինվորական գույքի տեղափոխմամբ։ Կարսում իբր թե քաղաքացիական ինքնակառավարումն իրականացնելու համար կազմակերպվեց տեղական ազգային խորհուրդ՝ «Միլլի Շուրա»։

«Կարսի ազգային խորհրդի կառավարությունը» և Նախիջևանում «Արաքսի Հանրապետությունը» միավորվեցին և կազմավորեցին «Հայրավարեմտյան Կովկասյան հանրապետությունը»։ «Հանրապետությունն» ընդգրկում էր Բաթումից մինչև Նախիջևան ընկած տարածքը և գործում «Արևելյան Անատոլիայի իրավունքների պաշտպանության ընկերության» հետ համատեղ։ «Հանրապետությունը», ստանալով Ադրբեջանի կառավարության աջակցությունը, գործեց մինչև անգլիացիների հեռանալը և Հայաստանի Հանրապետության զորքերի այստեղ գալը։ 1919 թ. մարտ ամսին անգլիական բանակի հրամանատարությունը դիմեց Հայաստանի կառավարությանը՝ Կարսի մարզը զբաղեցնելու առաջարկությամբ։ Հայաստանի կառավարությունը տվեց դրական պատասխան։ Կարս տեղաշարժվեցին Ալեքսանդրապոլում տեղակայված գեներալ-մայոր Արտեմ Հովսեփյանցի գլխավորած 3-րդ բրիգադի 1-ին և 4-րդ հետևակային գնդերը, հեծելազորային գունդը, Ալեքսանդրապոլի զումարտակի մի մասը և հրետանային դիվիզիոնը։ Անգլիացի սպաների հսկողությամբ թուրքերը հայկական զինվորական իշխանություններին հանձնեցին Կարսում մնացած նախկին ռուսական բանակին պատկանող գույքը՝ հիմնականում բերդապահ հրանոթներ, արկեր և ռազմատեխնիկական գույքի մի մասը, որը թուրքերը չէին հասցրել տանել իրենց հետ։

Սակայն հրետանու զգալի մասը, արկերով հանդերձ, անգլիացիները գնացքով տեղափոխեցին Ադրբեջան՝ իբր գեներալ Բիչերախովին հանձնելու համար։ Գեներալ Սիլիկյանի փորձը՝ Ալեքսանդրապոլից նա դարձնել գնացքը, առաջ բերեց անգլիացիների խիստ դժգոհությունը՝ ուժ գործադրելու սպառնալիքով։

Բրիտանական զինվորական իշխանությունների՝ Կարսից 60 հրանոթ, մեծ քանակությամբ արկեր, փամփուշտ, ավտոմոբիլային սար-

քեր, բամբակ և այլ գույք, հարստություն տանելու մասին գեներալ Սիլիկյանը շտապ հայտնեց գլխավոր հրամանատար գեներալ-լեյտենանտ Նազարբեկյանին։ Սիլիկյանի զեկուցագրի մասին Նազարբեկյանը և շտաբի պետ գեներալ-մայոր Հախվերդյանը 1919 թ. մայիսի 2-ին հայտնում են զինվորական նախարար Ք. Աբաբաթյանին. «Այդ բոլորը զորքի և ժողովրդի վրա թողնում են ճնշող տպավորություն, առավել ևս, որ այդ գույքը ուղարկվում է Բաքու, որը կարող է ընկնել Ադրբեջանի կառավարության ձեռքը»։ Բողոքարկելով բրիտանական հրամանատարության և առանձին անձանց ապօրինի գործողությունների դեմ՝ Նազարբեկյանը պահանջում էր վերջ տալ գույքի հափշտակմանը և արտահանմանը[14]։ Գեներալ Նազարբեկյանի մտավախությունն անհիմն չէր։ Ադրբեջանական կառավարության նպատակները երևում են դիվանագիտական ներկայացուցիչ Խան Թեքինսկու՝ 1919 թ. մայիսի 10-ին կառավարության նախագահ Խան Խոյսկուն հղած հեռագրից. «Պատրվակով, թե բոլշևիկները սպառնում են Բաքվին, խնդրեք անգլիացիներին Կարսից թնդանոթները տեղափոխել Բաքու»[15]։ Նույն Թեքինսկին 1919 թ. ապրիլի 18-ին առաջարկում էր կառավարությանը՝ բողոքարկել Հնդկաստանի, Թուրքեստանի, Աֆղանստանի, Մալայան կղզիների, Կովկասի ամբողջ մահմեդական աշխարհի, ինչպես նաև Հաշտության կոնֆերանսի առաջ «անգլիացիների ցանկության դեմ՝ մի քանի միլիոն մուսուլմաններին կես միլիոնանոց հայերին ենթարկելու մտադրության համար»[16]։

Կարսի բերդապահ Հրեատանին քաղաքից հանելու հետևանքով հայկական բանակը զրկվեց հրեատանուց և այս հանգամանքը կարևոր նշանակություն ունեցավ 1920 թ. հայ-թուրքական պատերազմի ժամանակ Կարսը թուրքերի կողմից հեշտությամբ գրավելու գործում։ Հայկական զորքերին գույքի փոխանցման ավարտից հետո Կարսից դեպի Էրզրում քաշվեցին այնտեղ մնացած թուրքական վերջին զորամասերը։ 1919 թ. մարտի 19-ին Կարս ժամանեց Հայաստանի կառավարության կողմից մարզի նահանգապետ նշանակված Ստեփան Ղորղանյանը։ Դրանից քիչ անց անգլիական դումարտակները վերադարձան Թիֆլիս, որից հետո Կարսի մարզում իշխանությունը ամբողջովին անցավ Հայաստանի Հան-

---

14 ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 158, թ. 4։

15 Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 299, թ. 7։

16 Նույն տեղում, թ. 4։

բապետությանը։ 1919 թ. մայիսի կեսին Կարս ժամանեց գեներալ-մայոր Դանիել Բեկ Փիրումյանը, որը Հայաստանի կառավարության կողմից նշանակվել էր Կարսի ամրոցի զինվորական պարետ և ենթաշրջանի զորահրամանատար։ Այդ ժամանակամիջոցում կազմակերպվեց նաև ամրոցի բերդապահ զորքերի հատուկ շտաբը, որի պետ նշանակվեց փոխգնդապետ Առաքելյանը։ Կարսից հետո, նույն թվականի մարտի վերջին, Հայաստանի Հանրապետության բանակի ստորաբաժանումները զբաղեցրին նաև Իգդիրը, ուր մտան գեներալ Միքայել Մելիք-Մուրադյանի զորաջոկատի 2-րդ հետևակային գունդը (հրամանատար՝ փոխգնդապետ Հասանփաշայան), 6-րդ լեռնային մարտկոցը (հրամանատար՝ կապիտան Միրիմանյան) և միլիցիոներական պահեստազորային ուժերը։ Այնուհետև, ապրիլի վերջին, Հանրապետության բանակի 4-րդ հետևակային գունդը գրավեց Սարիղամիշը, իսկ քիչ անց՝ նաև Օլթիի մի մասը։ Սակայն քրդական զինված ջոկատների մշտական հարձակումների պատճառով հայկական զորքերը հարկադրաբար թողեցին վերջինս, իսկ 1920 թ. սկզբին այդտեղ մտցվեցին թուրքական զորքեր։ Կարսի, Կաղզվանի և Արդահանի դավառները, ուր մտան հայկական զորքերը, ավերված էին. թուրքերի կողմից թալանվել և ավերվել էր 117 հայկական գյուղ, կովկաս էր փախել 13 203 գերդաստան[17]։

Բաթումի պայմանագրի չեղյալ հայտարարումը և դաշնակից տերությունների կողմից Հայաստանը 1914 թ. սահմաններով ճանաչման փաստը Հանրապետության կառավարությանը հնարավորություն էր տալիս Հայաստանին միացնել նաև Նախիջևանը և Զանգեզուրը։ 1919 թ. հունիսի սկզբին հայկական զորքերը, անգլիական գնդապետ Լոուդենի վաշտի օգնությամբ, որն այնտեղ էր ժամանել մայիսի վերջին, գրավեցին Նախիջևանը։ Այնտեղ ուղարկվեցին գեներալ-մայոր Շելկովնիկյանի գլխավորած 1-ին բրիգադի զորամասերը, կապիտան Խուդավերդյանի սահմանապահ գումարտակը (375 սվին), պորուչիկ Ժամհարյանի նախկին հայկական Առանձին դիվիզիայի շտաբի պարետային վաշտը (100 սվին), պորուչիկ Գավրիշայի սահմանապահ հեծելազորային գնդի 2 հարյուրյակ և պորուչիկ Մինասյանցի գլխավորած հրետանային դասակը։ Նախիջևանյան կայազորի զորաջոկատի պետ նշանակվեց գեներալ Շելկովնիկյանը։ Որպես քաղաքացիական իշխանության ներ-

---

17 Տե՛ս ՀՍՍՀ պատմության ինստիտուտի արխիվ, ԼԵՈՅԻ ֆոնդ, ֆ. 1, ց. 1, գ. 241—245։

կայացուցիչ Նախիջևան ժամանեց Հայաստանի կառավարության կողմից այնտեղ նահանգապետ նշանակված Գևորգ Վարշամյանը։

Չնայած հայկական և անգլիական զորքերի ներկայությանը, հաղորդակցությունը Նախիջևանի և Երևանի միջև ընդհատված էր, քանի որ երկաթուղու երկայնքով բնակվող ադրբեջանական ազգաբնակչությունը, որը հրահրվում էր տեղական խանների և Թուրք-ադրբեջանական զինվորական հրահանգիչների կողմից, թշնամաբար էր տրամադրված դեպի Հայաստանը, չէր ճանաչում նրա կառավարության գերիշխանությունը, մշտական հարձակումներ էր գործում երկաթգծի վրա և արգելում էր գնացքների երթևեկությունը։ Այդ պատճառով էլ 1919 թ. հուլիսին, նախիջևանյան զորաջոկատը ուժեղացնելու նպատակով, այնտեղ ուղարկվեց նոր կազմավորված առանձին գումարտակ, որի հրամանատարն էր փոխգնդապետ Մամաջանյանը։

Հայաստանի Հանրապետության ներքին կացության ամենացավոտ երևույթներից մեկը Հայաստանում ադրբեջանական ազգաբնակչության հակապետական շարժումներն էին, որոնք կազմակերպվում էին Թուրքիայի և Ադրբեջանի կողմից՝ երկիրը ներսից պայթեցնելու և հայկական պետականությունը խորտակելու նպատակով։ Հայկական պետության ստեղծման իսկ օրվանից Հայաստանի տարածքում բնակվող ադրբեջանցիները թշնամական դիրք բռնեցին դեպի իշխանությունները, նրանք չէին ուզում հաշտվել հայկական պետության ստեղծման փաստի հետ և ձգտում էին միանալ Ադրբեջանին կամ էլ Թուրքիային։ Ֆրանսիական զինվորական առաքելության սպա կապիտան Պուագեբարի վկայությամբ, Թուրքիայի բացարձակ կամքն էր իրեն միացնել Էրզրումից Դաղստան ընկած ամբողջ տարածքը և Թուրքեստանը։ Իսկ դա «ֆիրականանա այն ժամանակ, երբ մուսուլմանները հաղթեն Հայաստանում»[18]։

Գնդապետ Շարդինիեն՝ Անդրկովկասյան ֆրանսիական առաքելության ղեկավարը, առանձնացնում էր Թուրքերի նպատակը՝ Անդրկովկասի հյուսիսում ստեղծել պատնեշային պետություն, ցույց տալ օգնություն Լեռնականների հանրապետությանը, Զանգեզուրի և Ղարաբաղի վրայով ապահովել կապը Թուրքիայի հետ, բռնազավթել մինչև Ջուլֆա և Նախիջևանի շրջանը, Արաքսի միջին հոսանքի միջանցքը»[19]։

---

18 Закавказье в 1918—1920 гг., Свободное слово, Париж, 1991, № 16 стр. 41—49.

19 Նույն տեղում։

Մուսուլմանների հակահայկական, համաթուրքական գործողությունները գլխավորում էր 1919 թ. մարտին Երևանում բացված Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչությունը՝ Խան Թեքինսկու գլխավորությամբ: Ներկայացուցչությունը փաստորեն վեր էր ածվել լրտեսական և հակահայկական խլրտումների և խռովությունների կազմակերպման կենտրոնի:

Արդեն ապրիլի 10-ին, Երևան ժամանելուց մի քանի օր հետո, Խան Թեքինսկին տեղեկացնում էր Ադրբեջանի կառավարության նախագահին և արտաքին գործերի նախարարին. «Հայաստանը ունի 6 հետևակ գունդ, յուրաքանչյուրը բաղկացած 3 դիմարտակից, բացի այդ, կազմավորվում է Ղալարաղյան 6 դիմարտակ և Երևանյան մի դիմարտակ: Կազմավորվում են խմբապետական զորամասեր: Ամբողջ հետևակը 10 հազարից չի անցնում: Գնդերը համալրելու համար հայտարարվել է զորակոչ: Հեծելազորը բաղկացած է 3 դիվիզիոնից՝ յուրաքանչյուրում 3 էսկադրոն: Զիերով ապահովված է միայն մեկ էսկադրոն: Կա 2 դաշտային, 5 լեռնային և 1 հեծյալ մարակոց, 3 պրահագնացք, որը գրավել են վրացիներից»[20]:

Հատուկ ուշադրություն դարձնելով Նախիջևանի շրջանի անցքերին՝ Թեքինսկին ապրիլի 18-ին տեղեկացնում էր կառավարությանը Զոդի շրջանում մուսուլմանների ցույց տված դիմադրության, հայկական զորամասերի հետ սկսած մարտերի մասին[21]: Ապրիլի 29-ին նա ցանկանում էր պարզել, թե ինչպիսի օգնություն ցույց կտա կառավարությունը Նախիջևանցիներին՝ հայկական զորքերի Նախիջևան մտնելու ժամանակ դիմադրություն ցույց տալու դեպքում, «Կուղարկի՞ արդյոք զորք, թեկուզ կամավորների անվան տակ»[22]: Մայիսի 4-ին, խնդրելով շտապ պատասխանել ապրիլի 29-ի հեռագրին, Թեքինսկին ավելացնում էր. «Ինձ Նախիջևանցիները հարցնում են. ինչպես վարվել. կգա՞ արդյոք նրանց օգնության Ադրբեջանը, եթե Նախիջևանցիները հայերին ցույց տան դիմադրություն»[23]: Նույն օրվա մեկ այլ հեռագրում հայտնում էր կառավարությանը. «Դեպի Նախիջևան շարժվեցին հայկական գնդերը. որպեսզի զործադրվի ճնշում Հայաստանի

---

20 ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 299, թ. 3, թիվ 41:

21 Նույն տեղում, թ. 4, թիվ 60:

22 Նույն տեղում, թ. 4, թիվ 72:

23 Նույն տեղում, թ. 5, թիվ 83:

վրա, անհրաժեշտ եմ համարում մեր դնդերը անհապաղ կենտրոնացնել Հայաստանի սահմանների վրա։ Նախիջևանի շրջանի բնակչությունը պատրաստ է ցույց տալ դիմադրություն։ Դիլիջանում կանգնած է հայկական 4-րդ գունդը ոչ լրիվ կազմով։ Շարունակվում է հայկական զորքերի կուտակումը Դավալուում, Սագարակ գյուղի մոտ՝ Գայլի դուռքի շրջանում, կանգնած են մուսուլմանները»[24]։

Թեքինսկին կառավարությունից պահանջում էր ամեն կերպ արգելակել մազութի առաքումը Հայաստան։ «Բաց չթողնել նավթի և մազութի ոչ մի վագոն»՝ երկաթուղու աշխատանքը խափանելու նպատակով, քանի որ կարող են սպասվել իրադարձություններ Նախիջևանի շրջանում», դիվանագիտական ներկայացուցչությանը արամադրել մեծ քանակությամբ զրամ՝ զինված ուժեր կազմակերպելու, Հայաստանի դեմ այն օգտագործելու համար։ «Շնորհիվ իմ ձեռնարկած միջոցառումների, Շարուրը, Նախիջևանը, Օրդուբադը միավորվել են ի դեմս Նախիջևանի ազգային խորհրդի, որը ինձ հետ մշտապես պահպանում է կապ»[25],—տեղեկացնում էր նա։

Ահա և արտաքին գործերի նախարար Ջաֆարովի պատասխանը վերջին՝ թիվ 130 հեռագրին. «Հավանություն եմ տալիս Շարուր—Նախիջևանի կապի ստեղծման միջոցառումներին. համաձայն եմ բաց թողնել ֆինանսական միջոցներ՝ զինվորական կազմակերպությունների համար։ Հայտնեցեք նշված պլանի իրականացման և կազմակերպման ձևերը»[26]։

Արտաքին գործերի նախարարը Թեքինսկուն տեղեկացնում էր նաև Ադրբեջանի պաշտպանության կոմիտեի որոշման մասին՝ Հայաստանին նավթ տալը մերժելու վերաբերյալ. «Այդ մասին հայտնում եմ Ձեզ, հայերին չասեք»[27],—գրում է նախարարը։

Ի պատասխան արտաքին գործերի նախարարի հունիսի 5-ի թիվ 1599 հեռագրի, Թեքինսկին հայտնում էր. Շարուր—Նախիջևանի շրջանը ունի կիսականոնավոր զորք՝ մինչև 6.000 զինվոր, հեծելազորով, թնդանոթով, գնդացիրներով, «մարտական հատկանիշներով նրանք հայերին չեն զիջում» պատերազմական գործողությունների ժամանակ կարող են հասցնել մինչև 10.000-ի։ «Կարծում եմ,—գրում է Թեքի-

---

24 Նույն տեղում, թ. 5, թիվ 82։

25 Նույն տեղում, թ. 8—9, թիվ 129, 130, 151։

26 Նույն տեղում, թ. 9, թիվ 1599։

27 Նույն տեղում, թ. 13, թիվ 54։

նրսկին,—մենք պետք է ծախսեր անենք 6.000 զինվորի համար, հին հրամանատարական կազմով, զորքը տեղաբաշխել այն տեղերում, որտեղ գտնվել են մինչև հայերի գալը, մեկ զորամաս կենտրոնացնել Զանգեզուրի լեռներում։ Դրամի ճիշտ ծախսումը լրիվ երաշխավորել դժվար է, գործի կարևորությունը ստիպում է հաշտվել նույնիսկ ոչ մեծ շարաշահումների հետ»[28]։

Կառավարության պահանջին՝ շտապ հայտնել Նախիջևանի, Շարուրի, Վեդի Բասարի, Գողթնի, Օրդուբադի, Ջուլֆայի վիճակի մասին, հունիսի 26-ին Թեքինսկին զեկուցում էր. «Նախիջևանի, Շարուրի, Վեդի Բասարի, Շահթախթիի շրջանները գրավված են հայկական զորքերի կողմից, հաստատված է հայկական վարչություն։ Ջուլֆան հայերի ձեռքին է. մուսուլմանական զորքերը ցրված են։ Կա ընդամենը 300 չեթնիկ»[29]։

«Բարի դրացիական հարաբերություններ ստեղծելու համար» Հայաստան ժամանած Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչը, ծավալելով լրտեսական-հետախուզական լայն գործունեություն, հունիսի 22-ին սադրանքով գրում էր. «Ադրբեջանը բացի Հայաստանից, կարծում եմ, այժմ չունի այլ թշնամի, Հայաստանի վրա պետք է դարձնել հատուկ ուշադրություն. Քուրդ Սմկոյին հարկավոր է գրավել մեր կողմը»[30]։

Թեքինսկին պահանջում էր ադրբեջանական զորքերը կենտրոնացնել Հայաստանի սահմանների վրա, ահազանգում, որ հայկական զորքերը շարունակում են շարժվել դեպի Շարուր, որտեղ ծավալվում են խոշոր իրադարձություններ, գնում են մարտեր։ «Մենք պետք է անհապաղ պատերազմ հայտարարենք Հայաստանին»[31] և «երկու շաբաթվա ընթացքում վերջ տանք Զանգեզուրին, զորքերը շարժենք Ղամարլու»,—գրում էր Թեքինսկին Ադրբեջանի կառավարության նախագահին 1919 թ. օգոստոսի 1-ին և 3-ին,—«Այժմ ամենահարմար ժամանակն է. Հայաստանի կոմիսար ամերիկյան գնդապետ Հասկելի գալուց հետո կլինի ուշ։ Հարձակումը կազմակերպեցեք առանց պատերազմ հայտարարելու։ Շատ եմ խնդրում օգտագործել պահը և չկորցնել ժամա-

---

28 Նույն տեղում, թ. 9, թիվ 150։

29 Նույն տեղում, թ. 10, թիվ 1695, 184։

30 Նույն տեղում, թիվ 202։

31 Նույն տեղում, թ. 14, թիվ 601։

նակ»[32]։ Օգոստոսի 3-ին, նորից զեկուցելով դեպի Դիլիջան, Նոր Բայազետ և Բասարգեչար հրետանի և 8 բեռնատար մեքենաներով արկեր ուղարկելու և այդ շրջաններում 4-րդ գնդի գտնվելու մասին «դիվանագետ-հետախույզը» ենթադրում էր. «որ հայերը այդ նախապատրաստում են մուսուլմանների դեմ» և պահանջում կառավարությունից՝ «ձեռք առնել հարկ եղած միջոցները»[33]։

Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչի հակահայկական բուռն գործունեությունը, Հայաստանի ամբողջ տարածքում լրտեսական ցանցի և գործակալությունների ստեղծումը ոգևորում էր մուսուլմաններին, որոնց զեկավարները գյուղացիությանը տանում էին հակահայկական գործողությունների ճանապարհով։

Հայկական զորքերին կատաղի դիմադրություն էին ցույց տալիս Զանգիբասարում հակասեփական խռովության դրոշ բարձրացրած հրոսակները՝ թուրք սպաների զեկավարությամբ և զինվորների մասնակցությամբ։

Պորուչիկ Եղիազարովի 1919 թ. օգոստոսի 5-ի զեկուցագրի համաձայն, քաղաքական-օպերատիվ դրությունը ծանր էր. Նախիջևանը և Սագարակը Հայաստանից կտրված էին թուրքերի կողմից, որոնց ուժերը հասնում էին 10.000-ի։ Հայկական զորքերը հետ էին քաշվել Դավալու, թուրք-ադրբեջանական զինվորական ուժերը զեկավարում էր գնդապետ Խալիմ բեյը։ Մեծ էր թուրք և թաթար հրոսակների թիվը։ Թուրքերի ապստամբություն էր սպասվում Ղարաբաղում. հայտարարվել էր մինչև 28 տարեկան զինվորների և 40 տարեկան սպաների զորակոչ։ Անգլիացիները մերժել են օգնել հայերին կենդանի ուժով և փամփուշտով, հայտարարելով, թե հաշտության կոնֆերանսը իրավունք չի տվել դաշնակիցներին զորք մտցնել Կովկասում առաջացած պետությունների տարածք։ Թուրքական մեծ ուժեր էին կենտրոնացված Մերդենեկի շրջանում և Էրզրումում. միայն Էրզրումում կանոնավոր զորքերի թիվը 5.000 էր, զինված էր ամբողջ թաթար և թուրք բնակչությունը։

Հաղորդելով այդ մասին՝ պորուչիկ Եղիազարովը օգոստոսի 12-ին հայտնում էր. «Շելկովնիկովի (Նախիջևան) և գնդապետ Կարաքեշիշյանի (Սագարակ) զորքերը դուրս են եկել շրջապատման օղակից և

---

32 Նույն տեղում, թ. 14—15, թիվ 601, 606։

33 Նույն տեղում, թ. 15, թիվ 616։

միացել Դրոյի ուժերին, ներկա պահին դիրքերը կայուն են, զինվորների տրամադրությունը բարձր»[34]:

Հայաստանի զորքերի դրության և թուրք-թաթարական խժդժությունների պատկերը 1919 թ. օգոստոսի 26-ից մինչև սեպտեմբերի 3-ի վիճակով տրված է շտաբի պետի պաշտոնատար կապիտան Շումովի 1919 թ. սեպտեմբերի 5-ի զեկուցագրում: Հայաստանի բանակի շտաբի օպերատիվ տեղեկությունների համաձայն, Երևանյան զորախմբի ամբողջ ճակատով մուսուլմանական բնակչությունը պատրաստվում էր զինված ելույթների: Բասարգեչարի, Թազաքենդի, Դարալագյազի, Նոր Բայազետի և Ղամարլուի շրջաններում ընդհարումներ են տեղի ունեցել զինված խմբերի հետ: Թաթարների գործունեությունը սեպտեմբերի 3-ին աշխուժացել էր Բեյուք Վեդիի մոտ: Կանոնավոր զորքերը և անկանոն կազմավորումները անընդմեջ գրոհել են Բեյուք Վեդիի բարձունքների վրա, սակայն հետ են շպրտվել մեծ կորուստներով: Թուրքերը գրավել են Ներքին և Վերին Աղուլիսը, ուր ժամանել է թուրքական նահանգապետ:

Օգոստոսի 26-ից 28-ը թեժ մարտեր են մղվել Սարիմաղիշի և Կաղզվանի շրջանում: Օգոստոսի 29-ին քրդերը ներկայացրել են վերջնագիր՝ թողնել Կաղզվանը: Հետ մղելով թուրք հրոսակների հարձակումները, հայկական զորամասերը գրավել են Ղարաղուրաղը և Բաշ գյուղը, ետ մղել քրդերի հարձակումը Մերդենեկի շրջանում: Կապիտան Շումովը պաշտոնական հաղորդագրության մեջ նշել է. «Քրդերի կորուստները նշանակալից են, մեր զորքերի տրամադրությունը, հաղթանակի ազդեցության տակ, բարձր է: Հրամանատարական կազմը, ջոկատների պետերի վկայությամբ, ամենուր կռվման բարձրության վրա է»[35]:

Այստեղ տեղին է բերել քաղվածք «Համառոտ տեղեկություններ Հայաստանի Հանրապետության մասին» պաշտոնական տեղեկագրից: «Ջորք» հատվածում ասված է. «Հայկական բանակը կազմված է ռուսական սիստեմով և կառավարվում է ռուսական զինվորական կարգերով: Հրամանատարական (սպայական) կազմը իր կրթությունն ստացել է ռուսական դպրոցներում, զինվորների մեծ մասը ծառայած և վարժված է ռուսական բանակի մեջ: Բոլշևիկյան շարժումներից հայ-

34 ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 177, թ. 30:

35 Նույն տեղում, թ. 119:

կական զորքերը, ինչպես և առհասարակ Հայաստանի ազգաբնակչությունը, մնաց միանգամայն ազատ։ Կարգապահությունը բանակի մեջ միանգամայն բավարար է, զիտակցությունը և կարգապահությունը՝ շատ բարձր։

Բանակը կազմված է բոլոր զորատեսակներից։ Զորքի ընդհանուր թիվը 1919 թ. հուլիսի վերջին հասնում էր 18.000 մարդու։ Երկիրը կարիք ունի և ընդունակ է կազմելու բանակ՝ կրկնակի թվով, բայց ամեն տեսակ նյութական պակասությունները (զենք, հանդերձանք, սնունդ) զրկում են այդ հնարավորությունն իրականացնել։ Նույնիսկ եղած զորքի նյութական կացությունը վերին աստիճանի անբավարար է և տանելի է միայն հայի պես շարքաշ, սակավապետ մարդու համար։

Բանակի ընդհանուր հրամանատարն է զեներալ-լեյտենանտ Նազարբեկյանը, որը անցյալում ռուսական բանակի ամենափայլուն սպաներից մեկն էր. հանրածանոթ իր ռազմական քաջագործություններով ռուս-ճապոնական պատերազմի և ներկա պատերազմի ընթացքում (Կովկասյան ճակատ)։

Զինվորական նախարարի պաշտոնը վարում է զեներալ-մայոր Ալարատյանը, նույնպես նախկին ռուսական բանակի հմուտ և փորձված սպաներից մեկը, շատ սիրված զինվորների կողմից։

Գլխավոր շտաբը, ինչպես և առանձին մասերի հրամանատարությունը, կազմված է զինվորական լրիվ կրթություն ստացած, կարգապահ սպաներից, որոնց մեծ մասը ունի ռուսական բարձր աստիճանների շքանշաններ»[36]։

Փաստերը վկայում են, որ երբ հայկական զորքերը սկսեցին ռազմական գործողություններ Բեյուք-Վեդիի շրջանում, Նախիջևանի ադրբեջանցիների թշնամական վերաբերմունքն ավելի ստստկացավ։ Զինված ավազակային խմբերը, տեղական խաների զեկավարությամբ, հարձակումներ էին գործում գնացքների, հայկական գյուղերի վրա, սպանում ու թալանում էին հայ բնակչությանը։ Ադրբեջանցիները իրենց համեմատաբար զուսպ էին պահում միայն Նախիջևան քաղաքում, որտեղ գտնվում էր հայկական զորաջոկատի մեծ մասը և Անգլիայի ներկայացուցիչը։ Սակայն իրականում անգլիական ներկայացուցիչը, որն առատաձեռն նվերներ էր ստացել տեղական ադրբեջանցի մե-

---

36 ՀՀ ԿԳՊԱ, ֆ. 200, ց. 2, գ. 126, թ. 88—82։

ծահարուստներից, լրիվ դարձել էր նրանց կողմը և ոչ մի միջոց չէր ձեռնարկում նրանց կողմից կատարվող խլրտումները կասեցնելու ուղղությամբ։ Շուտով ադրբեջանցիների ձեռքն անցան դեպի Երևան տանող երկաթգծի Շահթախթի ու Բաշնորաշեն կայարանները և երկաթուղային կապը Երևանի հետ լրիվ դադարեց։ Այսպիսով, Նախիջևանյան հայկական զորաջոկատը հայտնվեց Երևանից կտրված՝ շրջափակման մեջ։ Բծավոր տիֆով հիվանդացավ գեներալ Շելկովնիկյանը, և զորաջոկատի հրամանատարությունը ստանձնեց փոխգնդապետ Մամաջանյանը։ Օգոստոսի կեսերին, անգլիացիների թողտվությամբ ադրբեջանցիների խլրտումներ սկսվեցին նաև Նախիջևան քաղաքում, որտեղ այդ ժամանակ կենտրոնացվել էր ամբողջ հայկական զորաջոկատը։ Ընդհարումների հետևանքով հայկական զորքերը ունեցան կորուստներ. սպանվեցին 1 սպա (պորուչիկ Ժամհարյան) և 5 զինվոր, վիրավորվեցին 1 սպա (կապիտան Խուդավերդյան) և 12 զինվոր։ Ջունենալով բավարար պաշարներ և Երևանի հետ նորմալ կապ, եռօրյա կատաղի մարտերում, ադրբեջանցիներին պատճառելով մեծ կորուստներ, հայկական զորաջոկատը, 7 հազար հայ գաղթականության ուղեկցությամբ, ճանապարհին կոտրելով Զահրա և Սուետ ադրբեջանական գյուղերի դիմադրությունը, Աղնվաբերդով նահանջեց դեպի Դարալագյազ։ Այսպիսով, 1919 թ. սեպտեմբերի առաջին կեսից, Նախիջևանի շրջանը լիովին անցավ ադրբեջանցիների տնօրինության տակ և կառավարվեց տեղական խորհրդի՝ փաստորեն Ադրբեջանի կողմից։ Այս վիճակը պահպանվեց մինչև 1920 թ. ամառը, երբ այն նորից գրավվեց Հայաստանի Հանրապետության բանակի կողմից։

1918—1920 թթ. հայ-ադրբեջանական հարաբերությունների հիմնական կռվախնձորը Զանգեզուրի և Ղարաբաղի պատկանելության հարցն էր։ Դեռևս 1918 թ. մայիսին, հայկական և ադրբեջանական անկախ պետությունների ստեղծումից անմիջապես հետո, ադրբեջանական զորքերը Զանգեզուրը Ադրբեջանին բռնակցելու նպատակով բազմաթիվ հարձակումներ գործեցին երկրամասի վրա։ Սակայն այնտեղ գտնվող զորավար Անդրանիկի, ապա գնդապետ Արսեն Շահմազյանի շնորհիվ ոչ մի արդյունքի չհասան։ Նկատենք, որ չճանաչելով Բաթումի պայմանագիրը՝ Անդրանիկը, ունենալով իր հետ 3000 հետևակային և 700 հեծյալ, նոր Բայազետի, Դարալագյազի ու Ջուլֆայի վրայով անցել էր Խոյ՝ անգլիական զորամասերին միանալու համար։ 1918 թ. հունիսի 21-ին, Սեյդավար գյուղի մոտ թուրքական զորքերի հետ

ընդհարվելով, նա նահանջել էր Ջուլֆա, ապա՝ Նախիջևան։ Հունիսի վերջին Ողջի գետի հովտով Անդրանիկը մտել էր Զանգեզուր, որտեղ մինչև 1919 թ. մարտի վերջը կազմակերպել էր Զանգեզուրի ինքնապաշտպանական կռիվները։ 1918 թ. վերջին Զանգեզուր էր ժամանել նաև գնդապետ Արսեն Շահմազյանը։ Տեղի Ազգային խորհրդի հետ միասին նա կազմակերպել էր տեղական զինված ուժեր, որոնց միջոցով էլ հաջողվում է ետ մղել ադրբեջանական զորամասերի հարձակումները երկրամասի վրա[37]։

Զանգեզուրում պետական իշխանություն հաստատելու նպատակով, 1919 թ. ապրիլի վերջին, Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշեց այնտեղ տեղական ազգաբնակչությունից կազմավորել զորամասեր՝ բաղկացած մեկ հետևակային գնդից, մեկ հեծելազորային դիվիզիոնից և երկու հրետանային մարտկոցից։ Այդ նպատակով Երևանից Զանգեզուր ուղարկվեցին սպայական կադրեր և պորուչիկ Մելիք-Հարությունյանի հրետանային մարտկոցը։ Զանգեզուրում կազմավորվող բոլոր զինված ուժերի գլխավոր հրամանատար նշանակվեց գեներալ-մայոր Ղազարյանը (Կազարովը), որը 10—12 սպաների ուղեկցությամբ Գորիս ժամանեց 1919 թ. ամռանը։

Միաժամանակ, տեղական իշխանությունը կազմակերպելու համար, Երևանից Զանգեզուր եկան նաև քաղաքացիական անձինք։ Հասնելով Գորիս, գեներալ Ղազարյանը ձեռնամուխ է լինում տեղական զինված ուժերի և տեղաբնիկներից կիսամիլիցիոներական զորամասերի կազմավորմանը։ 1919 թ. օգոստոսի վերջին, Զանգեզուր է ժամանում Գարեգին Տեր-Հարությունյանը (Նժդեհ), որը նշանակվում է Ղափան—Գենվազ—գողթան շրջանների զորքերի ընդհանուր հրամանատար[38]։ Նժդեհը այստեղ մնաց մինչև 1921 թ. հուլիսի կեսերը և մեծ դեր կատարեց Զանգեզուրի պաշտպանության գործում։ 1919 թ. նոյեմբերի 2-ին Օրդուբադի կողմից Զանգեզուր ներխուժած ադրբեջանական զորքերը գրավում են Ոխչիի ձորը և այն հայտարարում Ադրբեջանի անբաժան մասը։ Դրանից հետո ապստամբում են նաև Գեղվածորի ադրբեջանաբնակ գյուղերը, որի հետևանքով փակվում է Գողթանը Զանգեզուրի հետ միացնող միակ ճանապարհը, և պաշարման հետևանքով

---

37 Տե՛ս Ս. Վրացյան, Նշվ. աշխ., էջ 329, նաև՝ Ա. Բարալյան, Էջեր Հայաստանի անկախության պատմությունից, Գահիրե, 1951, էջ 31։

38 Տե՛ս Ավո, Նժդեհ, Բեյրութ, 1968, էջ 79։

առաջացած սովը ողբերգական վիճակի մեջ է գցում Գողթանի ու Բաղաբերդի հայ աղգաբնակչությանը: Նոյեմբերի 18-ին Նժդեհի գլխավորած Գենվազի վաշտերը, հանկարծակի հարձակում գործելով Ոխչիի ձորի ադրբեջանական զինված գյուղերի վրա, ջախջախում են նրանց զինված ջոկատները և կրկին Հայաստանին են միացնում Ոխչիի ձորի Շաբաղին, Ոխչի, Փերդովզան ու Արարլըխ ադրբեջանաբնակ գյուղերը: Դրա շնորհիվ վերականգնվում է Գողթանի, Բաղաբերդի և Զանգեզուրի միջև հաղորդակցությունը, կռվի ընթացքում հայկական զորքերի ձեռքն է ընկնում մեծ քանակությամբ հացահատիկ, զենք, զինամթերք և այլ ռազմական ավար[39]:

Հայաստանի և Ադրբեջանի միջև մյուս հիմնահարցը Ղարաբաղն էր: Այս վեճը, ինչպես Վրաստանի հետ, Հայաստանի Հանրապետությունը առաջարկում էր լուծել աղգագրական սկզբունքով: Սակայն ադրբեջանցիները, որոնք խրախուսվում էին անգլիացիների կողմից, չէին ուզում լսել հայերի արդարացի առաջարկությունը և մշտապես սանձգրություններ էին կատարում Ղարաբաղի դեմ՝ ձգտելով հայաթափ անել այն: Ղարաբաղը իրեն բռնակցելու նպատակով Ադրբեջանը լայնորեն օգտագործում էր ինչպես Ղարաբաղում, այնպես էլ Զանգեզուրում բնակվող ադրբեջանցիներին: Ղարաբաղը Հայաստանի Հանրապետության հետ միավորելու նպատակով Հայաստանի կառավարության կողմից 1919 թ. նոյեմբերին Զանգեզուր է ուղարկվում Դրոն: Դրոյի առջև խնդիր էր դրված՝ մաքրել Զանգեզուրի և Ղափանի հարավարևելյան սահմանները ադրբեջանական զինված հրոսակախմբերից և միջանցք բացել Զանգեզուրի ու Ղարաբաղի միջև՝ վերջինիս հետ մշտական հաղորդակցություն հաստատելու համար: Այդ խնդիրը իրականացնելու նպատակով Դրոյի տրամադրության տակ դրվեց էքսպեդիցիոն զորաջոկատ, որը բաղկացած էր փոխգնդապետ Թարվերդյանի՝ իգդիրցիներից կազմված համահավաք առանձին գումարտակից, Թարխանյանի (Կուռո) հեծյալ մեկ էսկադրոնից և պորուչիկ Արզանյանի լեռնային հրետանու դասակից: Տեղում կազմավորվեց զորաջոկատի շտաբը, որի պետ նշանակվեց կապիտան Միրիմանյանը: Շտաբին հանձնվեց նաև ռադիոկայան: Դրոյի էքսպեդիցիոն զորաջոկատը փայլուն կատարեց իր առջև դրված խնդիրը: Մինչև 1919 թ. դեկտեմբերի

---

39 Տե՛ս Վարդան Գևորգյան, Լեռնահայաստանի հերոսամարտը 1919—1921 թթ., Երևան, 1991, էջ 36:

կենները զապվեցին Զանգեզուրի խռովարար ադրբեջանաբնակ գյուղերը, բացվեց հաղորդակցությունը Զանգեզուրի և Ղարաբաղի միջև[40]։ Մինչև 1920 թ. հունվարի սկիզբը Դրոյի էքսպեդիցիոն զորաջոկատը, համագործակցելով Ղափանում գտնվող Նժդեհի հրամանատարությամբ գործող զորախմբերի հետ, դրավեց Զանգեզուրի էյվազլար և Նավլու ադրբեջանաբնակ գյուղերը, որոնք աչքի էին ընկել Զանգեզուրի հայության նկատմամբ ոճրագործություններով։ 1920 թ. ապրիլի 15-ին Դրոյի գլխավորած զորամասերը մտնում են Արցախ, այնտեղից վռնդում ադրբեջանական զորքերին և իրենց ձեռքը վերցնում երկրամասի ողջ իշխանությունը։ Սակայն 1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջան մտան խորհրդային Ռուսաստանի 11-րդ Կարմիր բանակի զորամասերը և Ադրբեջանում հաստատեցին խորհրդային կարգեր։ Մեկ օր անց խորհրդային Ադրբեջանի կառավարությունը Հայաստանի Հանրապետությանը ներկայացրեց վերջնագիր՝ պահանջելով դուրս բերել հայկական զինված ուժերը Արցախից և Զանգեզուրից։ 1920 թ. մայիսի 1-ին Ադրբեջանում տեղակայված 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը, Օրջոնիկիձեի և Կիրովի ստորագրությամբ, խորհրդային իշխանության անունից պատերազմ հայտարարելու սպառնալիքով, նոր վերջնագիր է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարությանը և, առանց սպասելու պատասխանի, իր զորամասերը շարժում է Արցախ և մինչև մայիսի 20-ը ամենուրեք հաստատում խորհրդային կարգեր[41]։ Հայկական զորքերը հարկադրված են լինում թողնել Արցախը՝ խորհրդային զորքերի դեմ պատերազմը համարելով անիմաստ, քանի որ ուժերը անհավասար էին։

Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեզդաղյանը և Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Հուսեյնովը 1920 թ. հուլիսի 2-ին Թիֆլիսում համաձայնության եկան ռազմական գործողությունները դադարեցնելու և հայ-ադրբեջանական կոնֆլիկտը հրավիրելու մասին։ Չնայած այս համաձայնությանը, Արցախը խորհրդայնացման ճանապարհով դրավելուց հետո, հուլիսի 3-ին Կարմիր բանակի 84-րդ բրիգադի 247, 248, 249-րդ հրաձգային գնդերը, ճնշելով հայկական զորամասերի դիմադրությունը, մտան Զանգեզուր և հուլիսի 5-ին դրավեցին Գորիսը։

---

40 Տե՛ս ՀՊՊԿԱ, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 8—9։

41 Տե՛ս Համլետ Գևորգյան, Դրո, Երևան, 1991, էջ 148—149։

Ադրբեջանը կոմունիզմի դիմակի տակ շարունակում էր իրականացնել մուսաֆաթական իր ծրագիրը՝ Կարմիր բանակի օգնությամբ գրավել հայկական հողերը և նույնիսկ ավելին, քան պահանջում էին մուսաֆաթականները։ Գործելով Հայաստանի տարածքներում՝ ադրբեջանական բանակը շարունակում էր հարձակումները Ղարաբաղում, Ղազախում և Զանգեզուրում գործող հայոց բանակի վրա։ Հայաստանի կառավարության բազմաթիվ բողոքները, չնայած Ադրբեջանի կառավարության խոստումներին, այդպես էլ մնացին անհետևանք։ Չնայած Վրաստանում Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ս. Կիրովի հուլիսի 11-ի հավաստմանը, որ ձեռք են առնված բոլոր միջոցները «իսկույն ևեթ կանգնեցնելու ադրբեջանական զորքերի առաջխաղացումը Զանգեզուր», ադրբեջանական կողմը ձեռնարկում էր նոր հարձակումներ և հաշվեհարդար տեսնում գերի ընկած սպաների նկատմամբ։

Հայաստանի կառավարությունը ստիպված էր ձեռք առնել կտրուկ միջոցներ։

1920 թ. օգոստոսի 1-ին Դարալագյազից Դրոյի զորքերը, Ղափանից Նժդեհի զորքերը և Սիսիանից Պողոս Տեր Դավթյանի՝ տեղացիներից կազմված զորամասերը շարժվում են դեպի Գորիս։

Կտրուկ միջոցներ են ձեռնարկվում և Զանգիբասարի թուրք-ադրբեջանական հրոսակների նկատմամբ, որոնք գործում էին Հալիլ փաշայի գլխավորությամբ։ Նրանք համառորեն խանգարում էին և թույլ չէին տալիս Հայաստանի կառավարությանը այնտեղ կազմակերպելու տեղական իշխանություն. հաճախակի կազմակերպված հարձակումներ էին գործում թե՛ հայկական կառավարական զորքերի և թե՛ մոտակա հայկական գյուղերի վրա, սպանում ու կողոպտում դաշտերում աշխատող հայ գյուղացիներին։ Անհանդուրժելի համարելով այդ բոլորը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը, սպառելով բոլոր խաղաղասիրական միջոցները, վերջնագիր ներկայացրեց Զանգիբասարի խռովարարներին՝ ընդունել Հայաստանի հպատակությունը և զինաթափվել։ 1920 թ. հունիսի 18-ին, ցերեկվա ժամը 1-ին լրացավ վերջնագրի ժամկետը։ Բացի Զանգիբասարի Ուլուխանլու ադրբեջանական գյուղից, մյուսները չընդունեցին Հայաստանի հպատակությունը և կառավարական զորամասերի շարժմանը պատասխանեցին հրացանային ու գնդացրային համազարկերով, որից հետո կառավարությունը ստիպված դիմեց ուժի։ Հունիսի 19-ին անցնելով հարձակման, կոտրելով զանգիբասարցիների կատաղի դիմադրությունը, որոնք ունեին լավ պատրաստ-

ված դիրքեր, հրանոթ, գնդացիր և առատ զինամթերք, հայկական զորքերը գրավեցին Հաջի Ղշլախ, Շարլու-Դամրշի, Հաջիելազ, Ենգիջա, Սարվանլար, Ուլիան, Ղուլալի, Վերին և Ներքին Նեջուլու գյուղերը։ Զարգացնելով գրոհը, հունիսի 20-ին հայկական զորքերը գրավեցին ամբողջ Զանգիբասարը։

«Զանգիբասարի օպերացիան վերջացավ 24 ժամում։ Ամբողջ պլանը հայերի համար իրականացավ շատ հաջող»[42],—գրում էր արտաքին գործերի նախարարության ինֆորմացիայի բաժնի վարիչ Մ. Խոջամիրյանը։

Հայկական բանակի ձեռքն ընկավ մեծ քանակությամբ ռազմապաշար՝ 2 հրանոթ, 4 գնդացիր, 40.000 փամփուշտ և մեծ թվով հրացաններ[43]։

Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչների միջև օգոստոսի 10-ին Թիֆլիսում կնքվեց զինադադարի համաձայնագիր, որի համաձայն, խորհրդային զորքերը ժամանակավորապես գրավում էին Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի գավառները՝ մինչև Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի միջև կնքվելիք դաշնագրով որոշվեր այդ շրջանների վերջնական պատկանելության հարցը։

Համաձայնագրի ստորագրումից հետո Դրոն Գորիսից տեղափոխվում է Դարալագյազ, ապա Հայաստանի Հանրապետության կառավարության հրահանգով անցնում է Երևան, իսկ Նժդեհը, չճանաչելով Թիֆլիսի համաձայնագիրը, մնում է Ղափանում և շարունակում գլխավորել տարածաշրջանի ինքնապաշտպանության գործը։ Նրա հրամանատարությամբ հայկական զորամասերը մինչև 1921 թ. հունիսը շարունակեցին համառ դիմադրություն ցույց տալ Զանգեզուր ներխուժած թուրք-կարմիր զորամասերին։ Շնորհիվ հայկական զորամասերի համառ դիմադրության, Զանգեզուրը մինչև վերջ էլ չբռնակցվեց Ադրբեջանին։

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության գոյության ողջ ժամանակամիջոցում, հայկական բանակը ստիպված էր մշտապես ռազմական գործողություններ վարել տարբեր ճակատներում։ Այդ շարունակական կռիվները, ճիշտ է, թեև ավելացնում էին հայկական բանակի մարտական փորձը, սակայն, մյուս կողմից, հոգնեցնում էին զորա-

---

42 ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 385, թ. 66։

43 Նույն տեղում, ֆ. 290, ց. 1, գ. 27, թ. 1—7։

մասերի անձնակազմին, նպաստում էին այն բանին, որ բանակի զորամասերը մշտապես դտնվեն իրարից հեռու՝ չմիաձուլվեն, չմարզվեն, չունենան հավաքական կամք և միակերպ գործելու վարժվածություն։ Երկարատև ներքին կռիվներում զոհվում, վիրավորվում ու շարքից դուրս էին դալիս բանակի լավագույն սպաներն ու զինվորները։

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետության 40 հազարանոց բանակի վիճակին՝ Հայաստանի վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը գրում է. «...Հայաստանի զինվորական ուժերը ստիպված էին անընդհատ իրենց ժամանակը անցկացնել արշավանքների, կռիվների և ընդհարումների մեջ։ Գլխավոր շրջանները, որտեղ զորքերը ստիպված էին գործել—Նախիջևանը, Բեյրուք-Վեդին, Զանգիբասարը, Կարսի նահանգը, Սուրմալուի գավառն էին։ Զորքերու անընդհատ ռազմական գործը, որ հանգիստ չուներ, արգելք կհանդիսանար զորամասերի վարժեցման, նրանց կարգավորման, մշտական վարչական վայրերի հաստատման և զորքերի ու նրանց պաշարեղենի և տեխնիկական մասի կանոնավոր մատակարարման, ինչպես նաև գործունեության։ Արշավանքների միջոցին ամեն ինչ կմաշեր, կկորեր, կպատռվեր և արագորեն անպետք կդառնար։ ...Անվերջ կորուստների և բազմաթիվ հիվանդությունների հետևանքով (մանավանդ մալարիա և տիֆ) հարկ էր լինում հաճախ զորահավաք անել և այդ կկատարվեր զինվորական նախարարության և ներքին գործերի նախարարության անդամների միացյալ ջանքերով։ Ժողովրդի հոգնածությունը, քաղցը և աշխատող ձեռքերի պակասը, սաստիկ դժվարացնում էին զորահավաքի գործադրությունը»։ Զդալի էր ձիերի սակավությունը, ինքնաշարժերի անսարքությունը, վառելանյութի պակասը. մեծ էին երկաթուղային հաղորդակցության դժվարությունները։ «Այդ բոլոր հանգամանքները արտահայտվում էին ռազմական գործողությունների վրա՝ երբեմն չափազանց ծանր և հոգնեցուցիչ դառնալով զորքերի համար»[44]։

Մեծ էր և հիվանդների թիվը. միայն մալարիայով և դրիպով բանակում հիվանդացել էր 27.443 մարդ, որից 2359-ը մահացել էր[45]։

1920 թ. հունվարից կարուկ սրվեցին հարաբերությունները Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի միջև։ Մյուս կողմից ակտիվացավ թուրք-ադրբեջանական «սիրալիրությունը» Ռուսաստանի նկատ-

---

44 Ա. Խատիսյան, նշվ. աշխ., էջ 134—135։

45 Տե՛ս ՀՀՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 79, թ. 51։

մամբ, որը կապված էր և Մոսկվայում սկսված հայ-խորհրդային բանակցությունների հետ: Նկատենք, որ դեռևս 1920 թ. ապրիլի 25-ին Լենինին ուղարկած նամակում Մուստաֆա Քեմալը գրում էր, որ Թուրքիան պատրաստվում է խորհրդային Ռուսաստանի հետ պայքարել իմպերիալիստական պետությունների դեմ և մտադիր է դրա համար խորհրդային Ռուսաստանի հետ սահմանել բարի դրացիական հարաբերություններ: Իմպերիալիստական տերություն էր հորջորջվում և Հայաստանը: 1920 թ. հունիսի 25-ին գրած նամակում Մուստաֆա Քեմալը հավաստում էր, որ Թուրքիայի կառավարությունը Արևելքում կողմնակից է այն քաղաքականության, որը համընկնում է «ռուսական մեծ հեղափոխության հիմնական սկզբունքների և ազգային ավանդույթների հետ»: Արտաքին գործերի նախարար Բեքիր Սամիի նամակում արտահայտվում էր այն միտքը, որ իմպերիալիզմի դեմ պայքարում Թուրքիան հանձինս ռուսական խորհրդային մեծ հանրապետության կգտնի ճնշված ժողովուրդների պաշտպանին:

Պանթուրքիզմի և պանթուրանիզմի քաղաքականությունից բխող առաջին խնդիրը Թուրքիայի և Կովկասի մահմեդականների միջև եղած հայկական սեպի վերացումն էր, Ադրբեջանի հետ տարածքային անմիջական կապի հաստատումը: Այդ նպատակով Անդրկովկասից թուրքական զորքերի հեռանալուց հետո Նուրի փաշայի բանակը մնաց Ելիզավետպոլում, Շևքի փաշայինը՝ Կարսում, Հալիլինը՝ Նախիջևանում:

Նրանք, կապիտան Պուաղեբարի վկայությամբ, պատրաստվում էին Արևելքում հետագա նվաճումների, զինում էին մուսուլմաններին, արգելակում էին հայերի վերադարձը իրենց բնակավայրերը, հայկական իշխանությունների վերականգնմանը[47]:

Թուրքական քաղաքական գործիչ Ջելալ Բայարի վկայությամբ, նրանք Կովկասում ունեին երկու դիվիզիա, բաժանվել էր զենք Ադրբեջանի և Հյուսիսային Կովկասի մուսուլմաններին: Էնվեր փաշան պլանավորում էր կովկասյան կամավորներով թուրքական դիվիզիաները ուժեղացնելուց հետո ջախջախել Հայաստանը և Կարսում ստեղծել ժամանակավոր կառավարություն[48]:

---

46 Տե՛ս Документы внешней политики СССР, т. 2, М., 1958, стр. 556.

47 Տե՛ս Свободное слово, Париж, 1991, № 16, стр. 46.

48 Տե՛ս *Г. Аветисян*, Брест-Литовск: Как были отторгнуты Турцией Карс, Ардаган и Батум, Ереван, 1994, стр. 129—130.

Քեմալական զեկավարին և Ադրբեջանի Հեղկոմին ոտքի էր հանել մասնավորապես այն հանգամանքը, որ Մոսկվայում քննարկվում էր նաև Զանգեզուրի և Ղարաբաղի՝ Հայաստանին անցնելու հարցը։

Մոսկվան ոչ միայն գնդակոծվում էր հեռագրերով, այլև այնտեղ էին ուղարկվում տարբեր պատվիրակություններ մեկը մյուսի հետևից։ Առաջ էր քաշվում Ադրբեջանի՝ Թուրքիային միանալու համար Նախիջևանի, Շարուրի և Սուրմալուի վրայով կամուրջ ստեղծելու պանթուրքական ծրագիրը։ Ադրբեջանի կառավարությունը խոստանում էր շտապել նպաստել Խորհրդային Ռուսաստանի և «Անատոլիայի և Ռումելիայի իրավունքի պաշտպանության կոմիտեի մերձեցմանը»։

1920 թ. ապրիլի 15-ին քեմալականների և Ադրբեջանի միջև էրզրումում կնքված պայմանագրի հիմնական հարցերից էր և Հայաստանի Հանրապետությանը հայկական մարզերի կցման խոչընդոտումը։ Պայմանագիրը ստորագրել էին Ադրբեջանի զինվորական նախարարի տեղակալ Ալի աղա Շիխլինսկին և թուրքական 15-րդ բանակի հրամանատար Կարաբեքիրը։ Վերջինս գրել է. «Մեր, Ադրբեջանի և բոլշևիկների միջև կնքված պայմանագրի համաձայն, մեր սպաների, բժիշկների, ծառայողների մեծ թիվ գնացել է Ադրբեջան։ Բոլշևիկները առաջարկել են մեզ անմիջապես սկսել պատերազմական գործողություններ հայերի սահմանների վրա և Ֆրանսիայի դեմ՝ Կիլիկիայում։ Դաղստանում կազմված «Կանաչ բանակը», էնվերի, Նուրիի և Հալիլի գլխավորությամբ, պետք է ձգտի ապրիլի սկզբներին մտնել Բաքու։ Ադրբեջանի զորքերը նրանց պետք է ցույց տան առերես դիմադրություն, որպեսզի հետագայում արդարանան դաշնակիցների առջև։ Միավորված «Կանաչ բանակի» հետ, թուրքական զորքերը պետք է Հայաստանի հետ բախվելու առիթ գտնեն՝ սահմանները ներխուժելու և հայության դեմ ռազմական գործողություններ սկսելու համար»[49]։

Քիչ հավանական համարելով իրենց դաշնակից «Ադրբեջանի կողմից արդեն ջախջախված» Հայաստանի հարձակումը թուրքական մարզերի վրա, թուրք-ազեր-ռուսական ուժերի հրամանատարական կազմում գտնվող Հալիլ փաշան Մոսկվայից հայտնում էր Կարաբեքիրին, որ Հայաստանի վրա թուրքական հարձակման դեպքում հայերը կհանդիպեն հզոր ուժի իրենց թիկունքում[50]։

---

49 Տե՛ս *Зареванд*, Турция и пантуранизм, Париж, 1930, стр. 134.

50 Տե՛ս նույն տեղում, էջ 137—138։

Այս բոլորը Մոսկվայում բացատրվում էր Ադրբեջանի՝ «Կարմիր Անատոլիային միանալու անհրաժեշտությամբ»։ Չգտելով իրենց տարածքային ոտնձգությունների իրականացմանը, խորհրդային Ադրբեջանի պատվիրակները և «ոչ կոմունիստական ուժերից» բաղկացած մեկ այլ պատվիրակություն՝ Հաջինսկու ղեկավարությամբ, փորձում էին բոլշևիկյան ղեկավարներին համոզել, որ «Ադրբեջանի մուսուլմանների համակրանքը գրավելու միակ միջոցն այն է, որ Ադրբեջանին տրվեն ոչ միայն Ղարաբաղն ու Զանգեզուրը, այլև Նախիջևանը, Շարուրը և Սուրմալուն»։ Այդ տիպի քարտեզները զարդարում էին Նարիմանովի և հեղկոմի մյուս անդամների աշխատասենյակների պատերը։ Միաժամանակ ցույց էին տրվում Թուրքիայի հետ ընդհանուր սահմանները[51]։

Իրական վիճակի հետ հաշվի չէին նստում և դաշնակիցների ներկայացուցիչները, անտեսվում էր Ղարաբաղում թուրք սպաների ղեկավարությամբ թուրք-ադրբեջանական զինված ուժերի կուտակումը, դեպի Զանգեզուր նրանց առաջխաղացումը, Զանգեզուրի գրավման և դրա շնորհիվ «թուրքական տարածքների»՝ անատոլիական տիրապետությանը մոտեցնելու թուրք-ադրբեջանական պլանի առկայությունը։ Հայաստանի կառավարության վճռական հայտարարությունը իտալական զինվորական առաքելության ղեկավար Հաբլին, ֆրանսիականի՝ Նոնակուրին անգլիականի՝ Ուորտրոպին, դաշնակիցների գլխավոր կոմիսար Հասկելին՝ Հայաստանի սահմանները պաշտպանելու և Ղարաբաղում կոտորածը խափանելու համար միջոցներ ձեռք առնելու մասին՝ անգլիացիների կողմից դիտվում էր որպես ագրեսիա։ Դաշնակիցները ոչ միայն հաշվի չէին առնում Հայաստանի կառավարության դիմումները, այլև, իրենց իսկ հետախուզական տվյալների համաձայն, տանում էին մուսուլմանամետ քաղաքականություն։ Ճշմարտությունը ցույց է տալիս ֆրանսիական զինվորական առաքելության անդամ կապիտան Պուադեբարը։ «1919 թ. նոյեմբերին ադրբեջանական կանոնավոր բանակը երեք կողմից հարձակվում է հայկական Զանգեզուրի վրա, սակայն կրում է պարտություն։ Դա թուրքերի հետ կապ ստեղծելու ձախողում էր. դեկտեմբերին թուրքերի գործունեությունը ուժեղանում է»[52]։

---

51 Տե՛ս Г. Аветисян, նշվ. աշխ., էջ 130։

52 Տե՛ս Свободное слово, Париж, 1991, № 16, стр. 47.

Անգլիացիների մուսուլմանամետ քաղաքականությունը Ա. Ահարոնյանը բացատրում էր նրանց ձգտումով՝ Ադրբեջանը զերծ պահել ռուսական և պարսկական ազդեցությունից, համոզված լինելով, որ «երիտասարդ Թուրքերի կրոնաքաղաքական վարդապետությունը՝ պանթուրքիզմը, սոսկ բառեր չեն և այս գաղափարով զինված Թուրքերը կարող են փոխադարձաբար հուզել Ասիան և հետևաբար՝ անգլիական մուսուլմանական տարածքները, անշուշտ, և Արաբիան»։

Անգլիական քաղաքականության մուսուլմանամետությունը արտահայտվեց և Հայաստանի Հանրապետության պատվիրակության հետ 1920 թ. ապրիլի 8-ին լորդ Քերզոնի հանդիպման ժամանակ։ Անգլիայի արտաքին գործերի նախարարը պահանջում էր Հայաստանի կառավարությունից պաշտոնանկ անել Դրոյին, Համազասպին, ներքին գործերի նախարար Ա. Գյուլխանդանյանին, սպառնալով՝ հակառակ դեպքում, զենք ու ռազմամթերք չմատակարարել Հայաստանին, քանզի այն «գործադրվել է թաթարների դեմ»։ Այդպես էին զեկուցում գեներալներ Թոմսոնը, Ուորտրոպը և անգլիական մյուս բարձրաստիճան զինվորականները[53]։

Օգտվելով իրենց համար բարենպաստ իրավիճակից, 1920 թ. հունիսի սկզբին քեմալական Թուրքիայի զորքերը, խախտելով սահմանը, մտան Կարսի մարզի Օլթիի շրջան, ռազմական գործողություններ սկսեցին այնտեղ գտնվող հայկական զորքերի դեմ, որոնք շարունակվեցին մինչև Թուրքական բանակի՝ ընդհանուր հարձակման անցնելը։ Հայաստանի Հանրապետության բողոքի նոտային Թուրքիան հուլիսի 18-ին պատասխանեց, որ նա ճանաչում է Հայաստանը միայն Բրեստ-Լիտովսկի և Բաթումի պայմանագրերով նախատեսված սահմաններով[54]։ Օլթիի շրջանում տեղի ունեցած կռիվների մասին հայկական բանակի սպարապետի շտաբի սեպտեմբերի 11-ի հաղորդագրության մեջ ասված է. «Օլթիի ուղղությամբ սեպտեմբերի 9-ին, ժամը 14-ին, Թուրքերը թնդանոթային կրակ բաց արին Վասկուտ սարի վրա, մեր հրետանին պատասխան տվեց նրան։ Սեպտեմբերի 10-ի գիշերը հակառակորդի մի մեծ խումբ մոտեցավ մեր պահակախմբին, որ 5005 բարձրության վրա և Ղարադաղ գյուղից երկու վերստ հյուսիս է գտնվում, բայց հրետանու և գնդացրային կրակով հետ շպրտվեց։ Սեպտեմբերի 10-ին,

---

53 ՀՀ ԿԳՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 99—104։

54 Ա. Խատիսյան, նշվ. աշխ., էջ 134—135։

առավոտյան ժ. 8-ին, տաճկական երկու սավառնակներ թռիչք գործեցին Սարիղամիշի ճակատի երկարությամբ և, միաժամանակ, տաճիկները թնդանոթային կրակ բաց արին մեր դիրքերի վրա՝ Բարդուսի դեմ։ Մեր հրետանին պատասխանում էր։ Նույն օրը ժ. 15-ին կրկին երևացին հակառակորդի երկու սավառնակներ, թուրքերը հրացաններով կրակում էին մեր խրամատների վրա՝ Կերոզլիբաշի սարի վրա։

Սեպտեմբերի 9-ին, ժ. 18 անց 45 րոպեին, երկօրյա կռիվներից հետո մերոնք գրավեցին Կողբ գյուղը և աղահանքերը։ Վերցված է մի լեռնային թնդանոթ, երկու հեռախոսային ապարատ և այլ ռազմական ավար։

Մեր կորուստները աննշան են։ Փիրլու գյուղի մոտ, հակառակորդի հակագրոհը վանելու ժամանակ, սպանված է Սասունի ձիավոր խմբի պետ Մանուկը»[55]։

Սեպտեմբերին հայ-թուրքական ճակատում բռնկված թեժ ընդհարումների մասին տեղեկություններ է տալիս նաև Հայաստանի հեռագրական գործակալությունը։ Նրա մի հաղորդագրության մեջ ասված է, որ Օլթիի ուղղությամբ սեպտեմբերի 13-ի և 14-ի կռիվների հետևանքով մեր զորամասերը, հակառակորդի գերազանց ուժերի ճնշման տակ, հետ քաշվեցին և բռնեցին Ագուբոր և Քեղիր գյուղերի մոտակա դիրքերը։ Սարիղամիշի ուղղությամբ դրությունը անփոփոխ է Կողբի շրջանում... Մեզ համար հաջող գործողություններ են... Կարսի շրջանում հայտարարված է զինվորական դրություն։ Գեներալ-նահանգապետ է նշանակված զորավար Գիրումյանը...[56]։

Հայաստանի նկատմամբ ռազմական գործողությունների ուժեղացման նպատակով Մուստաֆա Քեմալը մշակեց ուժերի համախմբման և նրանց հայկական ռազմաճակատ նետելու նոր պլան։ Այդ պլանի մասին 1920 թ. սեպտեմբերի 25-ի հրամանով տեղեկացվեց Արևմուտքի, Հարավի, Արևելքի և պահեստային զորքերի հրամանատարներին։ «Դաշնակիցների հետ խորհրդակցելուց հետո,—ասված էր հրամանում,—որոշվել է չորս տարբեր ռազմաճակատներ գրավելու փոխարեն հարձակումը տեղափոխել մեկ ճակատ՝ հայկականը, դիտելով այն ամենակարևորը, մյուս ճակատներում անցնել պաշտպանության»։ Արևելյան բա-

---

55 Տե՛ս Է. Ա. Զոհրաբյան, 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, «Երեկոյան Երևան, 23 հոկտեմբերի, 1990, № 241։

56 Տե՛ս նույն տեղում։

նակը փոխարինվեց «Արաքս» բանակով, որը, համալրվելով տարբեր բանակների ուժերով, հարձակումը պետք է ձեռնարկեր Կարս—Արդահան ուղղությամբ։ Հիմնական նպատակն էր ճանապարհ բացել և կապ հաստատել դաշնակից ուժերի հետ Արևելքում և Հյուսիս-արևելքում՝ հայկական բանակը «սանձած» պահելու նպատակով։ Նրանց ծրագրերի մեջ մտնում էր և Խորհրդային Ռուսաստանից ռազմական օգնություն ստանալը, չնայած, ինչպես հավաստում էին անգլիական հետախուզության տվյալները, թուրքական կառավարության «դաշնակցությունը Խորհրդային Ռուսաստանի կառավարության հետ այնքան էլ խորը չէ, ինչպես ներկայացնում են», Հայաստանի տարածքի զավթումը՝ որքան հնարավոր է, կատարված փաստով Անտանտի երկրներին կստիպի կոմպրոմիսի ճանապարհ բացել նրանց համար։ Պետք է ապահովվեր Վրաստանի չեզոքությունը, ուժեղացվեր ճնշումը Անգլիայի վրա։ Այդ նպատակի համար ոտքի էին հանվել «կանաչ զորքերը»[57]։

Անկարայի կառավարության հետ կապ էր պահպանվում և Բաքվից։ Հաղորդելով Արևելքի ժողովուրդների առաջին համագումարի արդյունքների մասին, 1920 թ. սեպտեմբերի 7-ին Էնվեր փաշան Մուստաֆա Քեմալին հորդորում էր հարձակման անցնել հայերի դեմ, հասնել 1878 թ. սահմանին, «եթե նույնիսկ կարմիր բանակը չցանկանա». նա պատրաստակամություն էր հայտնում հայկական ճակատ ուղարկել երկու դիվիզիա»[58]։

Կիսելով Մուստաֆա Քեմալի կարծիքը «իսլամական աշխարհում Թուրքիայի դերի մասին» և հայտնելով գոհունակություն Արևելքի ժողովուրդների համագումարի որոշումների կապակցությամբ, այնտեղ իրեն Այժիրի, Մարոկկոյի, Տրիպոլիի, մուսուլմանական ողջ աշխարհի լիազոր ներկայացուցիչ հայտարարած Էնվեր փաշան խորհուրդ էր տալիս Քեմալին Հայաստանի վրա հարձակվել անմիջապես՝ «հնարավորություն չտալով նրան ամրապնդվելու», «վրացիների և իրանցիների հետ համակերպվել»։

Բաքվից Անկարա հայտնվում էր և Արևելքի ժողովուրդների համագումարի որոշումների մասին՝ Հյուսիսային Կովկասի մահմեդականների, Ադրբեջանի, Կովկասում եղած բոլշևիկյան զորքերի և Անատո-

---

57 ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Ռ. Հովհաննիսյանի նվիրած գրքեր՝ Peport HA/1A – 69/, p. 72:

58 Տե՛ս նույն տեղում։

լիայի միջև անմիջական կապ հաստատելու մասին։ Այդ նպատակով կասպիական տարածաշրջանում գտնվող թաթարական և կիրգիզական ռազմական միավորումները Ադրբեջանի և Պարսկաստանի ազգերների հետ պետք է ուղարկվեին հայկական ճակատ։ Օսմանյան բանակը պետք է ծառայեր «գոյություն ունեցող սոցիալական կարգերի կործանման համաշխարհային հեղափոխությանը»[59]։ «Ամեն դեպքում լավ նպատակներ են,—գրում էր Կարաբեքիրը,—համենայն դեպս ոչ թե բոլշևիզմի հիման վրա, այլ բոլոր մուսուլմանների փրկության հիման վրա»[60]։

Ավարտելով ռազմական նախապատրաստական աշխատանքները, 1920 թ. սեպտեմբերի 23-ին քեմալական Թուրքիան, առանց պատերազմ հայտարարելու, հարձակվեց Հայաստանի վրա, նպատակ ունենալով գրավել Արևելյան Հայաստանը, վերջ դնել Հայաստանի գոյությանը։ Հարձակումը սկսվեց երեք ուղղությամբ՝ Սարիղամիշի, Բարդուսի կիրճի և Օլթիի։ Հայկական բանակի դեմ կռվում էին Կարաբեքիրի գլխավորած 15-րդ բանակի 3, 9, 12, 34-րդ դիվիզիաները, Բայազետում պահեստում էր 11-րդ դիվիզիան։ Բացի դրանից, Տրապիզոնում կազմակերպվում էին կամավորական ջոկատներ, որոնք զինվում էին Նովորոսիյսկից ստացած զենքով։ Ռազմամթերք էր ուղարկվում նաև Կոստանդնուպոլսից՝ իտալական նավերով[61]։

Առաջինը ընկավ Օլթին, որի շրջակայքի քարածխի հանքերի գրավումը Հայաստանին զրկեց վառելիքի հիմնական պաշարից։

Սկսված թուրք-հայկական պատերազմը փաստորեն ճակատագրական դարձավ հայ ժողովրդի համար՝ բերելով նրան նորանոր կորուստներ և ավերածություններ։ Հարձակման հանկարծակիության և թուրքական զորքերի թվական մեծ գերակշռության (60 հազարանոց թուրքական բանակի դեմ հայերը ունեին հազիվ 30 հազարանոց բանակ)[62], ինչպես նաև ներքին կռիվներում հայկական զորքերի ուժասպառ լինելու հետևանքով, թուրքական բանակը կարճ ժամանակամիջոցում հա-

---

59 ՀՀԱ պատմության ինստիտուտի արխիվ, Ռ. Հովհաննիսյանի կոլեկցիա, Report, մ 75

60 Նույն տեղում։

61 Նույն տեղում, Report HCIA—95, մ 80

62 Տե՛ս Ս. Խ. Կարապետյան, 1920 թ. հայ-թուրքական պատերազմը և Սովետական Ռուսաստանը, Երևան, 1965, էջ 31։

ամավ լուրջ հաջողությունների։ Սեպտեմբերի 29-ին թուրքական զորքերը գրավեցին Սարիղամիշը, 30-ին Մերգենեկը։ Նույն օրը մենշևիկյան Վրաստանի զորամասերը, օգտվելով թուրքական ճակատում հայկական բանակի զբաղվածությունից, հյուսիսում անցան Հայաստանի սահմանը գրավեցին Արդահանի շրջանի Զալդը և Գյոլ կոչվող հայկական տեղամասերը։ Հայաստանի կառավարության բողոքի նոտային վրացական կողմը պատասխանեց, թե այդ շրջանները վիճելի են և բացի այդ, իբրևց զորքերի ներկայությունը կկանխի թուրքական բանակի հարձակումը Արդահանի վրա[63]։

Ահա թե ինչ է ասված այդ օրերի իրադարձությունների մասին Հայաստանի հեռագրական գործակալության հոկտեմբերի 1-ի հաղորդագրության մեջ. «Լույս սեպտեմբերի 28-ի գիշերը թուրքերը մեծաթիվ ուժերով առաջացան Սարիղամիշ քաղաքի ուղղությամբ՝ միաժամանակ Բարդուսի կողմից և Ղարաղուուղի վրայով։ Հակառակորդի ճնշման տակ մեր զորքերը նահանջում են դեպի Սարիղամիշ։ Թուրքերի կողմից գործում են ամբողջ երկու դիվիզիաներ։

Լույս սեպտեմբերի 29-ի գիշերը հակառակորդի գերազանց ուժերի ճնշման տակ մենք թողեցինք Սարիղամիշ քաղաքը։ Հանդիպելով Բէրիշան գյուղի մոտ համառ դիմադրության, թուրքերը չկարողացան անցնել Սարիղամիշը պաշտպանող զորքերի թիկունքը և նահանջը կատարվեց պատշաճ կարգուկանոնով։ Իգդիրի շրջանում քրդերը և թուրքերը ցույց են տալիս ակտիվ գործողություններ։ Սեպտեմբերի 28-ին հակառակորդի հետախույզները երևացին Արդաջի գյուղի շրջանում։ Նոր Սելիմի շրջանում կռիվները շարունակվում են։ Թուրքերը Հարամ-Վարդան գյուղի մոտ առաջացել են։ Միջոցներ են ձեռք առնված դիմադրելու։ Հոկտեմբերի 1-ին Նոր Սելիմի շրջանում կռիվները շարունակվում էին նախկին դիրքերում։

Սեպտեմբերի 30-ին, գիշերվա ժամը 12-ին հակառակորդը թնդանոթային կրակի օգնությամբ առաջացավ Օլիսլու գյուղի մոտ, բայց մեր զորամասերը հետ մղեցին»[64]։

---

63 Տե՛ս Է. Ա. Զոհրաբյան, *Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները 1920—1922 թթ.*, Երևան, 1979, էջ 67։

64 Տե՛ս Է. Ա. Զոհրաբյան, *1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները*, «Երեկոյան Երևան», հունվարի 21, 1991 թ., № 243։

Թուրքերի կողմից Սարիղամիշի և Մերդենեկի դրավումով ավարտվում է հայ-թուրքական պատերազմի առաջին շրջանը (պատերազմը, ելնելով ռազմական գործողությունների բնույթից, պայմանականորեն կարելի է բաժանել երեք շրջանի, որոնցից առաջինը տևում է մինչև սեպտեմբերի 30-ը, երկրորդը՝ հոկտեմբերի 1-ից մինչև 28-ը և երրորդը՝ հոկտեմբերի 28-ից նոյեմբերի 18-ը)։ Այս շրջանում հաջողությունն ամբողջովին թուրքական բանակի կողմն էր. օգտագործելով զբաղեցրած հարձակումների և թևերից շրջանցելու մարտավարություն, ինչպես նաև ուժերի գերազանցություն ստեղծելով հարձակման ուղղություններում, նրանք ոչ միայն կարողացան նախաձեռնությունը պահել իրենց ձեռքում, այլև որոշակի հաջողության հասան՝ գրավելով ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Սարիղամիշը։ Սակայն ռազմաճակատի մյուս մասերում, և հատկապես Իգդիրի շրջանում, նրանք առաջխաղացում գրեթե չունեցան։ Պատկերը համարյա նույնն էր նաև Շահթախթի շրջանում, որտեղ թեև անընդհատ զինքային ընդհարումներ էին տեղի ունենում, սակայն խոշորամասշտաբ գործողություններ չէին ծավալվել։

Պատերազմի առաջին իսկ օրերից հայ ժողովրդի համար ստեղծված այդ ծանր պահին Հայաստանի կառավարությունը լայն աշխատանք ծավալեց բոլոր ուժերը համախմբելու և թշնամուն հակահարված տալու համար։ Կառավարության 1920 թ. սեպտեմբերի 30-ի որոշմամբ հանրապետության ամբողջ տարածքում հայտարարվեց ռազմական դրություն[65]։ Վերացվեցին արական սեռի 20-ից մինչև 35 տարեկան քաղաքացիների բոլոր արտոնություններն ու տարկետման իրավունքները[66]։ Բանակ զորակոչվեցին նաև 36-ից 37 տարեկանները[67]։

Հայաստանի Հանրապետության վարչապետ Սիմոն Վրացյանը, անդրադառնալով սկսված թուրք-հայկական պատերազմին և այդ ուղղությամբ կառավարության ձեռնարկած միջոցառումներին, գրում է. «Հայաստանը լարեց իր բոլոր ուժերը։ Սեպտեմբերի 30-ին կառավարությունը արտակարգ նիստում երկիրը հայտարարեց պատերազմական դրության մեջ։ Մինչև 35 տարեկանները զենքի տակ առավ։ Խիստ օրենքներ սահմանեց դասալիքների դեմ։ Զինվորական նախարարու-

---

65 Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 180, թ. 102։

66 Տե՛ս նույն տեղում, գ. 186, թ. 21։

67 Տե՛ս նույն տեղում, գ. 190, թ. 6, 128։

թյանը տվեց արտակարգ լիազորություններ, նրան ենթարկեց երկաթուղիները, ռադիոկայանները և փոխադրության միջոցները: Որոշեց՝ արագացնելու համար կառավարության գործունեությունը և շրջաններում հեղինակավոր ներկայացուցիչներ ունենալու նպատակով, նախարարների մի մասին և մի շարք գործիչների ռազմաճակատ և գավառներ ուղարկել: Ալեքսանդրապոլ ուղարկվեցին Ա. Ջամալյանը և Գ. Ղազարյանը, Կարս՝ Ս. Վրացյանը և Ա. Բաբալյանը, Սուրմալու՝ Ս. Արարատյանը, Իջևան՝ Ա. Գյուլխանդանյանը, Նոր Բայազետ՝ Ս. Մելիք-Յոլչյանը, Աշտարակ՝ խորհրդարանի անդամներ Հ. Տեր-Հակոբյանը և Հ. Տերտերյանը: Կենտրոնում մնացին Հ. Օհանջանյանը և Ռ. Տեր-Մինասյանը: Կառավարությունը մի սրտառուչ կոչ ուղղեց ժողովրդին: Զինվորական նախարարի հրամանով Երևանի և Կարսի հրապարակներում կանգնեցվեցին կախաղաններ: Կառավարության հետ միասին ամբողջ երկիրը ևս լարում է իր ուժերը՝ դիմադրելու համար իր թշնամուն»[68]:

«Հայաստանի քաղաքացիներին» ուղղված կոչի մեջ, հաղորդելով սկսված պատերազմի հետևանքով թուրքերի կողմից Սարիղամիշի գրավման լուրը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը տեղեկացնում էր, որ, չնայած դրան, «մեր զորքերի ոգին բարձր է: Թշնամին հանդիպում է ամենաբուռն դիմադրության: Կարսի և Ալեքսանդրապոլի շրջաններում սկսված է ուժեղ շարժում՝ հօգուտ երկրի պաշտպանության: Ամեն կողմից հասնում են կամավորներ: Դաշտային աշխատանքներով կլանված ժողովուրդը ոտքի է կանգնում»:

Քաղաքացիներին հայտնելով ձեռնարկված միջոցառումների մասին, վստահեցվում էր, որ կառավարությունը, արտահայտելով ժողովրդի կամքն ու վստահությունը, կանի ամեն ինչ՝ նենգ թշնամուն հակահարված տալու համար: Կոչ անելով ժողովրդին՝ լարել բոլոր ուժերը, կառավարությունը ազդարարում էր. «Տաճիկ զորքերի առաջ մի անելիք է մնում միայն՝ հաղթել կամ մեռնել: Մենք պե՛տք է հաղթենք: Քաղաքացինե՛ր, որքան էլ աննպաստ լինեն պայմանները, թողե՛ք ձեր անձնական գործերը: Ամեն ոք և ամեն ինչ պետք է հատկացվի ֆրոնտին: Ո՛չ մի դասալիք չպիտի մնա Հայաստանում: Ո՛չ մի երիտասարդ չպիտի նստի տանը: Ամեն ինչ՝ զորքի համար: Գյուղացի, բանվոր, մտավորական, պաշտոնյա, արհեստավոր, ուսանող, կանայք—բոլորդ

68 Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 477:

պետք է նպաստեք մեր բանակին, որովհետև միայն ամենքիս միահամուռ ջանքերով կխորտակվի փաշաների գարշելի բռնակալությունը, և Հայաստանը բոլորովին ազատ կլինի տաճիկ շովինիստների մղձավանջից։

Ոտքի՛, ժողովո՛ւրդ։ Կեցցե՛ Միացյալ և Անկախ Հայաստանը»[69]։

Զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանի 1920 թ. սեպտեմբերի 30-ին արված կոչում նմանապես ասված է, որ ստեղծված իրավիճակում կառավարության կարևորագույն խնդիրն էր երկրի պաշտպանության գործի կազմակերպումը, որի նպատակով երկրում հայտարարված է քաղաքացիների զորակոչ։ Այդ կոչը ավարտվում էր հետևյալ խոսքերով. «Քաղաքացինե՛ր, հայ աշխատավորնե՛ր, տատանվելու ժամանակը չէ. մտե՛ք զորաշարքերը և ամրացրե՛ք մեր սահմաններն ու դիրքերը։

Անխնա էինք և պիտի լինենք դեպի մեր բոլոր ներքին թշնամիները, ևս առավել լինենք անխնա և վրիժառու մեր արտաքին դարավոր թշնամիների հանդեպ։

Ի զե՞ն, դեպի՞ արշավանք»[70]։

Պատերազմի առաջին իսկ օրերից Հայաստանի կառավարությունը իր դիվանագիտական ներկայացուցիչների միջոցով դիմեց նաև եվրոպական տերություններին՝ խնդրելով օգնություն ցուցաբերել հայ ժողովրդի գլխին կախված վտանգը վերացնելու համար։

Դեռ սեպտեմբերի 28-ին Հայաստանի վարչապետ և արտաքին գործոց նախարար Համո Օհանջանյանը Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանին հեռագրում է. «Թուրքական զորքերը մեծ ուժերով հարձակվել են մեր զորքերի վրա՝ նպատակ ունենալով գրավել ամբողջ Կարսի մարզը և, կարող է պատահել, որ երկու օրվա ընթացքում մենք հարկադրված կլինենք թողնել Սարիղամիշը։ Դրությունը շատ ծանր է։ Անհրաժեշտ է անմիջապես դիմել Լյուկկին (Անդրկովկասում ամերիկյան զինվորական ներկայացուցիչ—նշ. Մ. Մ.) և Կորբեյլին (Անդրկովկասում ֆրանսիական զինվորական ներկայացուցիչ—նշ. Մ. Կ.), պնդել այն բանի վրա, որ նրանք շտապ հեռագրեն իրենց կառավարություններին թուրքական զորքերի շարժման մասին և խնդրեն ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները։

---

69 Հ. Տեր-Հակոբյան, նշվ. աշխ., էջ 39։

70 Նույն տեղում, էջ 41։

Խոսեցե՛ք նաև Լեզրանի հետ և նրանից պահանջեք, որպես Թուրքիայի դաշնակցի, անմիջական ճնշում գործադրել Թուրքերի վրա՝ դադարեցնելու ռազմական գործողությունները: Խնդրեցեք հունական ներկայացուցչին՝ ամենի մասին շտապ հեռագրել հունական կառավարությանը և իմանալ՝ կարո՞ղ են արդյոք հունական զորքերը իրենց կողմից անցնել հարձակման և դրանով իսկ թուլացնել Թուրքական շարժումը: Անմիջապես դիմեցե՛ք նաև վրացական կառավարության՝ մեզ շտապ կարգով նավթ բաց թողնելու խնդրանքով, որն անհրաժեշտ է մեր զորքերը ու զինամթերքը ռազմաճակատ ուղարկելու համար: Բացատրե՛ք, որ եթե նավթը ուշանա, վտանգավոր դրություն կստեղծվի Կարսի մարզի, ինչպես նաև Բաթումի համար, Վրանգելի ներկայացուցչից իմացե՛ք՝ կարո՞ղ է արդյոք Վրանգելը մեզ օգնել զինամթերքով կամ Տրապիզոնի մոտ զորք ափ հանելով»[71]:

Սեպտեմբերի 30-ին վարչապետ Համո Օհանջանյանը դարձյալ հեռագրում է Թիֆլիս՝ Տիգրան Բեկզադյանին. «Թշնամու ճնշման տակ մենք թողեցինք Սարիղամիշը ու Կաղզվանը, Կարսը վտանգի մեջ է: Երեխաներին, կանանց և հիվանդներին Կարսից էվակուացնում ենք. դրությունը լուրջ է: Թշնամին զերազանց ուժեր ունի... Ունենք 700 վերստ ռազմաճակատ, որը պաշտպանում ենք սեփական ուժերով: Հայտնեցե՛ք ամենի մասին դաշնակիցներին, պահանջե՛ք շտապ և իրական օգնություն, խնդրեցե՛ք վրացիներից նավթ, թեկուզ տրանսպորտի կարգավորման համար: Նրանց ևս վտանգ է սպառնում Արդահանի և Բաթումի կողմից»[72]:

Նույն օրը, սեպտեմբերի 30-ին, Համո Օհանջանյանը հեռագրով դիմում է նաև Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմ Գ. Վ. Չիչերինին, հայտնելով Թուրքական զորքերի կողմից Հայաստանի վրա սկսված արշավանքի մասին, «Հայաստանի կառավարությունը սպասում է,—ասված է այդ հեռագրում,—որ ՌԽՖՍՀ կառավարությունը բոլոր ջանքերը կգործադրի ՌԽՖՍՀ դաշնակից Թուրքական ազգային ուժերի հետագա հարձակումը Հայաստանի վրա անհապաղ դադարեցնելու և ներկա Հայաստանի սահմաններից դուրս հանելու համար...»[73]:

---

71 Տե՛ս Է. Ա. Ջոհրաբյան, 1920 թ. Թուրք-հայկական պատերազմը և տերությունները, «Երեկոյան Երևան», 25 հոկտեմբերի, 1990 թ. № 244:

72 Տե՛ս նույն տեղում:

73 Տե՛ս նույն տեղում:

Թուրքական արշավանքների նպատակների և Հայաստանի կառավարության դիրքորոշման մասին Թիֆլիսում հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանը տեղեկացրեց Ռուսաստանի ներկայացուցիչ Բ. Լեգրանին սեպտեմբերի 29-ին, Ֆրանսիայի զինվորական ներկայացուցիչ գնդապետ Կորբեյլին, Ֆրանսիայի կոմիսարի փոխանորդ Ներտեմանին, անգլիական ներկայացուցիչ Ստոքսին՝ սեպտեմբերի 30-ին, հունական ներկայացուցիչ Սկեֆերիսին՝ հոկտեմբերի 1-ին։

«Ես նրանց նկարագրեցի Հայաստանում այժմ ստեղծված գրությունը, որը արդասիք է տաճկական առաջխաղացման։ Հայտնեցի, որ այդ առաջխաղացումը կատարվում է տաճկական կանոնավոր զորքով, թվով մինչև 12 հազար՝ Կարաբեքիր փաշայի զեկավարությամբ, որը 1918 թ. հրամանատար էր, Կարսի ուղղությունն ուսումնասիրած զորավար։ Բացատրեցի, որ Օլթիի և Սարիղամիշի գրավումը ճգնաժամային է դարձնում Հայաստանի վիճակը, որովհետև դրանով մեր հանրապետությունը զրկվում է իր միակ աղբյուրից, ուր նա կարող է ձեռք բերել վառելիք՝ երկաթուղային երթևեկության համար և շնորհիվ այս հանգամանքի զորքերի տեղափոխումը կարող է ուշանալ։

Անցնելով տաճկական առաջխաղացման նպատակներին, ես հայտնեցի կարծիք, որ դա Սևրի դաշնագրի դեմ ուղում է կրկին առաջադրել Բրեստի դաշնագիրը և միաժամանակ ցանկանում է վերացնել հայկական ճակատն ու կապ հաստատել բոլշևիկների հետ և այդպիսով ունենալ միանգամայն ապահով թիկունք՝ հույների առաջխաղացման դեմ։ Բացատրեցի, որ տաճիկների այդ դիտավորությունը ոչ մի խոչընդոտի չպիտի հանդիպի խորհրդային Ռուսաստանի կողմից, որովհետև վերջինս Սևրի դաշնագրից հետո հանգել է այն համոզմունքին, որ Հայաստանը անդարձ կերպով անցնում է Անտանտի քաղաքականությանը»,— 1920 թ. հոկտեմբերի 1-ին զեկուցում էր Բեկզադյանը Հայաստանի արտաքին գործերի նախարարին։ Տեղեկացվում էր նաև, որ Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը խնդրել է դաշնակից երկրների և Ռուսաստանի դիվանագետներին անմիջապես իրազեկ դարձնել իրենց կառավարություններին ստեղծված իրավիճակի մասին և միջոցներ ձեռք առնել «հասցնելու շուտափույթ օգնություն, որը կարող է կայանալ նախ՝ հնարավոր դեսանտի և ծովային զիմոնստրացիայի և ապա՝ շտապ կերպով վառելիքի հասցնելու միջոցով»[71]։

---

71 ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 2, գ. 81, թ. 6—7։

Հոկտեմբերի 6-ին Թիֆլիսում հայերը կազմակերպեցին բողոքի ցույց օտարերկրյա դիվանագիտական առաքելության շենքերի, այդ թվում և Խորհրդային Ռուսաստանի դեսպանատան առաջ՝ Թուրքական արշավանքին վերջ տալու պահանջով: Շատ տղամարդիկ զինվորագրվեցին բանակին[75]:

1920 թ. հոկտեմբերի 8-ին Հայաստանի կառավարությունը հայ ժողովրդի անունից դիմեց ամբողջ քաղաքակիրթ մարդկությանը. «Հայաստանի կառավարությունն այս ճգնաժամային րոպեին ամբողջ հայ ժողովրդի անունից դիմում է բովանդակ աշխարհի քաղաքակիրթ ժողովուրդներին և նրանց կառավարություններին՝ վճռական բողոք հայտնելով Թուրք ազգայնականների սև մտադրությունների դեմ և ջերմ կոչ է ուղղում օգնել Հայաստանին՝ իր հայրենիքի պատվի, ազատության ու անկախության համար հայ ժողովրդի մղած սրբազան կռվում: Յուրաքանչյուր ժողովրդի անկապտելի իրավունքների համար մղվող այս վճռական կռվի մեջ, հայ ժողովուրդը հավատացած է, որ չի մնա առանց քաղաքակիրթ աշխարհի աջակցության»[76]:

Սակայն եվրոպական տերությունները այս անգամ ևս անհաղորդ եղան հայ ժողովրդի ցավերին: Ո՛չ Անգլիան, ո՛չ Ֆրանսիան և ո՛չ Ամերիկան ոչ մի օգնություն չցուցաբերեցին Հայաստանին, և նա ահավոր վտանգի դիմաց մնաց մեն-մենակ:

Չնայած օգնության բացակայությանը, Սարիղամիշի և Մերդենեկի անկումից հետո Թուրքական զորքերի առաջխաղացումը, ընդհուպ մինչև հոկտեմբերի վերջին օրերը, հայկական բանակի կողմից կասեցվեց, և մարտերը ընթանում էին համարյա նույն գծում՝ առանց ռազմաճակատում էական փոփոխությունների: Այդ ժամանակաընթացքում տեղի ունեցան մի շարք թեժ ու արյունահեղ մարտեր, որոնց ընթացքում Թուրքական զորքերը հանդիպեցին հայկական բանակի լուրջ դիմադրությանը: Հոկտեմբերի 14-ին հայկական զորքերը Կարսի ճակատում դիմեցին հակահարձակման, որը, ճիշտ է, թեև ավարտվեց անհաջողությամբ, սակայն ցույց է տալիս, թե ինչպիսի համառ բնույթ են կրել կիվները պատերազմի այդ շրջանում: Հոկտեմբերի 14-ի հակահարձակման ըն-

---

75 ՀՀ ԴԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Ռ. Հովհաննիսյանի կոլեկցիա, HC (1A—96), P. 80:

76 Տե՛ս Է. Ա. Զոհրաբյան, 1920 թ. Թուրք-հայկական պատերազմը և տերությունները, «Երեկոյան Երևան», № 244, 25-ը հոկտեմբերի 1990 թ.:

թացքի և նրա ձախողման պատճառների մասին տեղեկություններ է հաղորդում այդ մարտերի անմիջական մասնակից, հայկական բանակի 4-րդ բրիգադի 8-րդ գնդի սպա Գալուստ Սյուրմենյանը։ Իր հուշերում այդ կռիվների մասին նա գրում է. «Տեղի ունեցած նահանջները, Օլթիին, Սարիղամիշեն գաղթող ժողովուրդին վիճակը, ժողովուրդի և զինվորության մեջ զգալի բարոյալքում հառաջացած ըլլալով, կացությունը փրկելու և կռվի նախաձեռնությունը իր ձեռքը ունենալու համար՝ հրամանատարությունը որոշած էր հարձակման անցնիլ։

Հարձակման թվականը որոշված էր հոկտեմբերի 14-ը։ Մինչև հարձակման թվականը Կարսի ճակատին վրա համախմբված էին հետևյալ ուժերը, դասավորված հետևյալ ձևով.

Աջ թևին Մերտենեկ—Արդահան ճակատին վրա կգտնվեին՝ 8-րդ գնդի Ա. գումարտակը—800 սվին, գնդ. Ղորղանյանի հեծելազոր և հետևակ գունդերը—1200 սվին, Սմբատի հրամանատարության ներքո գտնվող կամավորական խմբեր—800 սվին։

Կենտրոն կգտնվեին՝ 4-րդ գունդը—2000 սվին, 7-րդ գունդը—800 սվին։

Ձախ թևին վրա կգտնվեին՝ 5-րդ գունդը—700 սվին, Ա. գունդը—1500 սվին, Փիլոսին և ուրիշ մը կամավորական խմբեր—200 սվին։

Ընդամենը—8000 սվին։

Հարձակումը ծրագրված էր հետևյալ ձևով.

Ա.—Սկիզբը, աջ թևն ու կեդրոնը զորական շարժումներով պիտի գրավեին թշնամիի ուշադրությունը։

Բ.—Ձախ թևը, հենվելով Հարամ-Վարդանին անառիկ ամրություններուն, պիտի հարձակվեր ու պատռեր թշնամիի շղթան։

Գ.—Հետո, ձախ թևին հաջողության պարագային, աջ թևն ու կեդրոնը առաջ շարժվելով, թշնամին պիտի նետեին Սարիղամիշի ձորը։

Որոշյալ օրը, հոկտեմբերի 14-ին հարձակումը կսկսի, սակայն մինչ պետք է սկսվեր լուսաբացին, կուշանա 2—3 ժամով։ Բայց և այնպես գործողությունը կընթանա հաջող։

Ձախ թևի 5-րդ գունդը հարձակման անցնելով, սկիզբը կհաջողի բավական ետ մղել թշնամին։ Մինչև կեսօր կռվի նախաձեռնությունը կըլլա հայերուն ձեռքը։ Կեսօրին վերջ, երկու վաշտեր ինքնագլուխ կնահանջեն։ Հառաջխաղացումը կկենա։ Թշնամին, որ մինչ այդ ուժեղ դիմադրություն թույլ կուտար, այս անգամ ինքը հակահարձակման անցնելով՝ կհառաջանա դեպի Հարամ-Վարդան։ Մեր ձախ թևը ահագին

կորուստներ տալով, դժվարով կհաջողի վերահաստատվիլ Հաճի-Խալիլի իր հին դիրքերուն մեջ։

Կեդրոնը ենթադրելով, թե ձախ թևը հաջողած է՝ կառաջանա, կհասնի մինչև Բերնայի բարձունքները և ուշ ատեն Բեկլի-Ահմետի իր նախկին դիրքերը վերադառնալու հրաման կը ստանա։

Աջ թևը կատարած էր իրեն տրված պարտականությունը։

Այդ օրվա մեր կռիվներուն՝ մեր զորամասերը ունեցած էին 60 սպանյալ և մոտ 500 վիրավոր։

Այսպիսով, ուրեմն, հոկտեմբերի 14-ի հարձակողականը անցած էր անհաջող, որմե ետք կողմերը սկսած էին նոր պատրաստություններու։ Գալիքը հղի էր անակնկալներով»[77]։

Նույն ժամանակամիջոցում համառ և արյունահեղ մարտեր տեղի ունեցան նաև Սուրմալուի ճակատում։ Հոկտեմբերի վերջին տասնօրյակին այդ ճակատում ծավալված համառ մարտերի մասին Սիմոն Վրացյանը գրում է. «Հոկտեմբերի 20-ից սկսած թուրքերը գործուն շարժումներ կատարեցին Սուրմալուի ճակատում։ Նրանք հարձակվեցին Կարաբուլախ և Սոզյութլու գյուղերի վրա։ Հոկտեմբերի 20-ի ամբողջ օրը տեղի ունեցան տաք կռիվներ. թնդանոթները երկու կողմից որոտում էին անընդհատ։ Թշնամու գերազանց ուժերի ճնշման տակ մերոնք նահանջեցին մինչև Արաքս, հաջորդ օրը դիմեցին հակահարձակման և հետ շպրտեցին թշնամուն՝ ծանր կորուստներ պատճառելով նրան։

Մեր զոհերն են սպանված և վիրավոր՝ 2 սպա և 60 զինվոր։ Հոկտեմբերի 24-ից կռիվներ սկսեցին Քյուլլուկ, Կարակալա, Վերին Զարուխչի, Դաշբուռունի շրջաններում։ Վաղ լուսաբացի մոտ մեկ դիվիզիա կանոնավոր ուժեր ու բազմաթիվ քրդական խմբեր հարձակման անցան Քյուլլուկ—Վերին Զարուխչի, Սուլթանաբադ—Իզդիր, Դաշբուռուն—Կարակոյուլու—Մարգարա ուղղությամբ։ Արյունահեղ կռիվներ տեղի ունեցան։ Թշնամին բազմաթիվ անգամներ դիմեց զոհի և միշտ հետ շպրտվեց։ Թուրքերը, առանց կանգ առնելու զոհերի առաջ, ձգտում էին, ինչ գնով էլ լինի, գրավել Սուրմալուն։ Հայերն էլ վճռել էին ավելի շուտ մեռնել, բայց տեղի չտալ և երեք օր շարունակ, առանց ընդմիջումի, ամբողջ ճակատի վրա մղում էին արյունահեղ կռիվներ։ Տեղտեղ, ինչպես Դալիկդաշի դիրքերում, որ պաշտպանում էր Կուռո Թար-

---

77 Գ. Սյուրմենյան, նշվ. աշխ., 68—70։

խանյանը, զինվորների ու սպաների 50 տոկոսը սպանվեց կամ վիրավորվեց, բայց չնահանջեց։ Սուլթանաբադի դիրքերում թշնամին կրում էր մի քանի հարյուր քայլ հեռավորությունից։ Սպայությունը՝ գնդապետներ Խուդաբաշյան, Մամաջանյան, Գալուստյան, Հովսեփյան, Թարվերդյան, Թարխանյան, Մակ Մալիցկի, Թոփչյան, Աբգարյան, Պետրոսյան, Ղամբարյան և ուրիշներ, ցույց տվին հերոսության փայլուն օրինակներ։ Առաջ բերենք մի օրինակ միայն։ Կռվի երկրորդ օրը, Դրոյի հրամանով, Քանաքեռից բեռնատար ինքնաշարժերով օգնության է շտապում Կուռո Թարխանյանը։ Մարգարայում պարզվում է, որ խճուղին բռնված է թշնամու կողմից. առաջ գալու հնարավորություն չկա։ Առանց երկար մտածելու, Կուռոն զասավորում է զինվորներին ինքնաշարժերի վրա, ինքը նստում է առաջին ինքնաշարժի վարիչի (վարորդ) մոտ և շորս ինքնաշարժերը, իրարից 50 քայլ հեռու, արագությամբ քշել է տալիս խճուղով, միաժամանակ, գնդացիրներից սասսիկ երակ բանալով ճանապարհի երկու կողմով։ Թշնամին հանկարծակիի է գալիս և սարսափահար պահվում առուներում։ Տալով ութ զինվոր վիրավոր և գնդացրային մասի պետ հերոս Մալիցկիին սպանված՝ Կուռոն ճեղքում է թշնամու շղթան և հասնում օրհասական դիմադրություն ցույց տվող Դալիկդաշին օգնության։

Հոկտեմբերի 26-ին մեր զորամասերը անցան հակահարձակման։ Թշնամին բոլոր կետերում, կատաղի դիմադրությունից հետո բազմաթիվ դիակներ թողնելով, դիմեց խուճապային փախուստի։ Ու հետզհետե հեռացավ Բարբուդյան լեռների մյուս կողմը։ Երևանը, որ մի քանի օր ապրում էր Սուրմալուի հասնող թնդանոթների որոտի տակ և սարսափահար սպասում էր ճակատամարտի ելքին, հանդիստ շունչ քաշեց։ Թշնամին այլևս Սուրմալուի ճակատում կենդանի գործունեություն ցույց չտվեց»[78]։

Կատարելով ուժերի վերադասավորություն, համալրելով և ուժեղացնելով իր բանակը, թուրքական զորքերը հոկտեմբերի 28-ին դիմեցին նոր և ընդհանուր հարձակման Կարսի ուղղությամբ և 3 օր տևած կռիվներից հետո, նույն ամսի 30-ին, կտրելով հայկական զորքերի դիմադրությունը, գրավեցին այն։

Թուրքական զորքերի կողմից Կարսի գրավման ժամանակ գերի ընկան հայկական բանակի մի շարք բարձրաստիճան սպաներ, որոնց

---

78 Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 478—479։

թվում էին գեներալներ Դանիել բեկ Փիրումյանը, Արարատյանը, զենդապետներ Շաղբուդաղյանը, Վեքիլյանը, Բաբաջանովը, Տեր-Առաքելյանը, փոխգնդապետ Արշավիր Շահնազարովը, 2000-ից ավելի զինվոր[79]:

Կարսի գրավումից հինգ օր հետո թուրքերը գերի ընկած բոլոր հայ գերիներին ուղարկեցին Էրզրում, այնուհետև ձերբակալեցին քաղաքում մնացած բոլոր երիտասարդներին, մոտ 2000 հոգի, և 18 վագոններով ուղարկեցին Թուրքիա: Դրանից հետո սկսվեցին թալանն ու բռնությունները[80]:

Կարսի անկումից անմիջապես հետո Տ. Բեկզադյանը Թիֆլիսում նոր հանդիպումներ ունեցավ դաշնակից երկրների և Հուսաստանի ներկայացուցիչների հետ: Նոյեմբերի 5-ին Բեկզադյանը հայտնում էր Հայաստանի արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանին. «Ձեր շիֆրով հեռագիրը Կարսի անկման մասին ստացա ամսի 3-ի երեկոյան, իսկույն տեսակցություն խնդրեցի Ստոքսից և հայտնեցի այդ լուրը, հարցրեցի իրենցից սպասելիք օգնության մասին: Նրա պատասխանը շատ պարզ էր այս անգամ: Նա իսկույն հանեց սեղանի արկղից մի ամբողջ գործ, ցույց տվեց հեռագրերի մի կույտ և ասաց, որ ինքը շարունակ հեռագրում է օգնության մասին և մինչև հիմա ոչ մի պատասխան չի ստացել, իր կարծիքով դա նշանակում է, որ Եվրոպան կա՛մ անկարող է, կա՛մ չի ուզում օգնել մեզ, երկու դեպքում էլ, սակայն, հետևանքը մեզ համար նույնն է, ասաց նա, և որովհետև այդ այդպես է, ուրեմն «Դուք ազատ եք անել այն ամենը, ինչ որ հարկավոր կգտնեք Ձեր ժողովրդին փրկելու համար»: Ես շնորհակալություն հայտնեցի իր այդ ուշացած, բայց անկեղծ պատասխանի համար և ավելացրի, որ այդ մասին անհապաղ պիտի տեղեկացնեմ իմ կառավարությանը, որպեսզի համաձայնության նոր ուղիներ որոնի: «Դա Ձեր լիակատար իրավունքն է,—շեշտեց նա,—քանի որ Եվրոպայից ոչ մի օգնություն և պատասխան չենք ստանում, այդպես է գոնե իմ կարծիքը»:

---

79 Տե՛ս Կ. Սասունի, Հայ-թուրքական պատերազմը, «Հայրենիք» ամսագիր, Բոսթոն, 1926, № 7—10, էջ 75—76 (1921 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին Ա. Ֆ. Մյասնիկյանի ջանքերով հայ գերիները ազատվեցին թուրքական գերությունից և նրանց մի մասը ծառայության անցավ հայկական կարմիր բանակում):

80 Տե՛ս Է. Զոհրաբյան, նույն տեղում:

Նույն կարծիքը հայտնեց ինձ և Կորբեյլը իր այցելության ժամանակ։ Ինչ վերաբերում է Նետտեմանին, սա էլ միայն գլուխն է թափահարում և ցավակցական նշաններ անում և միայն այդքան, ավելացնելով, որ ինքն էլ միշտ հեռագրում է և ոչ մի պատասխան չի ստանում։ Իտալիայի ներկայացուցիչին հարկ չհամարեցի տեսնել այս երկուսից հետո, մանավանդ, որ նրանց դիրքը ես գիտեի»։

«Այսպիսով,—շարունակում է Բեկզադյանը,—Եվրոպայի գոնե այստեղի ներկայացուցիչները, որոնց մեջ Ստոքսին պիտի համարել ամենաազդեցիկը, պարզ և կտրուկ կերպով մեզ հայտարարեցին, որ Եվրոպան կա՛մ չի ուզում, կա՛մ չի կարող մեզ օգնել և մենք պետք է մեր գլխի ճարը տեսնենք։ Ստոքսը ասել է, որ իրենք դիվանագիտական հարաբերություններ չունեն Քեմալի հետ և չեն կարող նրա վրա ազդել»[31]։

Ռուսաստանի ներկայացուցիչներ Լեգրանին և Շեյնմանին (այդ օրերին գտնվում էին Բաքվում) փոխարինած Ստարկի հետ հանդիպման մասին Բեկզադյանը գրել է. «Ես խնդրեցի Ստարկին, օգտվել հանդամանքից, որ Լեգրանը դեռ Բաքվում է, խոսել նրա հետ ուղիղ գծով և հարցնել. «Ստացե՞լ է արդյոք Լեգրանը հեռագիրը, Երևանից ամսի 1-ին Պոլիս հասցնելու համար»։ Ապա ավելացրեցի, որ, գուցե, օգտվելով այդ հանգամանքից նա բարի լինի նաև տեղեկացնել թուրքերի առաջխաղացման մասին, գուցե Լեգրանը հարկավոր համարի այդ մասին իմաց տալ Մոսկվա։ Նա պատասխանեց, որ ինքը արդեն երկու անգամ Չիչերինի անունից նոտաներ է ներկայացրել տաճիկներին՝ դադարեցնել այդ արշավանքները և գիտե, որ այդ նոտաները հասել են, եթե ոչ Մուստաֆա Քեմալին, գոնե Կարաբեքիրին, «սակայն ինչո՞ւ են սատանաները շարունակում առաջ շարժվել»։ Այս բոլորից հետո Բեկզադյանը եզրակացնում էր. համաձայնության գալ թուրքերի հետ, զգույշ լինել դեպի բոլշևիկները, սակայն օգտագործել նրանց կապերն ու վախը, որ թուրքերը կարող են շատ առաջ գալով փչացնել նրանց գործերը Ադրբեջանում և Անդրկովկասում, Հյուսիսային Կովկասում առհասարակ[32]։

Մի փաստ ևս, որը խոսում է բրիտանական ներկայացուցիչների՝ գործերին լավատեղյակ լինելու մասին. Սմիթը նոյեմբերի 5-ին ինձ հայտնեց իր հեռագրի բովանդակությունը դիվանագիտական գործողությունը-

---

31 ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 92, թ. 41—44։

32 Նույն տեղում։

ների մասին Ղզլչախչախի շրջանում և ի միջի այլոց հայտնեց, որ իբր Խատիսյանը ասել է կապիտան Կորտին, թե տեղական խորհրդային առաքելության մի գնդապետ առաջարկել է իր ծառայությունները քեմալականների դեմ կռվելու համար։ «Ի միջի այլոց, չգիտեմ ինչից է, որ նրանք միշտ ավելի շատ են ստանում թարմ տեղեկություններ, քան մեզանից»[88],—գրում էր Բեկզադյանը։

Ճշմարտությունը այն է, որ, Կարսից նահանջելով, հայկական զորքերը կանգ առան Ղզլչախչախի մոտ և, կարգի բերելով շարքերը, դիրքավորվեցին։ Նոյեմբերի 1—3-ը լուրջ ընդհարումներ տեղի չունեցան, թեև թուրքական բանակի առաջապահ զորամասերը և հատկապես հեծելազորային ջոկատները, ձեռնարկելով հարձակումներ, փորձում են խանգարել հայկական զորամասերին ամրապնդվելու նոր դիրքերում։ Սակայն արդեն նոյեմբերի 4-ին վրա հասած թուրքական հիմնական ուժերը ընդհանուր գրոհ ձեռնարկեցին Ղզլչախչախի ուղղությամբ՝ նպատակ ունենալով դուրս մղել հայկական զորքերին իրենց դիրքերից, ճեղքել ռազմաճակատը և դուրս գալ Արփաչայի վրա՝ վտանգ ստեղծելով Ալեքսանդրապոլի համար։

Նոյեմբերի 6-ին, երեկոյան ժամը 8-ին, կապիտան Կորտը հեռագրով հայտնում էր զնդապետ Ստոքսին. «Հայերը նահանջել են Վարդանլի-Փիրվալի գիծը, Հայկական կառավարությունը ուղարկել է Կարսում թուրքական հրամանատարին (նոյեմբերի 5-ին, ժամը 2-ին) առաջարկություն՝ հաշտության բանակցություններ վարելու մասին։ Մինչև հիմա ոչ մի պատասխան չկա։ Ես չեմ կարծում, թե թուրքերը բանակցություններ կսկսեն մինչև Ալեքսանդրապոլի գրավումը, որի անկումը անկասկած է։ Ընդհանրապես թուրքահայերը ցանկանում են Պողոս Նուբարի կառավարությունը, ռուսահայերը՝ խորհրդային։ Կառավարության կարծիքն է, որ իրենց և Քեմալի միջև դաշնակիցների միջամտությամբ կնքված հաշտությունը կարող է լինել մշտական։ Նրանք խնդրում են, որպեսզի Դուք՝ Կոստանդնուպոլսի գլխավոր կոմիսարը, ունենաք մասնակցություն այդ գործում։ Նրանք կարծում են, որ դաշնակիցները կարող են օգնել Հայաստանին հետևյալում.

1. Ճնշում գործադրել Կոստանդնուպոլսում Թոֆիկ փաշայի կառավարության վրա, կամ՝

---

88 Նույն տեղում։

2. Օգտագործել ամերիկյան և ֆրանսիական ազդեցությունը Մուստաֆա Քեմալի վրա։

Ասացի, որ դաշնակիցները հակված չեն օգնել Հայաստանին զենքով՝ հենվելով Բեկզադյանի հետ Ձեր խոսակցության վրա։

Ես չեմ կարծում, որ մենք կարող ենք ցույց տալ դիվանագիտական օգնություն, քանի որ մենք չունենք ոչ մի հարաբերություն Մուստաֆա Քեմալի հետ։ Դրան նրանք չհավատացին»։

Կորտը տեղեկացնում էր, որ Ալեքսանդրապոլը գրեթե բոլշևիկյան է, բոլոր խավերը խորհրդայնացման կողմն են, նաև չեզոք գոտում։ Թուրքական զորքերին նրանք համարում են բոլշևիկյան և չեն ուզում նրանց դեմ զենք օգտագործել։ Շտաբը Ալեքսանդրապոլից տեղափոխվել է Ղարաքիլիսա, Երևանի և Ալեքսանդրապոլի միջև երկաթուղային կապը կտրվել է»[84]։

Ստեղծելով զորքերի թվական գերազանցություն, թուրքերը նորից դիմեցին հարձակման և արդեն նոյեմբերի 5-ին մոտեցան Ալեքսանդրապոլին։ Նոյեմբերի 6-ին թուրքական զորքերի հրամանատար Կարաբեքիր փաշան զինադադարի պայմաններ է հանձնում հայկական բանակի հրամանատարությանը. պահանջվում էր, որպեսզի 1. Այժմ Արփաչայի արևմուտքում գտնվող հայկական զորամասերը Ալեքսանդրապոլը մաքրելով քաշվեն Արփաչայից առնվազն 15 կմ դեպի Արևելք։

2. Ալեքսանդրապոլ քաղաքը, բերդը և կայարանը թուրքերի կողմից պետք է առնվի զինվորական հսկողության տակ։ Ալեքսանդրապոլի բնակչությանը պետք է հայտարարվի հանրային ապահովությունը թուրքական պաշտպանության տակ գտնվելու մասին։

3. Նկատի ունենալով, որ Ալեքսանդրապոլը մեծ նշանակություն ունի որպես Թիֆլիս—Երևան երկաթուղու միացման կետ, Ալեքսանդրապոլի շուրջը 10 կմ տարածությամբ շրջանը թուրք բանակի զորամասերի կողմից գրավելուն հայկական բանակը արգելք չպետք է լինի։

4. Զինադադարի տևողության միջոցին թուրքական բանակի զորքերի վրա ոչ մի կողմից և ոչ մի պատրվակի տակ հարձակում չպետք է լինի։

Թուրքական զորքերի հրամանատարը պահանջում էր. 1920 թ. նոյեմբերի 7-ին «Արփաչայի արևմուտքում գտնված հողամասը և Ալեք-

---

84 ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 105։

անդրապոլը հիշված օրը կեսօրից առաջ մինչև ժամը 10-ը ամբողջապես պարպել»[85]:

Նույն օրը հայկական զորքերը, կատարելով թուրքական վերջնագրի պայմանները, թողնում են Արփաչայի արևմտյան ափերը, ինչպես նաև Ալեքսանդրապոլը:

Թուրքական վերջնագրի մասին նոյեմբերի 11-ին Բեկզադյանը տեղեկացրեց Շեյնմանին, ներկայացնելով նաև թուրքական առաջխաղացման բնույթը. «Աշխատեցի պարզաբանել նրան, որ տաճկական շարժումը, միանգամայն զերծ լինելով խորհրդային Ռուսաստանի քաղաքական սկզբունքներից, այնքան, որչափ, որ նա խորանում է Հայաստանի սահմաններում, արտահայտում է իր պանիսլամական միտումները և այսօր նրա համար էլ պետք է պարզ լինի, որ այդ շարժման միտումները, եթե ոչ ավելին, զոնե Բաքվի գրավման են ձգտում: Անտանտան Լեհաստանի և Ռուսաստանի միջև կնքված հաշտությունից հետո կանգ չպետք է առնի միջոցների առաջ՝ օգտագործելու այս անգամ տաճիկների առաջխաղացումը Ռուսաստանի դեմ: Շեյնմանը, համաձայնելով ինձ հետ, հայտնեց, որ իմ արտահայտած տեսակետի իմաստով նրանք էլ ունեն կասկածներ և որ այդ կասկածները հայտնվում են նաև կենտրոնին: Հայտնեց, որ Չիչերինը վերջնագիր է ներկայացրել Քեմալին՝ կանգնեցնել առաջխաղացումը»[86]:

Որ թուրքական հարձակման պատճառով խորհրդային պատասխանատու գործիչների մոտ նկատվում էր մի տեսակ անվստահություն քեմալականների նկատմամբ, երևում է և Բաքվում Հայաստանի ներկայացուցիչ Մ. Հարությունյանի նոյեմբերի 9-ի զեկուցագրից. «Նրանք կարծես թե սկսում են հասկանալ, որ եթե այդ արշավանքը հաջողություն ունենա և քեմալականները միանան Ադրբեջանի հետ, այստեղ կսկսվի մի նոր ճակատ՝ ընդդեմ բոլշևիկների»: Չնայած խորհրդային Ռուսաստանի միջնորդությունը մերժվեց, Ռուսաստանը պահանջեց Քեմալից՝ «Երևանի Հանրապետության վրա հարձակումը դադարեցնել և հայերին վատ չվերաբերվել: Թուրքերը պետք է ճանաչեն խորհրդային Ռուսաստանի ստորագրած բոլոր պայմանագրերը»[87]:

---

85 ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 102:

86 ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 2, գ. 81, թ. 115—116:

87 ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Ռ. Հովհաննիսյանի կոլեկցիա, Report, p. 83.

Թողնելով Արփաչայն ու Ալեքսանդրապոլը, հայկական զորքերը բաշխեցին դեպի արևելք։ Այնուհետև նրանք բաժանվեցին երկու հիմնական մասի. մի մասը բռնեց Զաքուռի բարձունքները՝ փակելու համար դեպի Ղարաքիլիսա տանող ուղիները (հրամանատար՝ Սեպուհ), իսկ մյուս մասը նոր դիրքեր գրավեց Աղին կայարանի շրջակայքում՝ Արարատյան դաշտ տանող երկաթուղու ուղղությամբ (հրամանատար՝ Դրո)։ Այդ ժամանակ, նորից օգտվելով հայկական բանակի համար ստեղծված այս անգամ արդեն ճգնաժամային վիճակից, վրացական զորքերը նոյեմբերի 13-ին կրկին ներխուժեցին Հայաստան և գրավեցին «Լոռու չեզոք գոտին» և շրջակա անվիճելի հայկական տարածքները[88]։

Ալեքսանդրապոլը թողնելուց հետո խուճապի հետ մեկտեղ հայկական բանակում ծայր առան դասալքությունները։ Այսպես, օրինակ, արդեն նոյեմբերի 5-ին գեներալ Մ. Սիլիկյանը երկրորդ բրիգադի շտաբի պետ՝ գնդապետ Գրոսսից ստացած զեկուցագրի հիման վրա հայկական բանակի գլխավոր հրամանատար գեներալ Թ. Նազարբեկյանին ուղղված հեռագրում հայտնում է, որ «Զորամասերը ինքնակամորեն թողնում են ռազմաճակատը և զինվորները խմբերով դասալքում են զորամասերից և նույնիսկ չեն կատարում իրենց պետերի հրամանները։ Ռազմաճակատի քայքայումը և կազմալուծումը, ըստ երևույթին, արագ թափ է ընդունում»[89]։ Նոյեմբերի սկզբի տասնօրյակին զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը Ալեքսանդրապոլից վարչապետ Համո Օհանջանյանին հեռագրում է. «Մեր զորքերը կռվել չեն ուզում, խաղաղություն են ուզում։ Այսպիսի պայմաններում անհնար է պատերազմել։ Առաջարկում եմ, առաջին. բանակցություններ սկսել և հաշտություն կնքել, երկրորդ. անհապաղ զորացրել 30-ից բարձր տարիքավորներին, ցանկացողներից կազմավորել կամավորական զորամասեր, մնացածներին խոստանալ զորացրել աստիճանաբար մոտ ապագայում։ Կարծում եմ ամեն ինչ կկորցնենք, եթե շարունակենք պատերազմը»[90]։

---

88 Տե՛ս Է. Ա. Զոհրաբյան, *Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները, 1920—1922 թթ.*, Երևան, 1979, էջ 67։

89 Տե՛ս Է. Ա. Զոհրաբյան, *1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները*, «Երեկոյան Երևան», № 248, Երևան, 1990։

90 Նույն տեղում։

Հայաստանի Հանրապետության համար ստեղծված այս ծանր ժամանակներին պահին 1920 թ. նոյեմբերի 28-ին Ադրբեջանից Հայաստանի Նախիջևանի շրջան են մտնում նաև 11-րդ Կարմիր բանակի զորամասերը, որոնց թվում և նրանց կազմում ձևավորված հայկական զունդը: Մյուս օրը՝ նոյեմբերի 29-ին, ռազմահեղափոխական կոմիտեն Հայաստանը հայտարարում է խորհրդային[91]: Դրանից հետո Երևանում գտնվող Խորհրդային Ռուսաստանի լիազոր-ներկայացուցիչ Բորիս Լեգրանը դեկտեմբերի 1-ին Հայաստանի Հանրապետության վարչապետ Սիմոն Վրացյանին է ներկայացնում խորհրդային իշխանության վերջնագիրը, որ պահանջվում է իշխանությունը հանձնել ռազմահեղափոխական կոմիտեին: Հայկական բանակը արդեն կազմալուծված էր, իսկ Հայաստանի զգալի մասը նվաճված էր: Կառավարությանը ուրիշ ոչինչ չէր մնում անելու, բացի իշխանությունը բոլշևիկներին հանձնելուց:

1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանում Ռուսաստանի խորհրդային Սոցիալիստական Հանրապետության ներկայացուցիչ Բ. Լեգրանի և մյուս կողմից Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչներ Դրոյի ու Համբարձումի Տերտերյանի միջև կնքվում է համաձայնագիր, որը բաղկացած էր 8 կետից: Համաձայնագրի առաջին կետով Հայաստանը հայտարարվում էր սոցիալիստական խորհրդային հանրապետություն, երկրորդ կետով մինչև Հայաստանի խորհուրդների համագումարի հրավիրումը կազմվում էր ժամանակավոր ռազմահեղափոխական կոմիտե, որին անցնում էր բովանդակ իշխանությունը Հայաստանում: Երրորդ կետով Ռուսաստանի խորհրդային կառավարությունը ընդունում էր, որ ՀԽՍՀ հողերի մեջ անվիճելի կերպով մտնում են՝ Երևանի նահանգը իր բոլոր գավառներով, Կարսի նահանգի մի մասը, որը զինվորական տնակետից ապահովում էր երկաթուղու տիրապետությունը, Ջաջուռ կայարանից Արաքս կայարանը, Գանձակի նահանգի Զանգեզուրի գավառը և Ղազախի գավառի մի մասը՝ 1920 թ. օգոստոսի 10-ի համաձայնագրի սահմաններում և Թիֆլիսի նահանգի այն մասերը, որոնք Հայաստանի տիրապետության տակ էին գտնվում մինչև 1920 թ. սեպտեմբերի 28-ը: Երևանյան համաձայնագրի 4-րդ կետով հայկական բանակի հրամանատարական կազմը չէր ենթարկվում պատասխանատվության այն գործերի համար, որ կատարել էր մինչև Հայաստանում խորհրդային

---

[91] Великая Октябрьская социалистическая революция и победа Советской власти в Армении, Е., 1957, док. № 290, стр. 430—431.

իշխանության հայտարարումը։ 5-րդ կետի համաձայն դաշնակցության և ազգային կուսակցությունների սոցիալիստա-հեղափոխական, սոցիալ-դեմոկրատ, հնչակյան և այլն, անդամները ոչ մի հալածանքի չէին ենթարկվում այդ կուսակցություններին պատկանելու և կոմունիստական կուսակցության դեմ մղված կռիվներին մասնակցելու ու Խորհրդային Հայաստանի հայտարարումից առաջ կատարված գործերի համար։ 6-րդ կետով Ռազմահեղափոխական Կոմիտեի մեջ մտնելու էին կոմունիստական կուսակցության 5 անդամներ և 2 ձախ դաշնակցականներ։ 7-րդ կետով Ռուսաստանի Խորհրդային կառավարությունը պարտավորվում էր անմիջապես միջոցներ ձեռք առնել ՀԽՍՀ անկախության պաշտպանության նպատակով այստեղ անհրաժեշտ զինվորական ուժեր կենտրոնացնելու համար։ 8-րդ կետով սույն համաձայնագրի ստորագրումից հետո Հայաստանի Հանրապետության կառավարությունը հեռանում էր իշխանությունից։ Իշխանությունը ժամանակավորապես, մինչև Հեղափոխական կոմիտեի Երևան ժամանումը, անցնում էր զորահրամանատարությանը, որի գլուխ էր կանգնում Դրոն, իսկ ՌՍՖՍՀ-ի կողմից Հայաստանի զորահրամանատարության կից կոմիսար էր նշանակվում Բ. Ֆելինը[92]։

Երևանյան համաձայնագրի ստորագրման օրը (դեկտեմբերի 2-ին) Խորհրդային Հայաստանի զինված ուժերի հրամանատար Դրոյի կողմից հրապարակվում է Հայաստանի բանակին ուղղված թիվ 1 հրամանը, որի համաձայն, Հանրապետության բանակը վերակազմավորվում էր Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կարմիր բանակի։

Հրամանագրի 1-ին կետով հայկական բանակը այսուհետև կոչվելու էր Խորհրդային Հայաստանի Կարմիր բանակ։ 2-րդ կետով վերացվում էին անձնակազմի ստորաբաժանումը ոգաների, ենթասպաների և շտաբ-գլխավորների (զինվորական կոչումները վերացվում էին)։ Արգելվում էր կրել նախկին բոլոր տեսակի շքանշանները և տարբերանշանները, բացի Կարմիր դրոշի շքանշանից։ Այսուհետև բանակի յուրաքանչյուր ծառայող անվանվելու էր իր զբաղեցրած պաշտոնի անունով։ 3-րդ կետով պաշտոններում հրամանատարական կազմի նշանակման ժամանակ ոչ մի ընտրականություն չէր թույլատրվելու։ Զորամասերում կոմիտեներ չպետք է լինեին։ 4. Բոլոր կարմիրբանակայինները՝ մարտիկից մինչև

---

92 Տե՛ս Ա. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 315—317, նաև՝ Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 501—502։

հրամանատար, պարտավոր էին բանակում պահպանել խիստ հեղափոխական կարգապահություն, պահանջելով յուրաքանչյուրից դիտակցաբար և անձնազոհ կերպով կատարել իրենց պարտականությունները. 5-րդ կետով բոլոր զորամասերում նշանակվում էին քաղաքական կոմիսարներ, որոնց պարտականությունն էր զորամասի քաղաքական ղեկավարության իրականացումը։ Այսուհետև զորամասերի պետերի բոլոր հրամանները պետք է հաստատվեին քաղաքական կոմիսարի կնիքով, առանց որի այդ հրամանները չպետք է կատարվեին։ Մինչև զորամասերում նշանակված քաղաքական կոմիսարների ժամանելը, բոլոր հրամանները պետք է տրվեին միայն պետերի ստորագրությամբ։ 6-րդ կետով բոլոր զորամասերը մնում են իրենց տեղերում։ Առանց համապատասխան կարգադրության չէր թույլատրվում տեղաշարժվել դեմ թողնել զբաղեցրած տեղը։ 7-րդ կետով հրամանատարական կազմից և կոմիսարներից ոչ ոք իրավունք չուներ թողնել իր զորամասը։ 8-րդ կետով ժողովրդական գույքի փչացման, նրա կորստի կամ հափշտակության դեպքում մեղավորը պատժվում էր ռազմահեղափոխական օրենքների ողջ խստությամբ։ 9-րդ կետով նախատեսվում էր զենքը ինքնագլուխ կերպով թողնելը, նրա վաճառքը կամ դիտակցաբար փչացումը պատժել խստագույն կերպով[93]։

Այսպիսով, Հայաստանի խորհրդայնացումից հետո, փաստորեն, Հայաստանի Հանրապետության բանակը ոչ թե կազմացրվեց, այլ վերակազմավորվեց ՀԽՍՀ-ի կարմիր բանակի։ Կազմացրման ենթարկվեց միայն հայկական բանակի արևմտահայերից կազմավորված 4-րդ դիվիզիոնը, որի հրամանատարը Սեպուհն էր։

Երևանյան համաձայնագրի կնքման օրը՝ դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը, արդեն լիազորություններից զրկված Ալեքսանդր Խատիսյանի գլխավորած հայկական պատվիրակությունը[94] Ալեքսանդրապոլում Քյա-

---

93 Տե՛ս «Դիվիզիայի կազմավորումը», Բաներ Հայաստանի արխիվների, Երևան, 1976, № 3, էջ 15—16, տե՛ս նաև՝ Великая Октябрьская социалистическая революция и победа Советской власти в Армении, Сборник документов, Ереван, 1957, стр. 442—443.

94 Այն բաղկացած էր 16 հոգուց, որոնց թվում Ալեքսանդր Խատիսյան (նախագահ), Աբրահամ Գյուլխանդանյան (ֆինանսների նախարար), Ստեփան Ղորղանյան (Կարսի նահանգապետ), Վահան Մինախորյան (Հայաստանի խորհրդարանի գլխավորամավոր), Տիգրան Հովհաննիսյան (բարձրագույն դատական ատյանի անդամ), գնդապետ Սաֆայան, կապիտան Խնձորյան և ուրիշներ։ Տե՛ս Է. Զոնտաբյան, Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները 1920—1922 թթ., Երևան, 1979, էջ 92։

# ПРИКАЗЪ

## по Отдѣльному Армянскому Корпусу

20-го Іюля 1918 г.

№ 94.

По части строевой

§ 1.

а) Въ виду предстоящей реорганизаціи внутренняго мѣста Корпуса приказываю:

1) Уволить теперь же со службы:

а) Офицеровъ и классныхъ чиновъ не армянъ, сверхштатныхъ, неслужившихъ уже войсковыхъ частей и назначенныхъ для текущей работы въ войсковыхъ частяхъ, управленіяхъ и заведеніяхъ Корпуса.

б) Офицеровъ и классныхъ чиновъ нѣтъ спеціальностей, или въ большинству состоянія, или за ранами и увѣчіями не могутъ нести службу, какъ строевую, такъ и нестроевую.

2) Лицъ уволняемыхъ офицеровъ и классныхъ чиновъ, впредь до окончательнаго положенія о прохожденіи службы, удостоверить деньгами причитающимися по приказамъ Главнокомандующаго войсками Кавказскаго фронта отъ 22-го Марта с. г. № 222 и 7-го Іюля с. г. № 528 и порядкомъ указанномъ въ прилагаемой инструкціи.

3) На лицъ уволняемыхъ должны быть составлены послужные списки въ трехъ экземплярахъ, (а если нѣтъ послужныхъ списковъ, то краткія записки), изъ коихъ одинъ выдается въ Штабъ Корпуса по полкамъ, одинъ выдается на руки уволняемому офицеру и третій экземпляръ остается въ части войскъ.

Но лицъ трехъ экземплярахъ послужныхъ списковъ должны быть подписываемы лица ранѣе въ прочтеніи лицъ, на которыхъ эти списки составлены.

4) О лицъ уволняемыхъ офицерахъ и чиновникахъ армянъ кромѣ того подробнѣе сообщить Армянскому Уѣздному Военному Начальнику для принятія ими на учетъ.

5) Офицеры и классные чины имѣющіе свои части имѣющіяся имѣть аттестаты, выданныя имъ за все время отсутствія, а также заблаговременно доставить или увольненіи со службы.

6) Списки чиновъ офицеровъ и чиновниковъ, съ указаніемъ времени отсутствія, по частямъ, объявить въ приказѣ по части.

7) Лицъ вольнонаемныхъ работниковъ (писарей), ремесленниковъ и пр. распустить отсчитать въ полкахъ не болѣе одной четверти штатнаго числа писарей.

ПРИЛОЖЕНІЕ: Инструкція.

Командиръ Корпуса.

Генералъ-Лейтенантъ Макдобесов

## ИНСТРУКЦІЯ

по увольненію лишнихъ офицеровъ и классныхъ чиновъ, уволняемыхъ со службы въ Отдѣльномъ Армянскомъ Корпусѣ.

1. Въ виду отсутствія въ Эрзинскомъ и Пилпирскомъ Корпусномъ Госпиталяхъ спеціалистовъ, лицъ уволняемыхъ, на основаніи сей инструкціи, лицъ не имѣющихъ рекомендаціи, будутъ направляемы въ городъ Тифлисъ для отправленія (на) Главнокомандующаго Войсками.

2. Изъ лицъ уволняемыхъ офицеровъ и чиновниковъ, приказываемыхъ уволить, составить списокъ, указывая лицъ частяхъ и названіяхъ.

3. Разсчетъ на дѣйствительную службу по текущему довольствію производить на день полученія увольненному семьи послужного списка и получения ими ордера.

4. Проѣзду на родину не назначать лицъ, уволенныхъ въ установленныхъ закономъ случаяхъ отставки, болѣзни сорокалѣтнихъ, инвалидности, слабой грудности, по выдержкѣ по выслугѣ сверхсрочнаго времени и дорогостоящему).

Հավելված 2



Հավելված 3

ЗАКОНЪ 1 июня 1914 г. № 727

о предоставлении евреям, имеющим ученые звания, жительства вне черты еврейской оседлости.

[illegible]

[illegible]

[illegible]

1/III 48. Копія. 24

Исх. 2249

Е
7/19

**ПРОЕКТЪ ЗАКОНА**

**ПО БОРЬБѢ СЪ ДЕЗЕРТИРСТВОМЪ ВЪ НОВОЙ АРМІИ.**

1. Военнообязанные лица государственныхъ, общественныхъ и частныхъ учрежденій, а равно и отдѣльныя лица принимаютъ на себя по службѣ лишь, по предъявленіи военныхъ билетовъ о выполненіи военной повинности или освобожденіи отъ военныхъ лицъ.

2. Виновные въ невыполненіи указанного въ ст. 1 закона лица и частныя лица подлежатъ наказанію по первому разу отъ 1-го до 6 месяцевъ или денежному штрафу отъ 7-го до 12 тысячъ рублей.

3. Военнообязанный по прибытіи въ армію по первому его требованію отправляется въ своей части военного времени и полевого положенія по Положенію Устава о Полевой службѣ Уст. XXII изд. 1912 г. ч.1. /Положение въ силу его 2 до 4 месяцевъ или арестъ отъ 1 до 3 месяцевъ.

Сверхъ сего время службы /по/ увеличивается на 9 месяцевъ за каждый месяц самовольного отсутствія, считая начиная отъ полный.-

Примѣчаніе: Военнообязанные лица, отсутствующіе на службѣ, свою вину безвозвратно отъ отвѣтственности, подлежатъ первому военному суду и полевому суду. Военнообязанный, указанный въ сей статьѣ уголовный суд может быть подвергнуть высшей мѣрѣ наказанія.

4. Отдѣльные мальчики, которые и всѣ чины военной милиціи, которые подлежатъ отправленіе по мѣсту работы дезертировъ и предоставить въ военному Комиссару Комитета, а при не полученіи информаціи мѣсяцевъ в течение четырехъ, сему по военному времени, въ противномъ случаѣ, отдѣлы, комиссары и чины милиціи, въ работы дезертировъ, будутъ подвергнуты военному суду.




Հավելված 5



Հավելված 6

Հավելված 7

Հավելված 8

№ 13 ՍՈՒՐՈՒՆ ՏԱՐԻ ԿԱՄ ՕԳՈՍՏՈՍԻ 6, ԵՐԵՔՇԱԲԹԻ № 13

# ՊԱՅՔԱՐ

Ազգայնոց Հայրենասիրաց

ԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

գիմ Կարաբեքիր փաշայի գլխավորած Թուրքական պատվիրակության հետ կնքեց մի պայմանագիր, որի համաձայն Հայաստանի տարածքը հավասարվում էր Բաթումի պայմանագրով նախատեսված տարածքին։ Այդ խայտառակ պայմանագրով, որը բաղկացած էր 18 կետից, Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանը անցնում էր Արփաչայ և Արաքս գետերով, Թուրքիային էին անցնում Կարսի մարզը, Արդահանի օկրուգը և Սուրմալուի գավառը, իսկ Նախիջևանի, Շարուրի և Շահթախթի շրջանները հայտարարվում էին ժամանակավորապես Թուրքիայի հովանավորության ներքո գտնվող տարածքներ, որտեղ հետագայում հանրաքվեի միջոցով պետք է հաստատվեր հատուկ վարչություն։ Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանը փաստորեն զրկվում էր նաև բանակ պահելու իրավունքից, երկրում վերացվում էր ընդհանուր պարտադիր զինվորական ծառայությունը։ Հայաստանին թույլ էր տրվում ունենալ միայն 1500 հոգուց բաղկացած մի ջոկատ՝ 8 թնդանոթով և 20 գնդացրով։ Նա կարող էր կառուցել բերդեր (ամրոցներ) և նրանցում հրանոթներ տեղադրել, բայց պայմանով, որ չի գնի 15 սմ-անոց տրամաչափի և հետահար հրանոթներ, որոնք գործադրվում են ինչպես հայկական, այնպես էլ ուրիշ բանակներում[35]։ Ինչպես հայտնի է խորհրդային Հայաստանում կառավարությունը չճանաչեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը, որի վրա հաճախ հետագայում հենվում էին թուրք պետական և քաղաքական գործիչները։

---

35 Տե՛ս նույն տեղում։

## ԱՄՓՈՓՈՒՄ

1918 թ. մայիսին Հայկական պետականության վերականգնման հետ միաժամանակ կազմակերպվեցին նաև նրա զինված ուժերը, որոնք ներքին և արտաքին չափազանց ծանր պայմաններում կոչված էին իրականացնելու հայկական պետության պաշտպանությունը:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հիմքը կազմեցին ռուսական զորքերում ծառայած Կովկասյան և Արևմտյան ճակատների հայ սպաները և զինվորները, որոնք 1917 թ. վերջին համախմբվել էին Հայկական բանակային կորպուսի մեջ: 1918 թ. հունիս-օգոստոս ամիսներին, հայկական կորպուսի վերակազմավորման միջոցով, ստեղծվեց Հայկական առանձին դիվիզիա, իսկ առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի պարտվելուց հետո երեք առանձին բրիգադիներից բաղկացած մի զորաբանակ, որի թվաքանակը, ելնելով երկրի պաշտպանության ամրապնդման անհրաժեշտությունից, 1919—1920 թթ. ժամանակամիջոցում մշտապես աճում էր:

Հայաստանի Հանրապետության 40 հազարանոց բանակը սպառազինված էր, ավյալ ժամանակի չափանիշներով, ժամանակակից զինատեսակներով: Բանակի համալրումը սպառազինությամբ կատարվում էր հիմնականում դրսից ստացվող զենքի և զինամթերքի հաշվին: Նորակազմ հանրապետությունը տնտեսապես դեռ այնքան չէր ամրապնդվել, որ կարողանար անհրաժեշտ չափով բավարարել իր բանակի կարիքները:

Հանրապետության բանակը կազմակերպական տեսակետից հետևվում էր ռուսական համակարգին և կառավարվում էր ռուսական զինվորական կանոններով և օրենքներով: Ըստ էության, առաջին հանրապետության բանակը կանոնավոր բանակ էր, որը համալրվում էր Հայաստանի խորհրդարանի և կառավարության օրենքների ու որոշումների համաձայն: Բանակի սպայական (հրամանատարական) կազմը բաղկացած էր ռուսական զինվորական գիմնազիաներ և ուսումնարաններ

ավելացված, հարուստ մարտական փորձ ունեցող սպաներից, որոնց միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանը հաջողվեց ոչ միայն կազմակերպել հայկական զինված ուժերը, այլև, չնայած անբարենպաստ պայմաններին, պահպանել նրա անձնակազմի մարտական պատրաստականության մակարդակը գոնե բավարար աստիճանի վրա։

Միաժամանակ հարկ է նշել, որ չնայած Հայաստանի ներքին դժվարին կացությանը և երկրում շուտափույթ լուծումներ պահանջող բազմաթիվ խնդիրների առկայությանը (գաղթականություն, սով, համաճարակներ և այլն), զինված ուժերի շինարարության հարցերը մշտապես եղել են Հայաստանի Հանրապետության կառավարության ուշադրության կենտրոնում։ Համեմատաբար կարճ ժամանակամիջոցում ընդունվել են մի շարք օրենքներ և որոշումներ, որոնք հնարավորություն են տվել ստեղծելու քիչ թե շատ մարտունակ բանակ։ Դժբախտաբար երկրի բարդ կացությունը և արտաքին քաղաքական անկայուն վիճակը հնարավորություն չտվեցին ավարտելու սկսված գործը։ Թեև հաճախ կառավարության ընդունած լավ որոշումները չէին կատարվում և մնում էին թղթի վրա, այնուամենայնիվ պետք է ընդգծել, որ պատմական կոնկրետ պայմաններում Հայաստանի Հանրապետության կառավարությունը հնարավոր ամեն ինչ արեց իր զինված ուժերի ստեղծման ու կենսագործունեության համար։ Շնորհիվ կառավարության մշտական հոգատարության և բանակի հրամանատարական կազմի ջանքերի, Հանրապետության զինված ուժերը մինչև 1920 թ. հայ-թուրքական պատերազմը կարողացան պատվով կատարել իրենց վրա դրված պետության և ժողովրդի պաշտպանության գործը։ Ներքին և արտաքին թշնամիների դեմ կռիվներում նրանց բազմիցս հաջողվեց ոչ միայն կասեցնել թշնամու հարձակումները, այլև շատ մարտերում պարտության մատնել նրան։ Հայկական բանակի շնորհիվ կառավարությանը հաջողվեց նաև ոչ միայն զսպել ադրբեջանական մի շարք խռովություններ, որոնք նպատակ ունեին վիժեցնել հայկական պետության կայացումը, այլև Հայաստանի Հանրապետությանը միացնել Թուրքիայի կողմից նախկինում բռնազավթված հայկական տարածքները, ինչ թույլ տվեց Հայաստանի կառավարությանը Հայաստանի Հանրապետության ստեղծման տարեդարձի օրը՝ 1919 թ. մայիսի 28-ին, հռչակել Միացյալ և Անկախ Հայաստանի պատմական Ակտը։

Չնայած այս հաջողություններին, ներքին կռիվներից թուլացած հայկական բանակը, չտանալով ոչ մի օգնություն մեծ տերություններից, դժբախտաբար, պարտություն կրեց 1920 թ. հայ-թուրքական պատերազմում, ինչի մեջ փոքր չէր նաև Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի համագործակցության դերը: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո, Հանրապետության բանակը չկազմալուծվեց, այլ վերակազմավորվեց որպես Խորհրդային Հայաստանի կարմիր բանակի, սակայն կարճ ժամանակ անց անհիմն հալածանքների ենթարկվեցին հայկական բանակի հարյուրավոր սպաներ՝ աքսորվելով Ռուսաստանի տարբեր բանտային ճամբարներ: 1921 թ. ապրիլի 24-ին Հայաստանի հեղկոմը համընդհանուր ներման մասին դեկրետ ընդունեց, որի համաձայն, աքսորված սպաները աղատվեցին ճամբարներից: Նրանց մի զգալի մասը վերադարձավ Հայաստան և շարունակեց զինվորական ծառայությունը Հայկական կարմիր բանակի զորամասերում: Հայկական բանակի շատ սպաներ, կռվելով Խորհրդային բանակի կազմում որպես զորահրամանատարներ, հմտորեն գործեցին Հայրենական մեծ պատերազմի տարբեր թատերաբեմերում՝ ղեկավարելով դիվիզիաներ, կորպուսներ, բանակներ, ռազմաճակատ: Նշենք մի քանիսին՝ Հով. Բաղրամյան, Ի. Վեքիլյան, Բ. Առուշանյան, Գ. Չայլախյան, Հ. Հախնազարյան և ուրիշներ:

11/XII-2001

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն . . . . . 5

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Հայաստանի հանրապետության զինված ուժերի կազմակերպումը: Բանակի կառուցվածքը և թվակազմը

Հայկական ազգային զորամասերի կազմավորումը մինչև Հանրապետության հռչակումը . . . . . 13

Հայաստանի Հանրապետության բանակի կազմավորումը . . . . 26

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Հայկական բանակի սպառազինությունը և համալրումը: Բանակի սպայական կազմը . . . . . 49

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Բանակը Հանրապետության կայացման և պաշտպանության գործում . . 80

Ամփոփում . . . . . 136

[ 300 դր. ]

ՄՈՒՐԱԴ ԼԵՎՈՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԸ
## (1918—1920)

Հրատ. խմբագիր Լ. Ս. ՍԱՐԱՖՅԱՆ
Տեխ. խմբագիր Լ. Ա. ԱՂԻՋԲԵԿՅԱՆ

*Հանձնված է շարվածքի 11. 10. 1995 թ.: Ստորագրված է տպագրության 6. 02. 1996 թ.*
*Չափը 60×841/16: Թուղթ № 1: Տառատեսակ «Գրքի սովորական»: Բարձր տպագրություն:*
*Պայմ. 9,06 տպագր 8,75+0,75, մամուլ ներգիր: Ներկ. մամուլ 9,06:*
*Հրատ.-հաշվարկ. 10,2 մամուլ: Տպաքանակ 800: Հրատ. № 8024: Պատվեր № 49:*
*Գինը պայմանագրային:*

*ՀՀ ԳԱԱ հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ.:*
*ՀՀ ԳԱԱ հրատարակչության տպարան, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 2*

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
EL 0190272

ЦЕНА
А II
83661